

Հավելված

ՀՀ Կրթության և գիտության նախարարի  
2008թ. 22 սեպտեմբերի 2008 թ. N765-Ա/Ք հրամանի

*Աշխատանքային խումբ՝*

*Ծառուկյան Ռուզաննա., աշխատանքային խմբի ղեկավար, «Քայլ առ քայլ» ԲՀ  
Միտոյան Հասմիկ, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն  
Նիկողոսյան Նաիրա, Մ. Սեբաստացի կրթահամալիր  
Սմբատյան Լալա, Կրթության ազգային ինստիտուտ*

**ՆԱԽԱԴԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ  
2008-2015ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ  
ՓՈՐՁՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ՈՒՂԵՑՈՒՅՑ**

**Երևան 2008**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	2
ԴՊՐՈՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԽՄԲԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԴՊՐՈՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԽՄԲԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ	3
ԴՊՐՈՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԽՄԲԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒՇԻՍԸ, ԿՐԹԱԴԱՏՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ	5
ԿՐԹԱԴԱՏՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	6
ԿՐԹԱԴԱՏՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	7
5-6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	9
Ավագ խմբի շաբաթական պարապմունքների տեղաբաշխման օրինակելի տարբերակ	17
5-6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԾՐԱԳԻՐ	18
<i>ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐ</i>	18
1. ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ	18
2. ԻՄԱՑԱԿԱՆ ՈԼՈՐՏ	22
3. ՀՈՒՋԱԿԱՆ, ԱՆՉՆԱՅԻՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ	26
4. ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ	30
5. ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՈԼՈՐՏ	31
6. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ	33
ԶԱՐԳԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ	38
1. Ուսումնական հաստատության ֆիզիկական միջավայրին ներակայացվող չափանիշները	38
2. Ուսումնական հաստատության ֆիզիկական միջավայրի կազմակերպումը	40
3. Ուսումնական հաստատության սանիտարահիգիենիկ պայմանները	42
4. Խմբասենյակի ֆիզիկական միջավայրի կազմակերպումը	42
5. Աշխատանքային կենտրոններ	43
6. Ուսումնախաղային նյութեր	45
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ	51
ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒ	51
ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ	52
ԵՍ ԵՎ ԻՄ ԱՇԽԱՐՀԸ	55
ԿԵՐՊԱՐՎԵՍ (ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ, ԾԵՓ, ԱՊԼԻԿԱՑԻԱ ) ԵՎ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	56
ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ	61
ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ	65
ՏՈՆԵՐ, ԶՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ	65
ԵՐԵՒԱՅԱԿԵՆՏՐՈՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ	68
Մանկավարժական մոտեցումներ	69
5-6 տարեկան երեխաների զարգացման առանձնահատկությունները	70
Ուսուցման մեթոդներ	71
Խաղի դերն ու նշանակությունը	72
Աշխատանք զույգերով, ենթախմբերով	73
Հարցեր ու հարցադրումներ	74
ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ	76
Ի՞նչ է թեմատիկ ուսուցումը	77
Գրավոր պլանավորման կարևորությունը	78
ՂԱՍՏԻԱՐԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐ	79
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ	81
ԵՐԵՒԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ	90
1. Ընդհանուր դրույթներ	90
2. Գնահատման հիմնական նպատակը	92
3. Գնահատման գործընթացի կարևորությունը մանկավարժի մասնագիտական զարգացման տեսանկյունից	92
4. Թղթապանակի գնահատում	93
5. Դիտարկում	94
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ, ՑԱՆԿԵՐ	102
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵՎ ԱՈՒՋԱՐԿՎՈՂ ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	122

## ՆԱԽԱԲԱՆ

Նախադպրոցական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է: Արդի փուլում կրթության համապարփակ բարեփոխումների գործընթացները պայմանավորված են կրթության ոլորտի կառույցների համակարգված գործունեությամբ:

ՀՀ կառավարության 13 մարտի 2008 թ N10 արձանագրային որոշմամբ ամրագրվել է «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թթ ռազմավարական ծրագիրը, ինչպես նաև ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում ռազմավարական փորձնական ծրագրի իրականացումը :

Նախադպրոցական կրթության ոլորտի ռազմավարությունը հիմնականում ուղղված է համակարգի արդիականացմանը: Մասնավորապես, գործունեության հիմնական ուղղություններն են հանդիսանում օրենսդրական դաշտի կատարելագործումը, կադրերի մասնագիտական կատարելագործումը, կադրերի մասնագիտական կարողությունների զարգացումը, նյութատեխնիկական և ուսումնանյութական հիմքի բարելավումը, ծառայությունների մատչելիության և ընդգրկվածության մեծացումը:

12-ամյա կրթական համակարգին անցնելու կապակցությամբ առավել կարևորվում է 5-6 տարեկան երեխաների դպրոցի նախապատրաստվածության հարցը: Երեխաներին դպրոցական ուսուցման նախապատրաստելը, դպրոցական կյանքին հաջողությամբ հարմարվելը ուսումնական գործունեության սկզբնական ձևերի տիրապետելու կարևոր պայման է :5-6 տարեկանում արդեն ձևավորվում է երեխայի հետագա ճանաչողական , կամային և հուզական զարգացման կարողությունը:

Պետությունը ձեռնարկում է միջոցներ նախադպրոցական տարիքի երեխաների կրթության մատչելիության ապահովման համար՝ նպաստելով կրթության մեջ նրանց ընդգրկման աճին. ավագ նախադպրոցական տարիքային խմբի երեխաների ընդգրկվածությունը 2015թվականին հասցնելով 90%-ի:

Ռազմավարական ծրագրի ներդրման նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի գրասենյակի կողմից Համաշխարհային բանկի և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ֆինանսական և մեթոդական օժանդակությամբ մշակվել է Ռազմավարական ծրագրի ներդրման փորձնական ծրագիրը, որը կիրականացվի Հայաստանի Հանրապետության Շիրակի

մարզի Ախուրյանի տարածաշրջանում և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանում:

Ռազմավարական ծրագրի իրականացման գործընթացում Հայաստանի Հանրապետության կառավարության հիմնական նպատակը նախադպրոցական կրթության ծառայությունների որակի և մատչելիության ապահովումն է՝ հատուկ ուշադրություն դարձնելով նախադպրոցական կրթության մեջ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ընդգրկման ավելացմանը:

Փորձնական ծրագիրը նպատակաուղղված է՝

- նախադպրոցական կրթական ծառայություններում երեխաների ընդգրկվածության աճին,
- նախադպրոցական կրթական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացմանը,
- այլընտրանքային քիչ ծախսատար նախադպրոցական ծառայությունների ներդրմանը ,
- ծնողների և համայնքների մասնակցության բարձրացմանը,
- նախադպրոցական կրթության, ծառայությունների և դրանց իրականացման պայմանների համապատասխանեցմանը պետական չափորոշիչներին:

Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թթ ռազմավարական սույն փորձնական ծրագրի ուղեցույցը ներառում է դպրոցի նախապատրաստմանն ուղղված կարճաժամկետ խմբերի գործարկման կազմակերպական, իրավական, ֆինանսական հիմունքները, ինչպես նաև նախադպրոցական կրթական չափորոշիչները, կրթադաստիարակչական գործընթացի բովանդակային բաղադրիչները, զարգացնող միջավայրը, ծրագրային խնդիրները և ուսուցման մեթոդները:

Ուղեցույցը հասցեագրված է փորձնական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություններին, կրթության կառավարման պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքային ստորաբաժանումներին և նախադպրոցական կրթության հարցերով զբաղվող բոլոր իրավասու կազմակերպություններին:

Նախադպրոցական կրթության հետ կապված ծրագրերը ստեղծվում են «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքների, «Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թթ ռազմավարական և փորձնական ծրագրերին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 13 մարտի 2008թ N 10 արձանագրային որոշման, «ՀՀ հանրակրթության պետական կրթակարգի»,

Երեխաների իրավունքների մասին օրենքների, նախադպրոցական կրթության պետական չափորոշիչների հիման վրա:

Ծրագրերը կարող են լինել բազմաթիվ, բայց պետք է պահպանեն կրթակարգի պահանջներն ու չափորոշիչները, նախադպրոցական կրթական ծրագրերին ներկայացվող պահանջները: Հետաքրքիր ու արդյունավետ կլինեն այսօր հրապարակում ունենալ նախադպրոցական կրթության տարբեր ծրագրեր և ունենալ ծրագրերի ընտրության հնարավորություն: Դա հնարավորություն կտար բավարարել տարբեր պայմաններում գտնվող և տարբեր կարիքներ ունեցող երեխաների կրթադաստիարակչական պահանջները:

Ներկայումս ՀՀ նախադպրոցական կրթության ոլորտում նախադպրոցական ավագ տարիքի երեխաների համար գործում են հետևյալ ծրագրերը. «Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տարեկաններ) կրթական համալիր ծրագիրը», «Քայլ առ քայլ» նախադպրոցական կրթության և մեթոդաբանության ծրագիրը, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կողմից մշակված «Հանրակրթական դպրոցում նախապատրաստական ուսուցում» ծրագիրը:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և «Կրթական ծրագրերի կենտրոնի» աջակցությամբ ու նախաձեռնությամբ այս երեք ծրագրերի ներկայացուցիչներից կազմվեց աշխատանքային խումբ: Խումբը ուսումնասիրեց հանրապետությունում առկա նախադպրոցական ծրագրերը և այդ ծրագրերի հիմքի վրա ստեղծեց մի փորձնական ծրագիր, որը փորձարկում կանցնի Շիրակի մարզի Ախուրյանի և Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջաններում:

**ԴՊՐՈՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆՆ ՈՒՂՎԱԾ  
ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԽՄԲԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ**

<b>Գործունեության տեսակը Հիմքը</b>	<b>Կրթական գործընթացի մոդելը</b>	<b>Պարբերականությունը Աշխատաժամի տևողությունը</b>	<b>Երեխաների թիվը խմբում</b>	<b>Ֆինանսավորման աղբյուրներ և միջոցառումներ</b>
<p>Կարճաժամկետ խմբում դպրոցի նախապատրաստմանը և ընդհանուր դաստիարակությանն ուղղված ուսուցում 5-6 տարեկան երեխաների համար «Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թթ ռազմավարական ծրագիր»-ՀՀ կառավարության 2008թ մարտի 13 արձանագրային որոշում</p>	<p><b>1.</b> 5-6 տարեկան երեխաների ֆիզիկական, իմացական, հուզական, անձնային, սոցիալական, զարգացման ապահովում: <b>2.</b> Երեխաների հիգիենիկ, խաղային և ուսումնական միջավայրի կազմակերպում ըստ ԿԳՆ ԿԱԻ - 2008թ.՝ «Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տարեկանների) կրթական համալիր ծրագրի», մեթոդական ձեռնարկների, մշակված ծրագրա-մեթոդական ցուցումների, պարապմունքների բաշխման գրաֆիկի, աշխատանքային ռեժիմի և</p>	<p>Հնգօրյա աշխատանքային շաբաթ, 3.5 ժամ (ժամը 10:00-13:30 կամ 13:30-17:00) կամ 8-9 ժամ տևողությամբ (ժամը 9:00-17:00 կամ 9:00-18:00): Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 26.01.2007թ. «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուս. հաստատությունների օրինակելի հաստիքացուցակի»</p>	<p>20-25</p>	<p>1. Աղբյուրներ. • համայնքային, պետական բյուջետային միջոցներ • միջազգային կազմակերպություններ, նվիրատվություններ, հասարակական կազմակերպությունների ներդրումներ • ծնողական միջոցներ  2. Համապատասխան նախահաշվի կազմում</p>

	<p>կանոնակարգի:</p> <p>3. Կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը ստ օրինակելի մանկավարժական փաստաթղթերի նմուշօրինակների և հանձնարարվող գրականության ցանկի փաթեթի:</p>	<p>մասին հրամանի:</p>		
--	--	-----------------------	--	--

**ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԴՊՐՈՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՍԱՆՆ ՌԻԴԿԱԾ  
ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԽՄԲԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական փորձնական ծրագրի ներդրման նպատակով՝ դպրոցի նախապատրաստմանն ուղղված կարճաժամկետ խմբերի (5-6 տարեկան երեխաների) կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական նպատակներն են.

- Աջակցել մանկապարտեզ չհաճախող 5-6 տարեկան երեխաների համակողմանի և ներդաշնակ զարգացմանն ու դաստիարակությանը:
- Փորձարկել «Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագիրը», ներդնել նոր մոտեցումներ նախադպրոցական կրթության ոլորտում՝ մեծացնելով սոցիալապես անապահով ընտանիքների 5-6 տարեկան երեխաների ընդգրկվածությունը:
- Խթանել համայնքների նախաձեռնությունները՝ ուղղված մատչելի նախադպրոցական կրթության կազմակերպմանը:

Խնդիրներն են՝

- Նախադպրոցական կրթական ծառայությունների մատչելիության ապահովում, հատկապես ՀՀ գյուղական վայրերում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ընդգրկվածության ավելացում:
- Ավագ նախադպրոցական տարիքի՝ 5-6 տարեկան երեխաների խնամքի, զարգացման, դպրոցական ուսուցման նախապատրաստվածության հիմունքների ձևավորում:
- Երեխաների ուսուցման և դաստիարակության գործում ծնողներին աջակցության ցուցաբերում:
- 5-6 տարեկանների ընդգրկման համակազմի ավելացում՝ մինչև 2015թ. ընդգրկվածության թիվը հասցնելով 90 %-ի:
- դպրոցական ուսուցման նախապատրաստում:



**ԴՊՐՈՑԻ ՆԱԽԱԴԱՏՐԱՍՏՄԱՆՆ ՈՒՂԴԱԾ**  
**ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԽՄԲԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՌԵԺԻՄԸ,**  
**ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

Կարճաժամկետ խմբերը կարող են գործարկվել նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թթ. ռազմավարական ծրագրով առաջադրվող նախադպրոցական կրթության կազմակերպման երեք հիմնական մոդելների հիման վրա: Այդ մոդելները ըստ ռազմավարական փորձնական ծրագրի՝ նախատեսված են իրկանացվելու Լոռու և Ախուրյանի տարածաշրջաններում:

**1. Մոդել առաջին**

- Դպրոցներում մեկամյա նախապատրաստական/նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացում 5-6 տարեկանների համար՝ ապահովվելով ազատ և համակողմանի զարգացման միջավայր և կիրառելով ուսուցման փոխգործուն մեթոդներ:

**2. Մոդել երկրորդ**

- Դպրոցներում եռամսյա նախապատրաստական /նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացում 5-6 տարեկանների համար՝ ապահովվելով ազատ և համակողմանի զարգացման միջավայր և կիրառելով ուսուցման փոխգործուն մեթոդներ:

**3. Մոդել երրորդ**

- Մանկապարտեզներում մեկամյա նախապատրաստական /նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացում՝ 5-6 տարեկանների համար՝ ապահովվելով ազատ և համակողմանի զարգացման միջավայր և կիրառելով ուսուցման փոխգործուն մեթոդներ:

Խմբերի գործարկման տևողությունը կանոնակարգվում է մրցութային ծրագրով անցած հաստատության տնօրենի կողմից հաստատված պլանի, պարապմունքների բաշխման գրաֆիկի, օրվա ռեժիմի համաձայն:

Խմբերում տարվող աշխատանքների տևողությունը, պարբերականությունը որոշվում է տարածքի առանձնահատկություններով, առկա պահանջարկով, օրվա ընթացքում 3.5-4 կամ 8-9 ժամ տևողությամբ, հնգօրյա աշխատանքային շաբաթով:

Ծնողների և աշխատակիցների հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են աշխատանքային պայմանագրերով, ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջների համաձայն:

Մանկավարժական կադրերի համալրումն իրականացվում է համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող անձանցով, որոնց մասնագիտական

գործառույթները, պաշտոնային պարտականությունները սահմանվում են ԿԳ նախարարի 29 հունվարի 2007թ. N 41-Ա/Ք «Ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆաորակավորման բնութագրերն ըստ պաշտոնների» հրամանի հիման վրա:

Ուսումնական հաստատության և հաստատություն հաճախող երեխայի ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) միջև կնքվող պայմանագրերը կնքվում են ՀՀ ԿԳ նախարարի 26 հունվարի 2007թ. N 29-Ն հրամանի պահանջների համաձայն:

Ուսումնական հաստատության ղեկավար, մանկավարժական և սպասարկող աշխատակազմի աշխատաժամերի և հանգստի ժամի առանձնահատկությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսդրության, ՀՀ կառավարության 2007թ. N201-Ն որոշման պահանջների համաձայն:

## **ԿՐԹԱՂԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

### *Ընդհանուր դրույթներ*

Երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքների հենքային (բազիսային) բովանդակությունը իրականացվում է 5-6 տարեկան երեխաների զարգացման պետական չափորոշիչներին համապատասխան, ներառելով զարգացման հետևյալ ոլորտները. ֆիզիկական (շարժողական), խոսքի զարգացում, իմացական (ճանաչողական), հուզական, անձնային և սոցիալական զարգացում, ինքնասպասարկում և անվտանգություն, վերաբերմունք սովորելու նկատմամբ:

Ելնելով երեխաների զարգացման հիմնական ոլորտներից՝ կրթության բովանդակությունն ապահովում է 5-6 տարեկան երեխաների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և հիմնական արժեքային համակարգի ձևավորում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նոր կազմավորվող 5-6 տարեկանների կարճաժամկետ խմբերում հիմնականում ընգրկվելու են մանկապարտեզ չհաճախող երեխաներ, որոնք չեն անցել նախորդ տարիքային խմբերի ուսուցման փուլերով, ծրագրի կառուցվածքի հարցում դրսևորվել է տարբերակված մոտեցում. պահպանելով հենքային բովանդակության միջուկը, պարզեցվել են ենթաբաղադրիչների ծրագրային խնդիրները, շեշտադրվել զարգացնող ուսուցողական միջավայրը, ուսուցման մեթոդները:

Ծրագրով առաջարկվող մանկավարժական գործընթացի հիմքում ընկած է համագործակցային մոդելը, ուսուցման տեխնոլոգիաներում՝ ակտիվ ուսուցման

մեթոդիկան՝ փոխգործուն մեթոդների լայն կիրառությամբ: Դաստիարակության բովանդակությունը, խնդիրները իրականացվում են ամբողջ տարվա ընթացքում:

#### Խմբերի համայրման սկզբունքը

Խմբերը համալրվում են ըստ երեխաների տարիքի: Խառը տարիքային խմբերում ուսուցումն ու դաստիարակությունն իրականացվում է ԿԳ նախարարության կողմից մշակված մեթոդական ցուցումների պահանջներին համապատասխան:

Հաստատություն երեխաներն ընդունվում են առողջության մասին բժշկական տեղեկանքի, ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) դիմումների հիման վրա:

Հաստատությունում և խմբերում փաստաթղթերի ընդունումն ու գործավարությունն իրականացվում է ԿԳ նախարարության կողմից սահմանված «Մանկապարտեզի փաստաթղթերի ցանկի» և ՀՀ օրենսդրության պահանջներին համաձայն:

#### Հաստիքացուցակը

##### **1. Հաստիքային միավորները 1 խմբի հաշվարկով**

##### **Աշխատաժամը՝ օրական 3.5 ժամ**

##### **տևողությունը՝ եռամսյա ուսուցում**

- Տնօրեն՝ 0.5 դրույք (գործող հաստատության դեպքում նոր հաստիքային միավոր չի հատկացվում)
- Դաստիարակ՝ 0,5դրույք
- Երաժշտության դաստիարակ (ղեկավար)՝ յուրաքանչյուր խմբին 0,25 դրույք
- դաստիարարակի օգնական (դայակ)՝0,5 դրույք

Հաստատության տնօրենը հաստատում է աշխատակազմի առանձին աշխատողների պարտականությունները և աշխատանքի, աշխատաժամերի գրաֆիկը:

8-9 ժամ տևողության դեպքում (մեկամյա ուսուցում) խմբերի հաստիքային միավորները՝ կախված խմբերի թվից, կարգավորվում են ՀՀ պետական և համայնքային նախարարության ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակի մասին ՀՀ ԿԳ նախարարի 26 հունվարի 2007թ. N29 –Ն հրամանով:

##### **2. Հաստիքային միավորների թիվը 1 խմբի հաշվարկով (5-օրյա աշխատանքային շաբաթ)**

##### **Աշխատաժամը՝ օրական 8-9 կամ 10.5 ժամ**

##### **Տևողությունը՝ մեկամյա ուսուցում**

- Դաստիարակ՝ 1,12; 1,25; 1,55

- Դաստիարակի օգնական` 1; 1.1; 1.15
- Երաժշտության դաստիարակ` յուրաքանչյուր խմբին 0.25 դրույք

Ֆինանսավորումը

- համայնքային, պետական բյուջետային միջոցներ
- միջազգային կազմակերպություններ, բարեգործական նվիրատվություններ, հասարակական կազմակերպություններ
- ծնողական միջոցներ:

Խմբերի ֆինանսատնտեսական գործունեությունն իրականացվում է սահմանված նորմատիվների և նախահաշվով նախատեսված միջոցների համաձայն:

Հաստատության ֆինանսական, հաշվապահական փաստաթղթերի վարման, ՀՀ գործող հարկային և հարակից օրենսդրության առանձնահատկությունների պահանջների ապահովման համար որպես ուղեցույց օգտվել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ուսուցման կենտրոնի 2007թ. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերաբերյալ» ձեռնարկից:

**5-6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

Օրվա ռեժիմը

Օրվա ռեժիմը երեխաների կյանքի կազմակերպման, համակողմանի զարգացման, առողջության ամրապնդման և դաստիարակության կարևոր պայման է: Այն պարապմունքների սանդղակի կազմման, դաստիարակչական աշխատանքների ու գործունեության ազատ ձևերի պլանավորման, երեխաների ֆիզիկական և մտավոր աշխատանքների ճիշտ հերթագայման, ծանրաբեռնվածության համաչափ բաշխման մեխանիզմ է:

- Ժամանակի կազմակերպումը դաստիարակի համար ամենադժվար խնդիրներից մեկն է, հատկապես նոր ստեղծվող ծրագրերում:

Երեխայակենտրոն ծրագրերի վերը նշված պահանջները կատարելու համար շատ կարևոր է օրվա ռեժիմի կազմակերպումը: 5-6 տարեկան երեխաների օրվա ռեժիմը բաժանվում է այնպիսի ժամանակահատվածների, որոնք երեխաներին հնարավորություն կտան ներգրավվելու ինտեգրված, ակտիվ, մասնակցային գործունեության մեջ: Պետք է օրը բնական ձևով կազմակերպել` ապահովելով մեծ ու փոքր խմբերով աշխատանքի, անհատական աշխատանքի, ակտիվ (ֆիզիկապես շարժվելու) և հանգիստ պահերի, զրույցի և կշռադատման փուլերի, բացօթյա

աշխատանքների համար: Ռեժիմը պետք է արտացոլի տվյալ տարիքային խմբի երեխաների զարգացման փուլերը:

Օրվա ընթացքում դաստիարակները փորձում են լինել ուշադիր և արձագանքող երեխաների հետաքրքրություններին: Այն հետքերը, որ նույնիսկ, որ երեխաները առաջ են քաշում առավոտյան հանդիպման ժամանակ, շարունակվում են արձարձվել օրվա ընթացքում տարբեր գործունեությունների ժամանակ:

Օրվա ռեժիմի հիմնական նպատակներն են.

- Նպաստել երեխայի ինքնավստահության զարգացմանը՝ տալով ընտրություն կատարելու բազմակի հնարավորություններ, ինչպեսիք են. աշխատանքի տեսակը որոշելը, աշխատանքային կենտրոնների ընտրությունը, նյութերի ընտրությունը, իր խաղընկերոջը ընտրելը և այլն:
- Խրախուսել երեխայի հետաքրքրասիրությունը, խնդիրների լուծման ձգտումը, հետազոտության միջոցով նոր մտքերի, գաղափարների արտահայտումը և երևակայության դրսևորումը:
- Կազմակերպել աշխատանքներ, որոնք բավարարում են բոլոր երեխաների անհատական կարիքները և երեխաների համար հաջողության հասնելու հնարավորություններ են ստեղծում (օրինակ՝ հաշվի է առնվում, որ տվյալ երեխան ավելի շատ մանր շարժողական աշխատանքներ կարող է կատարել, եթե մասնակցի նկարելու աշխատանքներին):
- Խթանել երեխաների հարցադրումները և քննարկումները պարապմունքների ժամանակ:
- Օգտագործել տարբեր տեխնիկական միջոցներ, ինչպիսիք են համակարգիչը, տեսագրիչը, ձայնասփյուռը, թվային ֆոտոխցիկը, թվային դիկտոֆոնը, որոնք օգնում են տվյալ տարիքին համապատասխան նախագծերի իրականացմանը և նպաստում են երեխաների քննադատական մտածողության հմտությունների զարգացմանը:

**ՏԱՐԲԵՐԱԿ N1.**

*Օրվա օրինակելի ռեժիմի տարբերակ 5-6 տարեկանների  
կարճաժամկետ խմբի համար, ուսուցման մեկամյա տևողությամբ  
Սա կարելի է հարմարեցնել և օգտագործել ինչպես լրիվ  
օրվա, այնպես էլ կարճօրյա ծրագրերում*

<u>Վաղ առավոտյան ռեժիմ</u>		<u>Ժամանակը</u>
1.	<i>Երեխաների ժամանում</i> Ազատ խաղ : Երեխաները գիրք են դիտում կամ երաժշտություն են լսում:	8:30 - 9:00
<u>Առավոտյան ռեժիմ</u>		
2.	<i>Առավոտյան հանդիպում</i> Ջրույցի և մտքեր փոխանակելու ժամանակահատված: Երաժշտություն, շարժում: Առավոտյան հանդիպման ժամանակը 5-6 տարեկանների համար կարող է լինել 20-30 րոպե:	9:00 - 9:20
3.	<i>Ազատ ընտրության ժամ</i> Երեխաները ընտրում են իրենց հետաքրքրող կենտրոններից մեկը՝ արվեստ, խաղադեկորներ, գրադարան, գրաճանաչություն և այլն: Կարող են նախընտրել նախորդ օրը սկսած աշխատանքը շարունակել որևէ կենտրոնում:	9:20 - 9:45
4.	<i>Աշխատանքային հանձնարարություն.</i> <i>Մաքրել, հավաքել</i> Երեխաները հավաքում են խաղալիքները և նյութերը: Հետո ընտրում են նկարազարդ մի գիրք կամ գնում են մասնակցելու խմբային աշխատանքին:	9:45 - 9:55
5.	<i>Թեթև նախաճաշիկ և նախապատրաստում բացօթյա աշխատանքի</i>	9:55 – 10:15
6.	<i>Պարապմունքի նախապատրաստում, պարապմունք</i>	10:15 – 10:30 10:30 – 11:00
7.	<i>Բացօթյա խաղ</i> Երեխաները կարող են ընտրել տարբեր խաղեր՝	11:00 - 11:45

	ելնելով առկա հնարավորություններից: Օրինակ՝ անիվներով խաղալիք, մագլցել, գնդակ, պարան, ավազ և ջուր, այգեգործություն և այլ խաղեր: Կարող է լինել նաև ուղղորդված խաղ:	
8.	<i>Տուն գնալու նախապատրաստություն (կարծօրյա ծրագրի համար)</i> Երեխաները փոքր խմբերով գիրք են դիտում կամ երաժշտություն են լսում մինչ մյուսները հազնվում են և պատրաստվում տուն գնալ:	11:45 - 12:00
<u><i>Ճաշ և հանգիստ</i></u>		
9.	<i>Պատրաստվել ճաշին, ճաշել, հավաքել</i> Ճաշն ավարտելուց հետո հիգիենիկ արարողություններ: Քնի նախապատրաստում	12:00 - 12:45
10.	<i>Խաղաղ աշխատանք քնից առաջ</i> Դաստիարակը պատմվածք է պատմում կամ հանգիստ երգ է երգում ( մեղմ և ցածր երաժշտություն) կամ պատմվածքի ձայներիզ է միացնում:	12:45 - 13:00
11.	<i>Քնի ժամ</i> Երբ երեխաները արթնանում են, կարող են գիրք դիտել, կամ խաղալ հանգիստ խաղեր, ինչպես օրինակ՝ գլուխկոտրուկ, լոտո: Այն երեխաները, որոնք չեն քնում կամ շուտ են արթնացել, գնում են մյուս սենյակը տարբեր խաղեր խաղալու սեղանային խաղերով, խաղալիքներով, գրքեր դիտելու և ընտրելու այլ հանգիստ խաղեր:	13:00 - 15:00
<u><i>Կեսօրյա ուեժիմ</i></u>		
12.	<i>Չետճաշիկ և զբոսանքի գնալու նախապատրաստություն</i>	15:00 - 15:30
13.	<i>Բացօթյա խաղ</i>	15:30 - 16:30
14.	<i>Ազատ խաղ</i> Երեխաները ընտրում են արվեստի որևէ աշխատանք (այնպիսին, որը հետո քիչ ժամանակ կպահանջի հավաքելու համար), կամ խաղաղե-	16:30 - 17:15

	կորներ, կամ սեղանի խաղ , կամ էլ որևէ այլ բան:	
15.	<p><i>Մաքրելու/հավաքելու և փոքր խմբերով աշխատելու ժամ</i></p> <p>Չեռճաշիկից հետո մինչև երեխաների տուն գնալը դաստիարակը պլանավորում է ոչ աղմկոտ աշխատանքներ, ինչպես օրինակ, սեղանի խաղեր, երգեր, երաժշտություն, պատմվածքներ, նկարագարդուն, գունավորում և այլն:</p> <p>Երեխաները կարող են օգնել դաստիարակին նախապատրաստելու հաջորդ օրվա նյութերը:</p>	17:15 - 18:00

**ՏԱՐԲԵՐԱԿ N2.**

*Օրվա օրինակելի ռեժիմի տարբերակ 5-6 տարեկանների կարճաժամկետ խմբի համար*

*9 - 10.5- ժամյա աշխատանքային օրվա դեպքում ուսուցման մեկամյա տևողությամբ*

N	Կանոնակարգային պահեր	Ժամերը տարվա ցուրտ եղանակին	Ժամերը տարվա տաք եղանակին
1.	Երեխաների ընդունելություն, խաղեր, առավոտյան մարմնամարզություն	9-ժամյա` 8:00 - 8:30	9-ժամյա` 8:00 - 8:30
		10.5-ժամյա` 7:00 - 8:30	10.5-ժամյա` 7:00 - 8:30
2.	Նախաճաշի նախապատրաստում, նախաճաշ	8:30 - 8:55	8.30 - 8:55
3.	Պարապմունքի նախապատրաստում, ազատ գործունեություն	8:55 - 9:10	8:55 - 9:10
		9:10 - 9:30	9:10 - 9:30
		9:30 - 10:00	9:30 - 10:00
		10:00 - 10:30	10:00 - 10:30
		10:30 -11:00	
	1. Առավոտյան հանդիպում		
	2. Պարապմունք		
	3. Պարապմունք		
	4. Պարապմունք		
		11.00-11.30	
4.	Խաղեր, զբոսանքի	11:30 - 12:30	10:30 - 12:30



	Նախապատրաստում, զբոսանք (խաղեր, դիտումներ, աշխատանք)		
5.	Վերադարձ զբոսանքից, Ազատ ընտրության ժամ (երեխաները ընտրում են իրենց հետաքրքրող կենտրոններից մեկը՝ արվեստ, խաղաղեկորներ, գրադարան, գրաճանաչություն և այլն: Կարող են նախընտրել նախորդ օրը սկսած աշխատանքը շարունակել որևէ կենտրոնում):	12:30 - 12:50	12.30 - 12:50
6.	Ճաշի նախապատրաստում, ճաշ	12:50 - 13:20	12:50 - 13:20
7.	Ցերեկային քնի նախապատրաստում, քուն	13:20 - 15:20	13:20 - 15:20
8.	Արթնացում, կոփման արարողություն, խաղեր	15:20 - 15:50	15:20 - 15:50
9.	Չետճաշիկի նախապատրաստում, հետճաշիկ, խաղեր, աշխատանք	9-ժամյա՝ 15:50 -16:15	9-ժամյա՝ 15:50 - 16:30
		10.5-ժամյա՝ 15:50 - 16:40	10.5-ժամյա՝ 15:50 - 16:40
10.	Զբոսանքի նախապատրաստում, զբոսանք	9-ժամյա՝ 16:15 - 16:45	9-ժամյա՝ 16:30 - 16:45
		10.5-ժամյա՝ 16:40 - 17:00	10.5-ժամյա՝ 16:40 - 17:00
11.	Տուն ճանապարհել, (խաղեր)	9-ժամյա՝ 16:45 - 17:00	9-ժամյա՝ 16:45 - 17:00
		10.5-ժամյա՝ 17:00 - 17:30	10.5-ժամյա՝ 17:00 - 17:30

*Ծանոթություն.* Եթե փորձնական փուլի կրթական ծրագիրը նախատեսվում է 9-ամսյա տևողությամբ, ապա գործում է միայն ցուրտ եղանակի համար սահմանված օրվա ռեժիմը:

*Օրվա օրինակելի ռեժիմի տարրերակ 5-6 տարեկանների  
կարճաժամկետ խմբի համար*

*3 - 3.5-ժամյա աշխատանքային օրվա դեպքում՝  
ուսուցման մեկամյա տևողությամբ*

	<b>Կանոնակարգային պահեր</b>	<b>Ժամերը տարվա ցուրտ եղանակին</b>	<b>Ժամերը տարվա տաք եղանակին</b>
1.	Երեխաների ընդունելություն, խաղեր, առավոտյան մարմնամարզություն	8:00 - 8:30	8:00 - 8:30
2.	Նախաճաշի նախապատրաստում, նախաճաշ	8:30 - 8:55	8:30 - 8:55
3.	Պարապմունքի նախապատրաստում՝ 1. Առավոտյան հանդիպում 2. Պարապմունք 3. Պարապմունք 4. Պարապմունք	8:55 - 9:10 9:10 - 9:30 9:30 - 10:00 10:00 - 10:30 10:30 - 11:00	8:55 - 9:10 9:10 - 9:30 9:30 - 10:00

*Ծանոթություն.* Կանոնակարգային պահերում կատարվում են փոփոխություններ, եթե չի նախատեսվում սննդի կամ քնի կազմակերպում:

**Պարապմունքները**

5-6 տարեկան երեխաների օրվա կանոնակարգում իրենց ուղղակի տեղն ունեն պարապմունքները:

Պարապմունքների ձևով իրականացվող ուսուցման ընթացքում երեխաները տիրապետում են որոշակի գիտելիքների և կարողությունների, որոնք հեշտ են յուրացվում ինքնաբուխ խաղերի, մեծերի հետ ամենօրյա հաղորդակցման և ինքնուրույն գործունեության ընթացքում: Պլանավորված պարապմունքներն իրականացվում են խմբերով, ենթախմբերով, անհատական՝ պայմանավորված երեխաների նախապատրաստվածության մակարդակով, հոգեբանական առանձնահատկություններով, ծնողների պահանջներով:

Ուսումնական հաստատությունում ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի մեկին, սակայն երեխաների հարմարունակության ապահովման նպատակով ուսումնական պարապմունքները կազմակերպվում են սեպտեմբերի 15-ից և ավարտվում մայիսի վերջին:

Պարապմունքներն անցկացվում են ավագ խմբի շաբաթական պարապմունքների տեղաբաշխման գրաֆիկի և ռեժիմի (կանոնակարգի) համաձայն: Օրվա կանոնակարգը փոփոխվում է տարվա ցուրտ և տաք եղանակներին

համապատասխան: Առաջնորդվելով օրվա ռեժիմի օրինակելի տարբերակով, յուրաքանչյուր հաստատություն կազմում է իր պայմաններին և յուրահատկություններին համապատասխան ռեժիմ, բնականաբար կատարելով կանոնակարգային առանձին պահերի փոփոխություն:

Պարապմունքների բաշխումն ըստ օրերի կատարում է մանկավարժական խորհուրդը: Պարապմունքների միջոցով ուսուցումն իրականացվում է դիդակտիկայի հիմնական սկզբունքներին համապատասխան:

5-6 տարեկանների գործունեությունը իրականացվում է խաղային գործունեության միջոցով:

Պարապմունքները տարվում են երկու ուղղությամբ՝

ա/ ուղղակի (համընդհանուր/ֆրոնտալ) ուսուցման ձևով.

բ/ երկու, երեք տեսակի պարապմունքների ինտեգրման ճանապարհով, օրինակ՝ մայրենի լեզու - կերպարվեստ, մաթեմատիկա - երաժշտություն, մաթեմատիկա - կառուցողական աշխատանք և այլն:

Պարապմունքները երեխայի համար հնարավորություն են ստեղծում ճանաչողական գործընթացը դարձնել իսկական փորձառական գործընթաց, որն օգնում է յուրաքանչյուր երեխայի լիարժեքորեն բացահայտելու իր ստեղծագործական կարողությունները, բավարարելու իր հետաքրքրությունները: Պարապմունքները կարող են անցկացվել ինչպես ենթախմբերով, այնպես էլ ամբողջ խմբի հետ՝ կախված պարապմունքի տեսակից և ուսուցանվող նյութից:

Կարևորվում է պարապմունքի տեղի և ժամանակի ընտրությունը, դրանց անցկացման ձևերը և միջավայրը: Պարապմունքները օգնում են երեխաներին առավելագույն չափով տրամադրվելու այս կամ այն գործունեության իրականացմանը, դաստիարակի կողմից առաջադրվող նյութի ընկալմանը: Թեմաների զարգացումը, նյութի ամրապնդումը, ամփոփումը կարելի է կատարել ակտիվ մեթոդների կիրառմամբ՝ օգտագործելով աշխատանքային կենտրոնները և կազմակերպելով փոքր խմբերով աշխատանքներ:

Ուսուցման ընթացքում դաստիարակը հաշվի է առնում յուրաքանչյուր երեխայի հնարավորությունները, այսինքն՝ յուրաքանչյուր երեխա հնարավորություն է ստանում յուրացնելու ըստ իր զարգացման մակարդակի, խառնվածքի, անհատական առանձնահատկությունների, ընկալման կարողությունների: Այս մոտեցումը օգնում է երեխային դրսևորելու իր ներուժը: Երեխաների նկատմամբ անհատական մոտեցումը բացառում է ուժեղների և թույլերի միջև հակասությունների առաջացմանը և խորացմանը: Յուրաքանչյուր երեխա ունի իր ընկալումը. մեկը՝ շուտ է յուրացնում,

մյուսը՝ դանդաղ ու հիմնավոր: Մենք պետք է հարգենք ու խրախուսենք յուրաքանչյուր երեխայի բնական ու ներդաշնակ զարգացումը:

5-6 տարեկաններին առաջարկվում է պարապմունքների հետևյալ տեսակները և շաբաթական տեղաբաշխման տարբերակը:

**Ավագ խմբի շաբաթական  
պարապմունքների տեղաբաշխման օրինակելի տարբերակ**

**Շաբաթական ընդամենը 14 պարապմունք + 1՝ դաստիարակի հայեցողությամբ**

Շաբաթվա օրերը	Խոսքի զարգացում գրաճան. էկոլոգիա	Տարրական մաթեմատ. պատկերաց. զարգացում	Նկարչություն	Ծեփակերտում	Ապլիկացիա և կառուցող. աշխատանք	Երաժշտ.	Ֆիզ. կուլտուրա
Երկուշաբթի	1		1			1	
Երեքշաբթի	1	1					1
Չորեքշաբթի	1		1		1/2		
Հինգշաբթի	1			1			1
Ուրբաթ	1				1/2	1	
<b>ընդամենը</b>	<b>5</b>	<b>1</b>	<b>2</b>	<b>1</b>	<b>1</b>	<b>2</b>	<b>2</b>

1. Հնգօրյա աշխատանքային շաբաթով գործող մանկապարտեզների 5-6 տարեկանների խմբերում շաբաթական 15 պարապմունքը բաժանվում է շաբաթվա օրերի վրա և յուրաքանչյուր օր կազմակերպվում է երեքական պարապմունք:

2. Քանի որ շաբաթվա երկրորդ օրը (երեքշաբթի) իրար հետևից անց են կացվում մտավոր լարում պահանջող երկու պարապմունքներ, ուստի նպատակահարմար է փոփոխություն մտցնել պարապմունքի նյութի պլանավորման մեջ. եթե մեկ պարապմունքի ժամանակ տրվում է նոր նյութ, ապա հաջորդ պարապմունքը նվիրվում է դիդակտիկ խաղին, կամ հակառակը:

3. Քանի որ ծրագրով թույլատրվում է անցկացնել մեկ պարապմունք դաստիարակի հայեցողությամբ (հաշվի առնելով երեխաների նախասիրությունները), ապա այդ պարապմունքը կառուցելիս պետք է հաշվի առնելով դրա բնույթը (մտավոր լարվածություն կամ շարժունակություն ունեցող պարապմունք): Ելնելով պարապմունքի բնույթից, այն կարելի է անցկացնել հիմնական պարապմունքի հետ զուգակցված, խաղային մեթոդների զուգորդմամբ կամ օրվա երկրորդ կեսին: Նախընտրելի է պարապմունքներն անցկացնել առավոտյան ժամերին:

**5-6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԾՐԱԳԻՐ**

Ծրագիրը հենվում է զարգացումային տեսության վրա, որի կենտրոնում երեխայի բնական ու ամբողջական զարգացումն է: Այն միտված է խթանելու երեխայի զարգացման բոլոր ոլորտները:

5-6 տարեկան երեխաների գործունեության կազմակերպման կարճաժամկետ ծրագրի բովանդակությունը ներառում է այնպիսի բաղադրիչներ, որոնք բավարարում են այդ տարիքային խմբի զարգացման պետական չափորոշիչների և նախադպրոցական կրթության պահանջները:

## ***ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐ***

### **1. ԽՈՍՔԻ ՋԱՐԳԱՑՈՒՄ**

#### **1.1. Բանավոր խոսքի զարգացում**

Բանավոր խոսքի զարգացումը օգնում է երեխաներին արտահայտելու և մեկնաբանելու իրենց մտքերը, զգացմունքները, գաղափարները, ինչպես նաև արձագանքելու ուրիշների գաղափարներին և գործողություններին: Իրենց գործունեության ընթացքում երեխաները սկսում են խոսքը օգտագործել տարբեր սոցիալական իրավիճակներում: Բանավոր խոսքի զարգացման համար անհրաժեշտ է լեզվի իրական ու բնական գործածում, երեխային իր խոսքի նկատմամբ վստահություն ներշնչում, անկաշկանդ խոսելու, արտահայտվելու հնարավորություն, շփման ու հաղորդակցման համար ազատ ու բնական պայմաններ ապահովում: **Բանավոր խոսքին տիրապետում են խոսելու միջոցով:** Անհրաժեշտ է խոսքային ինքնարտահայտման պահանջումնք ձևավորել, որպեսզի երեխան ցանկանա խոսել, պատմել, հաղորդակից դարձնել իր մտքերին, կիսել իր խոհերն ու հույզերը: Դա հնարավոր է ապահովել միայն համապատասխան բարենպաստ միջավայրի, բարյացակամ վերաբերմունքի և ուշադրությամբ ու հետաքրքրությամբ ունկնդրելու մթնոլորտ ստեղծելու դեպքում:

## Չափորոշային պահանջներ

1. Երեխան հասկանում է և առանց լրացուցիչ հիշեցման հետևում է մի քանի քայլից բաղկացած հրահանգներին առանց լրացուցիչ հիշեցման:
2. Լսում և մասնակցում է խոսակցություններին:
3. Հասկանում է ժամանակային հասկացությունները՝ առավոտ, կեսօր, երեկո:
4. Վերապատմում է լսած պատմվածքը, հեքիաթը, նկարը, բանաստեղծությունը:
5. Կատարում է տրամաբանական կանխատեսումներ:
6. Նայելով նկարին՝ տրված բառերով կազմում է նախադասություն:
7. Գտնում է երևույթների ու կերպարների նմանություններն ու տարբերությունները:
8. Փորձում է կռահել անծանոթ բառի իմաստը:
9. Բառերով արտահայտում է հարաբերությունները, զգացմունքները, հույզերը:

### **1.2. Լեզու և հաղորդակցություն**

Հաղորդակցությունը սերտորեն կապված է մի շարք հմտությունների հետ, ինչպիսիք են լսելը, հասկանալը, բանավոր զրույցներին հետևելը և այլն: Հաղորդակցական հմտությունների զարգացումը պահանջում է հասկանալ՝

- ա) այն սոցիալական համատեքստը, որտեղ տեղի է ունենում հաղորդակցությունը,
- բ) հաղորդակցության նպատակները,
- գ) հաղորդակցության մեջ առկա զգացմունքների տարրերը:

Բանավոր խոսքի, հաղորդակցման լավագույն միջոցը զրույցն է: Ջրույցը կազմակերպվում է այնպես, որ ավելի շատ խոսեն, պատմեն, արտահայտվեն երեխաները: Ջրույցի թեմա կարող են դառնալ երեխայի անձը և այն ամենը, ինչն անմիջապես կապվում է նրա ես-ի հետ: Օրինակ, նա կարող է պատմել իր, իր ընտանիքի, ընկերների, խաղալիքների, բակի, իրեն շրջապատող բնության, կենդանիների, բույսերի, երևույթների մասին: Երեխաների հետ կարելի է զրուցել սիրված մուլտֆիլմերի, կինոնկարների, ընդունված խաղերի և այն ամենի մասին, ինչը ոգևորում, ակտիվ հաղորդակցման է մղում նրան: Բնության մեջ հաճախակի գտնվելը ավելի մեծ հնարավորություններ են ստեղծում դիտարկումների, մտքերի փոխանակման և զրույցների համար:

Չափորոշային պահանջներ

1. Երեխան տեղեկություն ստանալու համար տալիս է Ե՞րբ, ինչպե՞ս, ինչո՞ւ հարցերը և փորձում է գտնել պատասխանները:
2. Նախաձեռնում է խոսակցություն հասակակիցների ու մեծահասակների հետ:
3. Արտահայտում է իր ունեցած տեղեկատվություն և կապ է ստեղծում նոր լսածի ու սովորածի միջև:
4. Մեկ նախադասության մեջ մեկտեղում է մի քանի միտք:
5. Հարցեր է տալիս՝ անծանոթ բառերի իմաստը հասկանալու համար:

**1.3. Հետաքրքրություն պատկերազարդ գրքերի նկատմամբ**

5-6 տարեկանները հիմնականում հասկանում են, որ բառերը ներկայացնում են ինչ-որ բաներ՝ առարկաներ, գաղափարներ, դեպքեր, իրադարձություններ, և տառերից կազմվում են բառեր: Երեխաները հաճույքով են պատմում և «գրում» պատմվածքներ: Մինչև գրելու պայմանական ձևերի օգտագործումը, երեխաները կանովին բացատրում են իրենց նկարած նկարները, նկարները օգտագործում են պատմվածքներ պատմելու համար, ներկայացնում են պատվածքները նկարների և խաղի միջոցով: Գիր չիմացող երեխաների համար, որպես գրավոր խոսք՝ այս փուլում անփոխարինելի են նկարազարդ գրքերը, որոնց օգնությամբ նա կարողանում է պատմել պատմությունը, կարողանում է կանխագուշակել, ստեղծագործել: Այս տարիքային խմբի համար գրավոր հաղորդակցման միակ միջոցը նկարն է:

Չափորոշային պահանջներ

1. Երեխան լսում է ընթերցվող տարբեր պատմություններ ու հեքիաթներ:
2. Պատմում է պատմություններ, որոնք ունեն սկիզբ, զարգացում և ավարտ:
3. Հետաքրքրություն է ցուցաբերում ընթերցանության նկատմամբ:
4. Կանխագուշակումներ է անում, թե հետո ինչ կլինի:
5. Կապեր ու նմանություններ է գտնում տարբեր պատմությունների միջև:
6. Պատկերների օգնությամբ պատկերացում է կազմում, թե ինչի մասին է գիրքը:
7. Կարողանում է պատմվածքի կամ հեքիաթի հերոսների դասակարգել ըստ կարևորության:
8. Ձևացնում է, թե կարդում է իր և ուրիշների համար:

#### 1.4. Վաղ գրաճանաչություն

Երբ երեխաները հասկանում են, որ գիրն իր մեջ որոշակի իմաստ է պարունակում, նրանք արդեն շահագրգռվածություն են ցուցաբերում ինքնուրույն գրելու, ստեղծելու բառեր նույնիսկ այն դեպքում, եթե դեռևս չունեն հեգելու և գրելու հմտություններ: Նրանք սկսում են նկարել ինչ-որ բաներ՝ որոշակի գաղափարներ արտահայտելու համար, ավելացնելով պատահական տառեր կամ բառեր: Ժամանակի ընթացքում, ավելի մեծ փորձառություն ձեռք բերելով, երեխաները սկսում են բառեր կազմել՝ օգտագործելով իրենց անվան տառերը, արտանկարելով տարբեր բառեր, ուրիշներից օգնություն խնդրելով, օգտագործելով հնարովի սիմվոլներ:

##### Չափորոշային պահանջներ

1. Երեխան ճանաչում է տպագիր խոսքը:
2. Հետևում է տպագիր խոսքին ձախից աջ, վերևից ներքև:
3. ճանաչում է տպատառերով գրված իր անունը:
4. Տպագիր տառերով փորձում է «գրել» իր անունը:
5. Միջավայրում որոշ ծանոթ տառեր և բառեր է գտնում:

#### 1.5. Խոսքի հնչյունային իմացություն (կուլտուրա)

5-6 տարեկան երեխաներին դաստիարակը օգնում է ուշադրություն դարձնել խոսքին, նրա առանձին մասերին, այսինքն՝ անցնել նախադասությունից միջև հնչյուն ընկած ճանապարհը: Մինչև հնչյունի գրությանը հասնելը՝ երեխան պետք է բառի մեջ հստակ տարբերի հնչյունները: Պարբերություն-նախադասություն-բառ-վանկ-հնչյուն ուղին երեխան անցնում է մանրամասնությամբ, իր խոսքից առանձնացնում է նախադասությունները, բառերը, վանկերը, հնչյունները: Այս ամենից հետո հնչյունի գրությունը՝ տառը, դառնում է միայն տեխնիկայի հարց: Այս ընթացքում բառերի հեգունը կեղծապես գրաճանաչությունը:

##### Չափորոշային պահանջներ

1. Երեխան վանկերի միջոցով կազմում է բառեր (2-3 վանկ):
2. Թվարկում է բառեր, որոնք սկսվում են միևնույն հնչյունով:
3. Որոշում է արտասանած բառերի առաջին հնչյունը:
4. Կրկնում է առաջարկված բառերն ու բառակապակցությունները՝ ճիշտ արտաբերելով հնչյունները:
5. Հասկանում է հակամիջներ և որոշ հոմանիշներ:



## 2. ԻՄԱՑԱԿԱՆ ՈԼՈՐՏ

### 2.1. Տրամաբանություն և մտածողություն

Երեխան աշխարհը ճանաչում է հինգ զգայարանների միջոցով`

- համ
- տեսողություն
- լսողություն
- հոտառություն
- շոշափելիք

Երեխայի գործունեության ընթացքում հինգ զգայարաններն օգտագործելը և զարգացնելը, շրջապատող միջավայրում եղած նյութերն ու երևույթները ճանաչելը, դրանց մասին պատմելը նպաստում են երեխայի տրամաբանության և մտածողության զարգացմանը, կենսափորձի հարստացմանը, աշխարհընկալման ձևավորմանը: Օգտագործելով իր հինգ զգայարանները` երեխան ճանաչում է ծանոթ առարկաների, նյութերի, բույսերի, կենդանիների, առարկաների հոտերը, ձայները և այլ առանձնահատկությունները:

Երեխան ճիշտ վերաբերմունք է մշակում շրջակա միջավայրի նկատմամբ, կարողանում է ուսումնասիրության, հետազոտության, փորձի միջոցով իրեն անհրաժեշտ տեղեկությունները ձեռք բերել:

Երեխայի գործունեությունը պետք է այնպես կազմակերպել, որ նա կարողանա`

- ճիշտ կողմնորոշվել միջավայրում,
- կառավարել և նպատակաուղղել իր գործողությունները,
- ճանաչել շրջապատի իրերը, առարկաները, նյութերը,
- օգտվել անհրաժեշտ նյութերից, գործիքներից և սարքերից,
- գործունեության ընթացքում զգուշություն ցուցաբերել օգտագործվող նյութերի և առարկաների նկատմամբ, չօգտագործել անծանոթ նյութեր (խմբում պետք է բացառել վտանգավոր նյութերի գոյությունը):

#### Չափորոշային պահանջներ

1. Երեխան համեմատություններ է անում, գտնում է նմանություններն ու տարբերությունները, մասերի է բաժանում, խմբավորում է առարկաները ըստ հատկանիշի:
2. Դիտարկում է (նաև խոշորացույցով, հեռադիտակով և այլն) առարկաներ, բնության երևույթները, և կարողանում է ներկայացնել դիտարկվածն ու

բացատրել իրողության պատճառները:

3. Գտնում է օրինաչափություններ, պատճառահետևանքային կապեր, բացատրում է բարդ իրողությունների պատճառներ:
4. Կարողանում է նպատակային օգտագործել տարբեր գործիքներ ու սարքեր (աշխատել գյուղատնտեսական, մեխանիկական, կենցաղային գործիքներով):
5. Կատարում է քննադատական վերլուծություններ (օր.՝ վերլուծում է գրքերի կերպարների վարքը և առաջարկում է, թե ինքը ինչպես կվարվեր: Նկարների մեջ հասկանում է հակասությունը):
6. Տրամաբանական պարզ եզրահանգումներ է անում (այնքան-որքան, այնպես-ինչպես, եթե-ապա):

## 2.2. Տարրական մաթեմատիկական գիտելիքներ

Երեխաները մաթեմատիկական սովորում են բնական ճանապարհով և ինքնաբուխ կերպով, երբ շփվում են իրենց շրջապատող աշխարհի հետ, հետազոտում են և փորձում հասկանալ այն: Այդ պատճառով մաթեմատիկական պետք է ինտեգրված լինի երեխաների առօրյա գործունեության բոլոր ոլորտներում: Մաթեմատիկան կարելի է ուսուցանել անհատական և խմբային աշխատանքների, պլանավորված փորձառական պարապմունքների միջոցով, որոնց ընթացքում երեխաները շփվում են միմյանց հետ, խնդիրների լուծում և կշռադատում: Մաթեմատիկան սերտորեն կապված է զարգացման բոլոր ոլորտների հետ, ուստի մաթեմատիկան ուսուցանելիս շատ կարևոր է միջառարկայան կապերի ստեղծումը: Երեխաները օգտագործում են թվերը, կատարում են չափումներ, դասակարգումներ:

### Չափորոշչային պահանջներ

1. Երեխան հաշվում է, ավելացնում է, պակասեցնում է, մեծերի հետ խանութում առևտուր է անում, չափումներ է կատարում:
2. Երեխան ունի պատկերացում երկրաչափական պատկերների մասին:
3. Տարբերակում է առարկաների ձևերը:
4. Թվարկում է իրենից ձախ կամ աջ, հեռու կամ մոտիկ, վերևում կամ ներքևում գտնվող առարկաները:
5. Տարբերակում է անցյալում, ներկայում, ապագայում կատարվող գործողությունները:
6. Դրսևորում է ժամանակի հետ կապված հասկացությունների իմացություն:
7. Գաղափար ունի ժամի, ժամացույցի, օրացույցի մասին:

8. Տիրապետում են համրանքի տարրական գիտելիքների ու հմտությունների:
9. Մաթեմատիկական գիտելիքները կիրառում է խաղում:
10. «Ո՞րը», «որերո՞րդ», «ինչքա՞ն» հացերին կարողանում է պատասխանել:
11. Հասկանում է երկար-կարճ, հաստ-բարակ, բարձր-ցածր, այնքան-որքան հասկացությունները:

### 2.3. Երևակայություն և ստեղծագործական մտածողություն

5-6 տարեկան երեխաները կարող են ստեղծագործաբար մոտենալ իրենց առաջադրանքներին և փորձում են մի քանի եղանակներով լուծել իրենց առջև դրված խնդիրները: Երեխաների ստեղծագործական մտածողությունը կարելի է խթանել՝ ապահովելով այնպիսի ուսումնական միջավայր, որտեղ նրանք կարող են փորձել, սխալվել, շտկել: Որոշ երեխաներ չեն ցանկանում փորձել նոր եղանակներ, որովհետև վախենում են անհաջողության մատնվել: Եթե երեխաները մի քանի անգամ անհաջող փորձեր են անում լուծելու որևէ պրոբլեմ, նրանց համար շատ կարևոր է իմանալ, թե երբ և որտեղ կարող են օգնություն ստանալ, որպեսզի նրանք չհուսահատվեն և չհիասթափվեն տվյալ աշխատաքից:

#### Չափորոշային պահանջներ

1. Երեխան կարողանում է տրված նյութի տարբեր կիրառություններ գտնել (առնվազն 3):
2. Կարողանում է հորինել կիսատ թողած պատմությունը:
3. Պատմությունները ներկայացնում է շարժումների, դերախաղի, կերպարվեստի, երաժշտության և այլ միջոցներով:
4. Մնջախաղի միջոցով ներկայացնում է պարզ օբյեկտներ և գործողություններ:
5. Կարողանում է երևույթները և առարակները ներկայացնել պայմանական նշանների միջոցով:
6. Կարողանում է կիսատ նկարված պատկերները ճանաչել և ասել դրանց անունները:

### 2.4. Սոցիալ-մշակութային և կենցաղային կողմնորոշում

5-6 տարեկան երեխաները սկսում են ճանաչել սեփական անձը, իրենց դերը ընտանիքում, և նրանց ճանաչողությունը աստիճանաբար ընդլայնվում է դեպի ավելի լայն սոցիալական համակարգեր՝ դպրոց, թաղամաս, քաղաք...և աշխարհ: Իրենց

կյանքի ընթացքում երեխաները շփվում են տարբեր մարդկանց հետ, և շատ կարևոր է, որ նրանք կարողանան կողմնորոշվել, թե ինչպիսին պետք է լինի իրենց համակեցությունը այդ մարդկանց հետ: Ազատ գործունեությունը հնարավորություն կտա երեխային զարգացնելու ինքնուրույնություն և կյանքի տարբեր իրադրություններում գործելու կարողություն: Միջավայրը պետք է ամրապնդի այն հասկացություններն ու հմտությունները, որոնք կօգնեն երեխային դառնալու լավ քաղաքացի և ակտիվորեն մասնակցելու բազմամշակույթ, ժողովրդավարական հասարակության կյանքին:

Դաստիարակը պետք է կազմակերպի աշխատանքներ, որոնք երեխայի մոտ կծնավորեն պատկերացումներ աշխատանքի բովանդակության և նշանակության մասին, գաղափար կտա մեծերի աշխատանքի մասին՝ տարրական գիտելիքներ հաղորդելով շինարարության, գյուղատնտեսության, արտադրության ճյուղերի, առանձին մասնագիտությունների, տրանսպորտի, տեխնիկայի, բնակչության սպասարկման ծառայությունների՝ փոստի, գրադարանի, թանգարանի, հիվանդանոցի, դպրոցի, սրճարանի, խանութի վերաբերյալ:

### Չափորոշային պահանջներ

1. Երեխան տեղեկացված է իր բնակավայրի մասին. գիտի տան հասցեն:
2. Տարբերակում է հարազատական կապերը և հարաբերությունները:
3. Գիտի, թե ինչով են զբաղվում որոշ մասնագիտությունների տեր մարդիկ:
4. Կարողանում է ազատ կողմնորոշվել տարածքում:
5. Գիտի ճանապարհային երթևեկության տարրական կանոնները:
6. Տարբերում է տրանսպորտի որոշ տեսակներ:
7. ճանաչում է բնության երևույթները՝ ամպրոպ, անձրև և այլն:
8. Տարբերակում է վայրի և ընտանի կենդանիներին:
9. Գիտի բույսերի ու կենդանիների աճի ու զարգացման փուլերը:
10. Գիտի կենդանիների ու բույսերի բնակության միջավայրի բազմաձևությունը. ջրային, վերերկրյա-օդային, հողային:
11. Ունի որոշ գիտելիքներ շրջակա միջավայրի բույսերի և կենդանիների պաշտպանության և նրանց հետ վարվելու կանոնների մասին:
12. Ունի որոշ գիտելիքներ Հայաստանի Հանրապետության, մայրաքաղաք Երևանի, օրհներգի, դրոշի, զինանշանի, տեսարժան վայրերի, հուշարձանների, ազգային ծեսերի ու տոների մասին:
13. ճանաչում է որոշ երաժշտական գործիքներ:
14. Երգում է մանկական երգեր և կատարում է պարային շարժումներ:
15. Կարող է պատմել որոշ պարզ, ոչ ծավալուն ազգային հեքիաթներ, պատվածքներ և այլն:

### **3. ՀՈՒՋԱԿԱՆ, ԱՆՁՆԱՅԻՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄ**

#### **3.1. Սոցիալական զարգացում,**

##### **փոխհարաբերություններ մեծահասակների հետ**

Երեխաները իրականում աշխարհի մասին իրենց գիտելիքները կառուցում են սոցիալական շփումների միջոցով, որից էլ մեծապես կախված է երեխաների հաջողությունը դպրոցում և հետագա կյանքում: Մեծահասակների կողքին ու մեծահասակների հետ ապրելով՝ երեխան անընդհատ նմանակում է նրան: Դա երեխային չի պարտադրվում: Դրանով դրսևորվում է երեխայի մեծանալու ցանկությունը: Իր տիկնիկի և նրա օժիտի հետ խաղացող երեխան կրկնում է այն ամենը, ինչ տեսնում է կենցաղում: Բայց այս բոլորը նրան պետք են ճշտելու համար շրջապատի հետ իր փոխհարաբերությունները, որոշելու համար իր տեղը, հասկանալու համար կապերի այն համակարգը, որի կենտրոնը ինքն է: Սոցիալական և հուզական զարգացումը հիմք են ծառայում շփումների և փոխհարաբերությունների համար, որոնք իմաստավորում են երեխաների ունեցած փորձառությունը տանը, դպրոցում և ավելի լայն շրջապատում: Ջերմ, ապահով, հետևողական, արագ արձագանքող, վստահելի հարաբերությունները երեխաների մոտ զարգացնում են համագործակցելու, բանակցելու, առաջնորդելու, ընկերություն անելու, իրենց զգացումները վերահսկելու հմտություններ: Այսպիսի հարաբերությունները օգնում են նաև երեխաներին պաշտպանվելու այն բացասական զգացումների ներգործություններից, որ կարող են առաջանալ աղքատության, բռնության, ընտանեկան պրոբլեմների և այլ պատճառներով:

5-6 տարեկանների սոցիալ-հուզական զարգացման նպատակով շատ արդյունավետ է կազմակերպել սոցիալականացմանը նպաստող գրույցներ և քննարկումներ

- գեղարվեստական ստեղծագործության հիման վրա,
- իրավիճակային գրույցներ:

Այս տիպի գրույց-քննարկումները ստեղծում են ժողովրդավարական, համագործակցային միջավայր, որտեղ ձևավորվում ու զարգանում է երեխայի լսելու, քննարկելու, լուծումներ գտնելու, հանդուրժողականության, ազատ հաղորդակցվելու, ընտրելու սոցիալական որակները: Դաստիարակն իր վերաբերմունքով օրինակ պիտի լինի երեխաների համար: Քաղաքավարական կանոնները յուրացվում են գործնականում՝ կենցաղում և առօրյայում անընդհատ օգտագործվելով երեխային շրջապատող մեծահասակների և հասակակիցների կողմից:

Չափորոշային պահանջներ

1. Երեխան սկսում է խոսակցությունը, հարցերով դիմում է ծանոթ մեծահասակներին (հարևաններ, բժիշկ, խանութի վաճառող և այլն):
2. Հարցնում է մեծահասակին հաստատված կանոնների կամ ռեժիմի/ժամակարգի խախտման հետևանքների մասին:
3. Հարցով դիմում է մեծահասակին կամ պատեհ պահի նրա ուշադրությունը հրավիրում է ինչ-որ խնդրի վրա:

**3.2. Սոցիալական զարգացում,  
փոխհարաբերություններ հասակակիցների հետ**

5-6 տարեկան երեխաները սկսում են սովորել, թե ինչպես համագործակցաբար խաղան և աշխատեն մեկ այլ երեխայի կամ երեխաների հետ: Նրանք սկսում են լսել իրենց հասակակիցներին և հասկանալ նրանց զգացմունքները, համատեղ լուծել խնդիրներ, գնալ փոխզիջումների:

Այս տարիքում երեխաներին հետաքրքրում է, թե ինչ է ընկերությունը, ո՞րն է ընկերության իմաստը (օր.՝ ի՞նչ է նշանակում ընկեր ունենալ: Ինչպե՞ս պետք է ընկերություն անել և այլն:) Երեխաները արդեն ունենում են որոշակի նախընտրություն, թե ում հետ են ուզում խաղալ և երբեմն խուսափում են շփվել այն հասակակիցների հետ, որոնց լավ չեն ճանաչում:

Չափորոշային պահանջներ

- Երեխան առաջարկում է իր օգնությունը ուրիշ երեխայի և ընդունում է
1. ուրիշների օգնությունը:
  2. Տարբեր շրջապատներում ունի ընկերներ:
  3. Իր խաղալիքը, գիրքը և այլն տալիս է ընկերներին:
  4. Իր փորձն ու մտքերը հաղորդում է ուրիշներին:
  5. Խաղում է համագործակցելով՝ լսելով և առաջարկելով մտքեր:
  6. Գտնում է տարբեր իրավիճակներում առաջացող խնդիրների լուծման ուղիներ
  7. Կարողանում է բանակցել՝ վեճեր լուծել, փոխզիջման գնալ և այլն:

**3.3. Սոցիալական վարք**

Սոցիալական վարքի տարրերի ներմուծումը կանոններով ու հրահանգներով չի կատարվում: Երեխայի կողքին ապրող մեծահասակների (ծնող, դաստիարակ, հարևան և այլն) սոցիալական վարքն է հանդիսանում այն օրինակը, որը բնական

կյանքի ու հարաբերությունների ընթացքում շատ սահուն կերպով փոխանցվում է երեխաներին: Եթե մեծահասակը ապրում է վարքի որոշակի կանոններով, սակայն ցանկանում է, որ երեխան այլ վարքի կանոններ յուրացնի, դա երեխայի մոտ առաջ է բերում անբնականության զգացողություն և խառնաշփոթ, ուստի աննպատակ է և չի կարող տալ ցանկալի արդյունք:

Ի լրումն մեծահասակների կողմից վարքի մոդելավորման, ուսումնական գործընթացը ևս պետք է նպաստի երեխայի դրական վարքի ձևավորմանը: 5-6 տարեկան երեխաները շատ հաճախ հայտնվում են այնպիսի իրադրություններում, որտեղ նրանց անհրաժեշտ է մեծահասակների ուղղորդումը: Նրանք դեռևս կարող են դժվարանալ գնալ փոխզիջման, դրսևորել հանդուժողականություն և լուծել խաղի ժամանակ ծագած հակասությունները: Մեծահասակի օգնությունը խնդիրների լուծման մի քանի տարբերակների առաջադրման ձևով, կստիպի երեխաներին տվյալ խնդրին մոտենալ տարբեր տեսանկյուններից և փոխհամաձայնության գալ ընտրության հարցում:

#### Չափորոշչային պահանջներ

1. Երեխան հասկանում է, թե ինչպիսի արձագանք կարող է գտնել իր և ուրիշների վարքը:
2. Հետևում է կանոններին:
3. Առօրյա աշխատանքներին մասնակցում է տարբեր դերերով:
4. Գործածում է բարեկիրթ բառեր և դրսևորում է բարեկիրթ վարքագիծ:
5. Կարողանում է միանալ անծանոթ երեխաների խաղին:
6. Առօրյա աշխատանքների մասնակցում է ինչպես ունկնդրողի, այնպես էլ ակտիվ մասնակցի դերում:

### **3.4. Անձնային զարգացում**

Սեփական անձի գիտակցումը և սեփական անձի դրական ընկալումը ձևավորվում է ուրիշների հետ շփումների և դրական փորձառության արդյունքում: Երեխան իր ապրած 5-6 տարիների ընթացքում արդեն ունի ձևավորված սեփական վերաբերմունք իր անձի նկատմամբ: Ինքնավստահ 5-6 տարեկան երեխան նոր առաջադրանքներին և իրավիճակներին վերաբերվում է խանդավառությամբ, դրսևորում իր զգացմունքները հմապատասխան ձևով, իր մասին տեղեկություններ է կիսում ուրիշների հետ: Շատ կարևոր է երեխաների համար ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ նրանք կարող են զարգացնել սեփական անձի և այլոց նկատմամբ հարգանք, կարող են արտահայտել սեփական կարծիքը առանց վախենալու և

պատրաստ կլինեն լսել մյուսների կարծիքը, որը կտարբերվի իրենց կարծիքից: Այս տարիքում երեխաների մոտ արդեն սկսում է ձևավորվել իրավունքների և պարտականությունների հասկացությունը:

Չափորոշային պահանջներ

1. Երեխան գիտի իր անձին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ. անունը, ազգանունը, տարիքը, ծնողների անունները, ազգանունները, աշխատանքի վայրը:
2. Դրսևորում է զգացմունքները կառավարելու պարզագույն հմտություններ իր համար անբարենպաստ իրավիճակում:
3. Ենթարկվում է օրվա ռեժիմին:
4. Հոգ է տանում իրեն և խմբին պատկանող իրերին:
5. Դրսևորում է ինքնազնահատման տարրական հմտություններ:

**3.5. Հուզական զարգացում**

Երեխայի այս կամ այն հուզական վիճակը դրսևորվում է անհատական շարժումների միջոցով, որը կոչվում է արտահայտչական մոտորիկա: Արտահայտչական մոտորիկան ընդգրկում է դիմախաղը, մնջախաղը (կեցվածք, դիրք, ձեռքերի շարժում...), վոկալ դիմախաղը (ծայնային, տեմբր, հնչերանգ, խոսքի արագություն, արտասանություն և այլն): Արտահայտչական մոտորիկան արտացոլում է երեխայի հուզական վիճակը, որը կարող է նրան բնորոշ լինել ընդհանրապես, կամ լինել կոնկրետ իրավիճակի արդյունք: Երեխայի հուզական ոլորտի արտաքին դրսևորումների մեծ մասը, որոնք մենք կարող ենք դիտարկել երեխայի անմիջական շարժումներում, բնութագրում է երեխայի հուզական ֆոնը: Երեխայի մեծանալուն և նրա գործունեության ձևերի աճին զուգընթաց, տեղի է ունենում հույզերի ներկապնակի ընդլայնում և խորացում: Հույզերը կարող են լինել՝ մտավոր (հետաքրքրասիրություն), սոցիալական (սեր, ատելություն), գեղագիտական (գեղեցիկի, հումորի զգացում), բարոյական (պարտքի, մեղքի):

Չափորոշային պահանջներ

1. Երեխան ճանաչում է հիմնական հույզերը և զգացմունքները:
2. Կարողանում է սեփական հույզերն արտահայտել բառային և ոչ բառային հաղորդակցության ձևերով:
3. Դրսևորում է ապրումակցում ուրիշների հույզերին:
4. Մարդկանց դեմքի արտահայտություններից կարողանում է ճանաչել հիմնական հույզերը:



## 4. ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

### 4.1. Ինքնասպասարկում

Երեխային շրջապատող բոլոր մեծերը իրենց գործողություններով պիտի նպաստեն, որ երեխան ինքնուրույն անի ամեն ինչ, կարողանա կառավարել իր գործողությունները: Կազմակերպման այս ձևի հիմքում ընկած է երեխայի աշխատանքը՝ սկսած հագուստը հագնելուց մինչև խոհանոցային աշխատանք: Կարգ ու կանոնի նկատմամբ բնական, ներքին հակումը երեխային մղում է ինքն իրեն սպասարկելու, սեփական հոգսերը ինքնուրույն հոգալու, որոշակի պարտականություններ կատարելու: Ինքնուրույնությունը երեխային ստիպում է գիտակցել, որ ինքն էլ մեծի նման մարդ է: Երբ շրջապատում բոլորը դա հասկանում են, ընդունում և հարգում են երեխային, դրանով օգնում են, որպեսզի նա անկախ, ինքնուրույն լինի. այսինքն ազատ մարդ մեծանա:

#### Չափորոշային պահանջներ

1. Երեխան կապում է կոշիկների քուղերը:
2. Կարողանում է ինքնուրույն և ճիշտ օգտվել սպասքից, գործիքներից:
3. Ուտելիս ցուցաբերում է պատշաճ վարքագիծ (ծամելիս չի խոսում, օգտագործում է «բարի ախորժակ», «խնդրեմ», «ներողություն», «շնորհակալություն» բառերը, ուտում է անաղմուկ և այլն):
4. Հետևում է անձնական հիգիենայի կանոններին և պահպանում է դրանք: Առաջարկում է հագուստի, սանրվածքի սեփական տարբերակ:

### 4.2. Անվտանգություն

Որպեսզի երեխաները դրսևորեն իրենց ողջ ներուժը, անհրաժեշտ է ստեղծել ապահով, անվտանգ և խրախուսող միջավայր: Երբ երեխան զարգանում է այդպիսի միջավայրում, նրա սովորելու հիմքը շատ ամուր է լինում և հետագայում երեխայի համար բավականին հեշտ է այդ հիմքի վրա կառուցել իր գիտելիքներն ու հմտությունները: Անհատական և սոցիալական այն հմտությունները, որոնք այդ տարիքում երեխան ձեռք է բերում խաղի, հետազոտության, շփումների միջոցով, երեխային հնարավորություն են տալիս ոչ միայն ունենալ որոշակի հմտություններ, հետաքրքրություններ և ձգտումներ, այլ օգնում են նրան դառնալ տվյալ սոցիալական խմբի պատասխանատու, հարգված և լիիրավ անդամ:

Երեխայի անվտանգության համար տարածքն այնպիսին պիտի լինի, որ նա կարողանա անկաշկանդ շարժվել, խաղալ, վազել, թռչկոտել: Միաժամանակ իր գործունեության ընթացքում նա սովորում է կոորդինացնել, ուղղորդել իր շարժումները, ճիշտ օգտվել գործիքներից ու սարքերից: Նրա գործողությունները դառնում են անվտանգ և առանց իրեն վնասելու նա կարողանում է օգտվել իրեն շրջապատող իրերից:

### Չափորոշային պահանջներ

1. Երեխան ցուցաբերում է մանրէների տարածումը սահմանափակող վարք (Չազալիս և փռչտալիս ձեռքով ծածկում է բերանը, լվանում է ձեռքերը, և այլն):
2. Չի խաղում վտանգ ներկայացնող իրերի հետ: Գիտի երթևեկության զգուշացնող և արգելակող նշանները:
3. Գիտի, թե որ դեպքում պետք է զանգահարել հրշեջ ծառայության, շտապ օգնության, ոստիկանության հեռախոսահամարներով:

## **5. ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՈԼՈՐՏ**

### **5.1. Խոշոր շարժողական ոլորտ**

5-6 տարեկան երեխաները շատ ակտիվ են, և թվում է, թե նրանք շարունակ շարժման մեջ են: Նրանց ֆիզիկական զարգացումը ձևավորվում է բոլոր ոլորտներում: Երեխաները մեծ մասամբ վերահսկում են իրենց շարժումները, թեև շարժվում են շատ արագ և ճարպկորեն: Այս տարիքում նրանք կարողանում են սահուն վազել, թռչկոտել մեկ ոտքի վրա, բարձրանալ և իջնել աստիճաններով՝ ոտքերը հաջորդաբար փոխելով, կոորդինացնել իրենց շարժումները տարբեր առաջադրանքներ կատարելիս, և այլն:

Ֆիզիկական զարգացումը նպաստում է մտավոր զարգացմանը: Արագ շարժվող, ճկուն երեխան ավելի լավ է մտածում, աշխատում, խաղում ու ստեղծագործում: Այս տարիքային խմբի երեխաները անընդհատ շարժման մեջ պիտի լինեն՝ նաև այս տարիքային խմբի ֆիզիոլոգիական զարգացման առանձնահատկություններից ելնելով: Շատ կարևոր է ստեղծել այդ միջավայրը, որն անընդհատ ազատ ու անկաշկանդ տեղաշարժվելու հնարավորություն տա:

Չափորոշչային պահանջներ

1. Երեխան դրսևորում է հավասարակշռության, կոորդինացիայի և վերահսկողության աճ՝ քայլքի, վազքի, սողանցի, չորեքթաթ շարժվելու, ցատկելու, մագլցելու ժամանակ:
2. Գնդակով, պարանով, օղակով կարողանում է տարբեր վարժություններ կատարել:

**5.2. Մանր շարժողական ոլորտ**

5-6 տարեկանները կարողանում են օգտագործել իրենց ձեռքերի ու մատների մանր մկանները բավականին բարդ առաջադրանքներ կատարելու նպատակով: Նրանց ձեռքերի ուժը և կառավարելիությունը գնալով ավելի է բարելավվում: Քանի որ որոշ երեխաներ ավելի հմուտ են, քան մյուսները, ավելի կարևոր է ուշադրություն դարձնել երեխայի աճին, քան այդ տարիքին բնորոշ կոնկրետ գործողությունների կատարման մակարդակին:

Չափորոշչային պահանջներ

1. Երեխան կառուցողական մանր առարկաներից կառուցում է շինություններ:
2. Գիշտ դիրքով բռնում է մատիտը, գրիչը, վրձինը, մկրատը:
3. Նկարում է մարդ իր բոլոր դետալներով՝ գլուխ, աչքեր, քիթ, բերան, մարմին, վերջույթներ:
4. Ներկում կամ նրբագծում է պատկերը՝ դուրս չգալով սահմաններից:
5. Ծեփում է տարբեր մարմիններ:
6. Թղթից կտրելու տարբեր աշխատանքներ է կատարում:
7. Կատարում է պարզ գործողություններ՝ օգտագործելով մատների ուժն ու կառավարելով շարժումները:

**6. ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՆԿԱՏՄԱՍԲ**

**6.1. Հետաքրքրասիրություն**

Երեխաներն ունեն բնատուր հետաքրքրասիրություն և հարցասիրություն: 5-6 տարեկանները ակտիվ սովորողներ են, որոնց հետաքրքրում է իրենց ուսումնական միջավայրը և այն բազմազան նյութերը, որ գտնվում են իրենց խմբասենյակում: Նրանք հաճույքով և ոգևորությամբ են օտագործում իրենց դերախաղի, արվեստի, երաժշտության կենտրոններում եղած նյութերը՝ իրական կյանքից դրվագներ/տեսարաններ ներկայացնելու համար: Նրանք սիրում են փորձարկել նոր

տեխնիկական միջոցներ, գործիքներ, նյութեր՝ կատարելու համար այն աշխատանքը, որը գրավում է իրենց և առաջացնում արդյունքի հասնելու մեծ ցանկություն:

Մանկապարտեզը/դպրոցը՝ ընտանիքի հետ համագործակցելով, պետք է խթանի երեխաների հարցասիրությունը, օգնի նրանց հետազոտելու, նախաձեռնելու և խնդիրներ լուծելու: Մանկավարժները և ծնողները պետք է ընդլայնեն երեխայի հետաքրքրության շրջանակները, խրախուսեն հարցադրումներն ու կշռադատումները: Այդպիսի միջավայրում, ընտանիքների հետ նման իմաստալից հարաբերությունների առկայությամբ, երեխաների մոտ սովորելու նկատմամբ զարգանում է այնպիսի վերաբերմունք և հմտություններ, որոնք անհրաժեշտ են դպրոցում հաջողության հասնելու և ամբողջ կյանքում սովորողներ լինելու համար:

### Չափորոշային պահանջներ

1. Երեխան հարցեր է տալիս իրեն հետաքրքրող թեմաների մասին:
2. Հետաքրքրվում է նոր տեղեկատվությամբ և պատրաստական է ձեռք բերելու նոր փորձառություն:
3. Հետաքրքրություն է ցուցաբերում դպրոցի և դպրոցական պարագաների նկատմամբ:

## **6.2. Նախաձեռնություն**

Նախաձեռնությունը արտահայտում է երեխաների ցանկությունը՝ նպատակաուղղված առաջադրանքներ ստանձնելուն, ուսումնառական գործունեությամբ զբաղվելուն, նոր տեղեկատվություն ձեռք բերելու համար ջանքեր գործադրելուն: 5-6 տարեկան երեխաները հաճախ դժվարությամբ են նախաձեռնություն ցուցաբերում և ընտրություն կատարում: Նրանք սովորաբար նախընտրում են անել այն, ինչը իրենց մոտ լավ է ստացվում և դժվարությամբ են նախաձեռնում բաներ, որոնք իրենց շատ ծանոթ չեն: Երեխաների նախաձեռնությունը խթանելու համար պետք է ստեղծել լավ ձևավորված, նպատակային միջավայր, որտեղ դաստիարակը նպաստում է երեխաների խաղին, օգնում, որպեսզի երեխաների նոր գիտելիքները կառուցվեն նրանց ուժեղ կողմերի, հետաքրքրությունների և նախնական փորձի վրա: Երեխայի նախաձեռնությունը խրախուսելու համար դաստիարակը պետք է ստեղծի միջավայր, որտեղ երեխան չվախենա սխալվել: Նրանք պետք է հասկանան, որ սխալվելը սովորելու և հմտություններ ձեռք բերելու գործընթացի անբաժանելի մասն է: Պետք է կազմակերպել այնպիսի աշխատանքներ, որոնք չունեն միանաշանակ «ճիշտ» կամ «սխալ» լուծումներ: Անհրաժեշտ է ուղղորդել երեխայի ուսումնառությունը՝ նրան

հնարավորություն տալով կատարել ընտրություն, ցուցաբերել նախաձեռնություն և ակտիվություն իր ուսումնական գործընթացում:

Չափորոշային պահանջներ

1. Երեխան որոշում է աշխատել իրեն հետքըքրող առաջադրանքի վրա:
2. Ընտրություն է կատարում խաղի/առաջադրանքների միջև:
3. Խաղեր է նախաձեռնում մյուս երեխաների հետ:
4. Խաղերի, առաջադրանքների ժամանակ նոր մտքեր և տարբերակներ է առաջարկում:

**6.3. Մասնակցություն և հետևողականություն**

Մասնակցությունն ու հետևողականությունը արտահայտում են երեխայի կարողությունը ինչ-որ գործի մասնակցելու և սկսած գործում համառություն ցուցաբերելու այն ավարտին հասցնելու նպատակով նույնիսկ այն դեպքում, երբ հանդիպում է դժվարությունների և ստիպված է փնտրել տարբեր եղանակներ նպատակակետին հասնելու համար:

Երեխաների մասնակցությունն ու հետևողականությունը զարգացնելու նպատակով դաստիարակը պետք է հնարավորություններ ստեղծի երեխայի համար նպատակ սահմանելու և ձգտելու հասնել նպատակին: Երեխաներին կարելի է առաջարկել աշխատանքներ, որոնք պահանջում են երկար ժամանակ, ինչպես օրինակ՝ սերմեր ցանել և խնամել, որպեսզի ծլեն: Դաստիարակները և ծնողները պետք է բավարար ժամանակ և աջակցություն հատկացնեն երեխային կատարելու աստիճանաբար բարդացող խաղեր կամ առաջադրանքներ:

Չափորոշային պահանջներ

1. Երեխան ձգտում է ավարտին հասցնել սկսած առաջադրանքը՝ փորձելով և սխալվելով, ինչպես նաև դիմելով տարբեր միջոցների:
2. Գործում է ըստ իր սահմանած պլանի:
3. Ավարտին է հասցնում սկսած խաղը կամ առաջադրանքը:
4. Իր օգնությունն է առաջարկում մյուսներին:

**6.4. Ուշադրություն**

5-6 տարեկանները կարող են բավականին երկար ժամանակ (20-30 րոպե) անցկացնել այն առաջադրանքների վրա, որոնք իրենք են ընտրել: Սակայն նրանց համար ավելի դժվար է կենտրոնանալ այն առաջադրանքների վրա, որոնք իրենք չեն ընտրել կամ էլ պահանջում են հմտություններ, որոնք ներկայումս իրենց հնարավորություններից դուրս են: Երբ երեխաները հանդիպում են դժվար

առաջադրանքների, հաճախ նրանք կարիք ունեն քաջալերման, որպեսզի կարողանան շարունակել աշխատանքը: Նրանք սկսում են հասկանալ, որ սխալվելը թույլատրելի է, և նոր բան սովորելիս և նոր հմտություններ ձեռք բերելիս՝ միշտ էլ սխալներ լինում են:

Չափորոշային պահանջներ

- |   |
|---|
| <ol style="list-style-type: none"><li>1. Երեխան կարողանում է ըստ տրված օրինակի կատարել առաջադրանքը՝ պահպանելով օրինչափությունը:</li><li>2. Կարողանում է ուշադրությունը կենտրոնացած պահել որոշակի գործունեության ընթացքում (օրինակ՝ լսում է պատմվածքը և հետո հարցեր է տալիս):</li><li>3. Եթե խաղից/առաջադրանքից շեղում են, հետո նորից վերադառնում է խաղին:</li></ol> |
|---|

**6.5. Հիշողություն**

Ուշադրության կենտրոնացումը նպաստում է նաև հիշողության զարգացմանը: Երբ երեխան ուշադրությամբ աշխատում է որևէ բանի վրա, իսկ այնուհետև զրուցում է իր կատարածի շուրջ մանկավարժի կամ ընկերների հետ, ապա նա կարողանում է հիշել և հստակորեն վերարտադրել այն, ինչ արել է, լսել է, սովորել է: Մանկավարժը տարբեր հարցերի միջոցով կարող է օգնել երեխային զարգացնելու հիշողությունը: Շատ օգտակար են քննարկումները ընտանիքում, մանկապարտեզում /դպրոցում՝ կապված տարբեր էքսկուրսիաների, օրվա ընթացքում երեխայի կատարած աշխատանքների մասին: Պետք է երեխայի համար ստեղծել բնական զրույցի մթնոլորտ, որտեղ նա կարող է ներկայացնել անցուդարձը մանկապարտեզում /դպրոցում, կիսել ընկերների հետ իր տպավորությունները որևէ իրադարձության, մուլտֆիլմի և իրեն հետքեր թողոյ ալ բաների մասին:

Չափորոշային պահանջներ

- |  |
|--|
| <ol style="list-style-type: none"><li>1. Երեխան կարողանում է ճանաչել նախկինում տեսած առարկաները:</li><li>2. Կարողանում է հիշել և վերարտադրել որոշակի գործողություններ:</li><li>3. Կարողանում է (մինչև 5 անգամ կրկնելու դեպքում) հիշել և վերտադրել իրար հետ իմաստով չկապված պարզ բառեր:</li><li>4. Հիշողությամբ նկարագրում կամ ներկայացնում է իրավիճակներ և գործողություններ:</li></ol> |
|--|

## 6.6. Պրոբլեմների հիմնավորում և լուծում

Իրական կյանքում պրոբլեմները լուծելիս, երեխաները կապեր են ստեղծում այն բոլոր գիտելիքների միջև, որ նրանք ստանում են մանկապարտեզում/դպրոցում, տանը տարբեր գործունեությունների միջոցով: Պրոբլեմները հիմնավորելու և լուծելու համար երեխան կատարում է հարցադրումներ, փորձում է տարբեր ռազմավարություններ, բացատրում է իր մտածածը՝ նշելով պատճառները և հիմնավորելով իր որոշումը: 5-6 տարեկան երեխաները լուծում են խնդիրները և բացատրում են իրենց տեսակետը՝ կոնկրետ առարկաների հետ աշխատելով, պատկերներ նկարելով կամ լուծումները ներկայացնելով:

### Չափորոշային պահանջներ

1. Երեխան փորձելու և սխալվելու միջոցով լուծում է խնդիրը:
2. Առաջարկում է մեկից ավելի տարբերակներ խնդրի, հարցի լուծման համար:
3. Բացատրում է, թե ինչպես է կայացրել պարզ որոշումներ:
4. Իր բառերով կարողանում է պատմել, թե ինչպես է հասկացել տվյալ իրավիճակը:

## 6.7. Դիտարկում, հետազոտում

Աշխարհի վերաբերյալ բնական հետաքրքրասիրության պատճառով 5-6 տարեկանների մոտ հաճախ առաջանում է «ինչու՞» հարցը: Հենց որ հարցերը ծագում են, երեխաները սկսում են պատասխաններ փնտրել հիմնականում հետազոտությունների, պրպտումների, մանրակրկիտ դիտարկումների միջոցով՝ օգտագործելով իրենց զգայարանները: Երեխաները դիտարկումների հետ կապված հարցեր են տալիս, առաջարկում են բացատրություններ ներկայիս և ապագա իրադարձությունների, դեպքերի, երևույթների վերաբերյալ: Նրանք սկսում են գուշակել այն բաների պատճառները, որ իրենք դիտարկել են, թեև դրանք կարող են «գիտականորեն ճիշտ» չլինել: Դիտարկումներից հետո երեխաները մեծահասակների օգնության կարիք ունեն, որպեսզի իրենց ձեռք բերած տեղեկատվությունը դաստիարակի օգնությամբ և ուղղորդմամբ ի մի բերեն, դիտարկումները կանոնակարգեն մտքերի ձևով, որոնք էլ կօգնեն նրանց հետագա հայտնագործություններ կատարելու: Երեխաները մեծ հաճույք են ստանում, երբ դասակարգում են առարկաները, համեմատություններ են անում, բնության մեջ օրինաչափություններ են գտնում, նմանություններ և տարբերություններ են նկատում: Զգայարանների միջոցով կատարված հետազոտությունները երեխաներին օգնում են

հասկանալ առարկաների հատկությունները մանրամասնությամբ: Դաստիարակի հուշումներով երեխաները նկատում են, թե ինչից են պատրաստված առարկաները և կարողանում են նկարագրել առարկաների տարբեր հատկանիշները՝ չափը, ձևը, գույնը, նյութը, քաշը, ջերմաստիճանը, մագնիսային ձգողականությունը, սուզվելը կամ լողալը և այլն: Թեև 5-6 տարեկանները կարող են հիացած նայել, թե ինչպես է հալվում ձյունը կամ սառցակալում ջուրը, այդուհանդերձ նրանք ընդամենը տարրական գիտելիքներ ունեն նյութի պինդ վիճակից հեղուկ և գազային վիճակի անցման պատճառների վերաբերյալ:

### Չափորոշային պահանջներ

1. Երեխան նկարագրում է առարկաների հատկությունները:
2. Նկատում է շրջապատում տեղի ունեցող փոփոխությունները և դրանց պատճառահետևանքային կապերը, հաջորդականությունը:
3. Ուսումնասիրությունների ընթացքում հարցեր է տալիս՝ իրեն հետաքրքրող խնդիրը պարզելու համար:
4. Տեղեկություններ է հավաքում բնության երևույթների վերաբերյալ:
5. Տալիս է բացատրություններ բնության երևույթների վերաբերյալ:
6. Դիտարկում և նկարագրում է կենդանի էակների, բույսերի, առարկաների հատկանիշները:
7. Բացատրում է կենդանիների, բույսերի և միջավայրի միջև եղած պարզ փոխահարաբերությունները:
8. Հոգ է տանում տնային կենդանիների և բույսերի մասին:
9. Համենատում և հակադրում է առարկաներն ու երևույթները:
10. Կանխատեսումներ է անում, թե ինչ կարող է կատարվել:
11. Օգտագործում է իր 5 զգայարանները և տարբեր գործիքներ՝ դիտարկելու, տեղեկություններ հավաքելու և կանխատեսումներ կատարելու նպատակով:
12. Կատարում է պարզ փորձեր և դրանցից եզրակացություններ անում:



## ՋԱՐԳԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐ

Հանրակրթության պետական կրթակարգի (ՀՀ կառավարության 2004թ մայիսի 27-ի N20 արձանագրային որոշում) նախադպրոցական կրթության պետական չափորոշչի ձևավորման հիմնական սկզբունքներում ամրագրված է երեխայակենտրոն ուսումնադաստիարակչական և ֆիզիկական միջավայրի ստեղծման, ինչպես նաև կրթության կազմակերպման գործընթացի ու արդյունքների դիտարկման, վերահսկման անհրաժեշտությունը:

Ստորև ներկայացվում է կրթական հաստատությունում 5-6 տարեկան երեխաների համար զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջները:

### **1. Ուսումնական հաստատության**

#### ***Ֆիզիկական միջավայրին ներակայացվող չափանիշները***

##### Նպատակը.

Ներքին և արտաքին ֆիզիկական միջավայրը նպաստում է երեխայի բնական աճին և զարգացմանը՝ հետազոտության և ուսումնառության համար հնարավորությունների ապահովման միջոցով:

##### Յիմնավորում.

Թե՛ երեխաների, թե՛ մեծահասակների վարքի և զարգացման վրա ազդում է այն ֆիզիկական միջավայրը, որտեղ նրանք ապրում և աշխատում են: Ֆիզիկական տարածքի և այնտեղ գտնվող նյութերի որակը իր ներգործությունն է ունենում երեխաների ներգրավման մակարդակի և մեծահասակների հետ նրանց շփման որակի վրա: Թե՛ ներքին, թե՛ արտաքին տարածքի մեծությունը, ձևավորումը, օգտագործումը պետք է շարունակաբար գնահատվեն:

***1. Ներքին և արտաքին ֆիզիկական միջավայրը պետք է լինի ապահով, մաքուր, գրավիչ և ընդարձակ, տարածք բացօթյա խաղահրապարակում: Աշխատալազմը պետք բավարար ժամանակ ունենա մինչև երեխաների գալը նախապես պատրաստելու միջավայրը:***

Դիտարկելով երեխաների հաղորդակցությունը միմյանց հետ, նրանց ներգրավվածությունը աշխատանքներում, հստակ կարելի է որոշել, թե արդյ՞ոք տարածությունը բավարար է: Միջավայրը պետք է լինի գրավիչ: Միջավայրում պետք է ցուցադրվեն երեխաների աշխատանքները, այլ նկարներ, որոնք փակցված են երեխայի աչքի մակարդակին համապատասխան բարձրության վրա:

***2. Աշխատանքային կենտրոնները հստակորեն սահմանված և տարաբաժանված են տարածական առումով: Տարածքը դասավորված է այնպես, որ երեխաները***

***կարողանան աշխատել անհատապես, միասին, փոքր կամ մեծ խմբերով: Տարածքի դասավորությունը թույլ է տալիս, որ երեխաները ազատ տեղաշարժվեն մի կենտրոնից մյուսը՝ առանց մյուսների ուշադրությունը շեղելու:***

Տարածքի դասավորությունը նույնքան կարևոր է, որքան նրա ընդարձակությունը: Երեխաները պետք է կարողանան մի աշխատանքից անցնել մյուսին առանց մյուսների խանգարելու: Աշխատանքային կենտրոնները պետք է բաժանված լինեն այնպես, որ մի կենտրոնում աշխատող երեխաների ուշադրությունը չշեղվի մյուս կենտրոններում աշխատող երեխաների պատճառով: Լավ կազմակերպված տարածքը նպաստում է ցանկալի վարքագծի ձևավորմանը, մարդկանց միջև դրական հաղորդակցությանը, ինչպես նաև նյութերի ակտիվ կիրառմանը:

***3. Տարածքի դասավորությունը պետք է թույլ տա, որ երեխաները կարողանան զբաղվել իրենց տարիքին համապատասխան բազմազան և տարբեր տևողություն պահանջող աշխատանքներով:***

Այս չափանիշը ավելի շատ վերաբերում է աշխատանքներին, քան կենտրոններին: Օրինակ, բնագիտությունը և մաթեմատիկան պահանջում են աշխատանքներ, որոնք չեն սահմանափակվում խմբասենյակի մեկ կենտրոնով: Ուստի սենյակը պետք է դասավորված լինի այնպես, որ այդ աշխատանքները իսկապես կատարվեն: Կամ, խաղաղեկորները, դերախաղը, գրքի ընթերցանությունը պահանջում են առանձին տարածք: Արվեստի կամ խոհարարական կենտրոնը, որտեղ աշխատանքները մի փոքր ավելի թափփվածություն են առաջացնում, լավ կլինի տեղադրել ջրին մոտ:

5-6 տարեկան երեխաներին անհրաժեշտ է հատկացնել նաև առանձին հանգիստ անկյուն: Միջավայրը պետք է ունենա փափուկ պարագաներ, ինչպիսիք են՝ գորգը, բարձերը և այլն:

***4. Բավարար քանակով, բազմատեսակ և դիմացկուն նյութերը և սարքավորումը պետք է լինի երեխաների տարիքին համապատասխան և դրված լինի երեխաների համար մատչելի տեղում: Այսինքն, ցածր և բաց դարակների վրա, որտեղից երեխան կարող է ազատ և ինքնուրույն օգտվել: Նյութերը փոփոխվում են և հարմարեցվում երեխաների հետքրքրություններին:***

Նյութերը և սարքավորումը գնահատվում են տարբեր տեսանկյուններից: Անհրաժեշտ է ունենալ ինչպես բազմազան, այնպես էլ համապատասխան տեսակի նյութեր և սարքավորումներ: Երեխաներին անհրաժեշտ է ունենալ ակտիվ խաղ ապահովող սարքավորում և նյութեր, որոնք խթանում են երեխայի զարգացման բոլոր ոլորտները: Օրինակ՝ կառուցողական նյութեր, մանիպուլյատիվներ, դերախաղի պարագաներ, նկարչական նյութեր, գրքեր, ձայներիզներ և այլն: Երեխաները ավելի ստեղծագործաբար և իմաստալից են օգտագործում նյութերը, եթե դրանք հասանելի

են իրենց (ինքնուրույն կարող են վերցնել) և ժամանակ առ ժամանակ փոփոխվում են բազմազանություն ստեղծելու նպատակով:

**5. Երեխաների համար ապահովված է առանձին տեղ՝ կախելու իրենց հագուստը և պահելու իրենց անձնական իրերը:**

Անձնական իրերի համար տեղ կարելի է ապահովել տարբեր ձևերով: Սակայն և՛ մեծերը, և՛ երեխաները դա պետք է անպայման ունենան, որպեսզի կարողանան իրենց անձնական իրերը պահել և հետո հեշտությամբ գնել:

**6. Երեխաները պետք է ունենան տեղ, որտեղ կարելի է առանձնանալ:**

Այն երեխաները, որոնք երկար ժամանակ են անցկացնում խմբում, կարիք ունեն առանձնանալու և մենակ մնալու: Այսպիսի տեղ կարելի է ստեղծել՝ պլանավորելով միջավայրի դասավորությունը: Այդ տարածքը պետք է հեշտությամբ վերահսկելի լինի մեծահասակի կողմից: Առանձնանալու տարածք կարելի է ստեղծել՝ օգտագործելով այնպիսի սարքավորումներ, ինչպիսիք են՝ թունելները, խաղատնակները, կամ սենյակի մի փոքր բաժանված անկյունները:

**7. Արտաքին միջավայրը ներառում է տարբեր տիպի մակերեսներ, ինչպիսիք են՝ հողը, ավազը, խոտը, հարթ ու խորդուբորդ հատվածները, կոշտ տարածքը և այլն: Արտաքին միջավայրը կարող է լինել. ստվերոտ, բացօթյա, փորելու, ինչ-որ բան քշելու, մագլցելու, հավասարակշռելու, առանձին խաղալու: Արտաքին միջավայրը պաշտպանվում է ցանկապատով կամ որևէ բնական արգելամիջոցով, որով այն առանձնացվում է փողոցից կամ այլ վտանգներից:**

Արտաքին տարածքը մեծապես կախված է աշխարհագրական վայրից: Այս չափանիշը ընդգծում է տարատեսակ մակերեսների և սարքավորումների անհրաժեշտությունը: Եթե ստվերոտ ու թեք մակերեսներ չկան, կարելի է միջավայրում ունենալ այնպիսի պարագաներ, ինչպիսիք են ծածկերը, թեքահարթակները և այլն: Արտաքին տարածքը պետք է փողոցից կամ այլ վտանգավոր բաներից պաշտպանված լինի ցանկապատով կամ բնական արգելամիջոցներով:

## **2. Ուսումնական հաստատության ֆիզիկական**

### **միջավայրի կազմակերպումը**

Ուսումնական ծրագրի արդյունավետության գրավականներից մեկը երեխայակենտրոն ուսումնական միջավայրի ձևավորումն է: Ուսումնական միջավայրը երեխաներին տալիս է ժամանակ և հնարավորություններ իրենց շջապատող աշխարհը ճանաչելու և ստեղծագործաբար արձագանքելու աշխարհում կատարվող երևույթներին: Ուսումնական միջավայրն իր բնույթով սոցիալական է և ապահովում է խթանող ու ապահով մթնոլորտ բոլոր երեխաների համար: Այն

Երեխաներին տալիս է ժամանակ և հնարավորություններ գործելու համարձակորեն, ուսումնասիրելու և հետազոտելու իրենց աշխարհը: Երեխաները ձեռք են բերում փորձ, որը խրախուսում է շփվելու մյուսների հետ, զարգացնելու միջանձնային հմտություններ, աշխատելու և սովորելու համագործակցաբար:

Նախադարձական ուսուցման և փորձառության վրա ներգործում են հատակն ու պատերը, խմբասենյակի ձևն ու չափը, խաղահրապարակը, կահույքը, օգտագործվող նյութերն ու պարագաները, սարքավորումներն ու խաղալիքները: Գեղագիտական ճաշակով և հարմարավետությամբ աչքի ընկնող դասասենյակները լավ են անդրադառնում թե՛ երեխաների, թե՛ դաստիարակների վրա: Կահույքի դասավորությունը պատկերացում է տալիս, թե ինչ նպատակով է օգտագործվում տվյալ տարածքը: Այն նաև կարևոր է անցուդարձի, անվտանգության ապահովման, աղմուկի և դաստիարակի դիտարկման տեսանկյունից: Դպրոցի ներքին և արտաքին տարածքի նախագիծը պետք է լինի նպատակային և լավ մտածված: Լավ նախագծված միջավայրը նպաստավոր է երեխաների խմբային խաղերի, շփման, անկախ տեղաշարժման և խնդիրների լուծման համար: Երեխաները համակվում են ոգևորությամբ, և նրանց գրավում է սովորելու, նյութերը մանրազնին ուսումնասիրելու, նոր նյութեր հայտնաբերելու միտքը:

Երեխայի զարգացման համար անկաշկանդ միջավայր է պետք, որտեղ նա կկարողանա բազմակողմանիորեն արձագանքել շրջապատին: Այն պիտի բնության և սոցիալական միջավայրի համակցված մոդել լինի, որ երեխային մղի սեփական գործողությունները համաձայնեցնելու այդ միջավայրի օրենքներին:

Զարգացման բնականոն գործընթացում ուսուցումը հանդիսանում է միջոց, որն ամրապնդում է զարգացման գործընթացը և առաջ քաշում մշակութային գործոններ: Միջավայրը մեծապես նպաստում է ուսուցման գործընթացին:

Որպեսզի միջավայրը զարգացնող լինի, այն պիտի նախապատրաստել այնպես, որ

- հնարավորություն տա երեխայի անհատական զարգացմանը
- մղի երեխային ինքնաբուխ, ստեղծագործական գործունեության
- համապատասխան լինի երեխայի կարքերին և զարգացման մակարդակին

Ուսումնական հաստատության նյութական միջավայրը իր մեջ ներառում է հարմար կահավորված սանհանգույց, խաղասենյակ, ննջասենյակ (հանգստի սենյակ), ուսուցչի սենյակ, խոհանոց, հանդերձարան, այգում կամ բակում բացօթյա խմբասենյակ՝ ամառային պարտեզ:

**3. Ուսումնական հաստատության  
սանիտարահիգիենիկ պայմանները**

Ուսումնական հաստատությունը ապահովված պիտի լինի մաքրելու անհրաժեշտ միջոցներով և պարագաներով (ավել, գոգաթիակ, սրբիչներ, խոզանակներ, մաքրող-ախտահանող նյութեր և այլն), որոնք հարմար պիտի լինեն երեխայի համար, որ նա կարողանա գործածել դրանք իր գործունեության ընթացքում: Միջավայրն այնքան հիգիենիկ ու մաքուր պիտի լինի, որ երեխան կարողանա այն ինքնուրույն խնամել:

Սանհանգույցը պետք է լինին մատչելի, մաքուր, հարմարավետ, երեխայի չափերին համապատասխան, բարակ, պարզ միջնորմներով, մաքուր հատակով, թեթև դռներով, հայելիով: Այն այնպես պիտի տեղավորված լինի, որ խմբասենյակի հետ ընկալվի որպես մի ամբողջություն, և երեխան այնտեղ ազատ ելունուտ ունենա, կարողանա ինքնուրույն օգտվել դրանից: Ջուգարանակոնքերը՝ ցածր, երեխայի հասակին համապատասխան, վացարանները՝ հարմար վացվելու, ատամները վանալու համար: Յուրաքանչյուր երեխա պիտի ունենա իր անհատական կախիչը սրբիչի և այլ հիգիենիկ պարագաների համար, իր օձառը, ատամի խոզանակն ու մածուկը, ջուր խմելու իր բաժակը: Ե՛վ սանհանգույցում, և՛ խմբասենյակում փակ աղբամաններ պիտի լինեն: Խմբասենյակում փոշեկուլ ունենալը պարտադիր է: Անհրաժեշտ է նաև հարմար արկղ կամ զամբյուղ ունենալ՝ թղթի թափոնը հավաքելու համար:

**4. Խմբասենյակի ֆիզիկական  
միջավայրի կազմակերպումը**

Խմբասենյակի միջավայրը դինամիկ պիտի լինի, փոփոխելի՝ երեխայի գործունեությանը համապատասխան: Փոխողը երեխան ու դաստիարակը պետք է լինեն. նրանք միջավայրը կփոփոխեն իրենց գործունեությանը համապատասխանեցնելու նպատակով կամ գործունեության արդյունքում: Խմբասենյակը երեխաներինն է, ուստի միջավայրն իր ազդեցությունն է ունենում նրանց հետաքրքրությունների, վարքի և մշակույթի վրա: Նրանց աշխատանքները ներկայացվում են դասասենյակում: Յուրաքանչյուր այցելու կարող է հեշտությամբ նկատել նրանց գիտական փորձարկումները, հետազոտությունները: Կիսատ կառույցները կարելի է թողնել նույն տեղում այնպես, որ հնարավոր լինի շարունակել և ավարտել հաջորդ օրը:

Սարքավորումներն ու կահույքը խմբասենյակում տեղավորված պիտի լինեն այնպես, որ երեխան կարողանա առանց իրեն վնասելու խաղալ, վազել, գլորվել, աշխատել:

Պահարաններն անվտանգ, հարմարավետ, գործածական են, երեխայի չափերին և կազմվածքին համապատասխան, թեթև ու շարժական, որ հնարավոր լինի դրանք հեշտությամբ տեղափոխել, գործածել տարբեր նպատակներով:

Կահավորանքի հարմար ձևափոխման դեպքում խմբասենյակը կարող է տարբեր նպատակների ծառայել՝ տիկնիկային թատրոն, բնագիտական լաբորատորիա, երաժշտական սրահ, մարզադահլիճ, խաղասրահ, արհեստանոց, արվեստանոց և այլն: Հատուկ թեմատիկ պարագաների օգնությամբ դասասենյակը կարելի է դարձնել խանութ, վարսավիրանոց, այգի և այլն:

### ***5. Աշխատանքային կենտրոններ***

Ֆիզիկական միջավայրը բաժանվում է աշխատանքային կենտրոնների: Կենտրոնները թույլ են տալիս երեխաներին ինքնուրույն կողմնորոշվել ուսումնախաղային նյութերի և սարքավորումների ընտրության հարցում և զբաղվել իրենց համար կարևոր և իմաստալից ուսումնառական գործունեությամբ:

5-6 տարեկան երեխաների համար նախատեսված խմբասենյակներում սովորաբար պետք է լինեն հետևյալ աշխատանքային կենտրոնները.

- Գրաճանաչություն,
- Մաթեմատիկա
- Արվեստ,
- Շինարարություն,
- Խոհարարություն,
- Դերային խաղ,
- Բնագիտություն,
- Տեխնիկական կենտրոն,
- Սպորտի կենտրոն

Բացի վերը նշված կենտրոնները, խմբասենյակները ունեն նաև հանգստի անկյուն և կենտրոնական բաց տարածք: Վերջինս հաճախ անվանում են նաև հանդիպման կամ հավաքի տարածք, որտեղ ուսուցիչը հավաքում է երեխաներին որևէ բան պլանավորելու, ընթերցելու, քննարկելու, ընդհանուր ցուցումներ տալու, առավոտյան հանդիպում անցկացնելու համար:

5-6 տարեկան երեխաները ավելի շատ հակված են հմտությունների ձեռք բերելու և որևէ նյութի բովանդակությունը հետազոտելու: Նրանց ուսումնառությունը կատարվում է աշխատանքային կենտրոններում, և դա օգնում է երեխաներին խորությամբ հետազոտելու նյութը: Որպեսզի երեխաները արդյունավետ կերպով օգտվեն աշխատանքային կենտրոններից, դարակները, որոնցում կամ որոնց վրա դրվում են ուսումնական միջոցները, տեսանելի և հասանելի պիտի լինեն, որպեսզի երեխան ցանկացած պահի կարողանա այդ միջոցներով ինքնուրույն կազմակերպել

իր գործունեությունը և օգտագործել նյութերը տարբեր նպատակներով: Հարկավոր է խրախուսել երեխաների ինքնուրույն աշխատանքն այդ նյութերով:

Քանի որ կենտրոններում երեխաներն ինքնուրույն են աշխատում, դաստիարակները կարող են ստեղծել կառավարման համակարգ յուրաքանչյուր կենտրոնի օգտագործման համար: Այդ համակարգը սահմանում է կենտրոններում աշխատելու հստակ կանոններ և հնարավորություն է տալիս դաստիարակին վերահսկելու երեխաների քանակը յուրաքանչյուր կենտրոնում:

Կանոնները երեխաներին խրախուսում են հոգ տանել ուսումնական պարագաների, խաղալիքների նկատմամբ, ինչպես նաև կարգ ու կանոն պահպանել սենյակում՝ ամեն ինչ իր տեղը դնել աշխատանքի ավարտից հետո: Կենտրոնները պիտակավորված են, դարակների և ուսումնական պարագաների վրա կան պարզ գրառումներ:

Երեխան պետք է սովորի իր անհատական ակտիվ գործունեության միջոցով: Ստեղծագործելը առաջին տեղում պիտի լինի, անկախ նրա գործունեության ձևերից՝ նկարչություն, երաժշտություն, պլաստիկա, թատրոն, վարվեցողության նորմեր, խաղ, մարզանք, գիտելիք, աշխատանք: Խաղը համեմատաբար ուշ մանկության տարիներին երեխայի դաստիարակության գլխավոր, գրեթե միակ միջոցն է: Խաղի շնորհիվ երեխան մշտապես առաջ է գնում իր զարգացման մեջ, և այն խթանում է նրա սովորական վարքագիծը: Խաղի ժամանակ երեխան կարծես ինքն իրեն ավելի մեծ է զգում:

Քանի որ խաղը 5-6 տարեկան երեխաների կրթության հիմքն է, ուստի աշխատանքային կենտրոնները օգնում են դաստիարակին՝ օգտագործելով տարբեր գրավիչ նյութեր, ծրագրել տվյալ տարիքին համապատասխան աշխատանքներ և այդ ծրագրմանը ներգրավել նաև երեխաներին: Աշխատանքային կենտրոններում երեխաները սովորում են միմյանցից, բնականոն շփման միջոցով հաղորդակցվում են միմյանց հետ, լուծում են խնդիրներ, կայացնում են որոշումներ, վերարտադրում են իրենց մտքերն ու գիտելիքները, ձեռք են բերում համատեղ աշխատելու հմտություններ:

Կենտրոնները պետք է հագեցված լինեն տարբեր նյութերով, որպեսզի մի քանի երեխա միաժամանակ կարողանան օգտագործել դրանք: Մանկավարժական կազմը պետք է հետևի նյութերի թարմացմանը և դրանց համապատասխանեցմանը երեխաների ուսումնական պահանջներին: Կենտրոնները պետք է լինեն դինամիկ և փոփոխական՝ ելնելով ծրագրային խնդիրներից, ուսումնական թեմայից, երեխաների հետաքրքրություններից, անհատական կարիքներից:

## ***6. Ուսումնախաղային նյութեր***

Խմբասենյակը հազեցած պիտի լինի բազմատեսակ խաղալիքներով ու խաղերով, որ երեխան կարողանա խաղեր կազմակերպել, ազատ խաղալ ընկերների հետ, ինքնաբուխ գործունեության հնարավորություն ունենա: Խաղալիքները բազմազան պիտի լինեն՝ տունտունիկ խաղալու ամանների և խոհանոցային այլ իրերի հավաքածուներ, խաղալիք-կահույք, տիկնիկներ, լեգոներ, խաղալիք-մեքենաներ, սեղանի խաղեր, տրամաբանական խաղեր, տարբեր չափերի և գույնի գնդակներ, տարբեր գործիքներ... Խաղալիք կարող են դառնալ նաև աթոռները, սեղանները, պահարանները արկղերը: Օրինակ, աթոռները կարող են գնացքի վագոններ կամ ավտոբուսներ դառնալ, պահարանը՝ բույն, տուն:

Խմբասենյակում հարմար սեղաններ և աթոռներ պիտի լինեն, սեղաններին՝ գիրք-տետրեր, գրչամաններ, դրանց մեջ՝ մատիտներ, ֆլումաստերներ, գրիչներ, որ ուզած պահին երեխան կարողանա աշխատել, նկարել, ինչ-որ բան պատրաստել կամ պարզապես խզբզել: Բոլոր գրենական պիտույքները (գուաշ, գունավոր թղթեր, սոսինձ, մկրատ, պլաստիլին, մատիտներ, սրիչ, քանոն, տարբեր երկարության, լայնության փայտիկներ, երկրաչափական մարմիններ) նույնպես մատչելի տեղում և հասանելի պիտի լինեն: Աշխատանքային կենտրոններում կան բազմաթիվ նյութեր, որոնք երեխաներն օգտագործում են ստեղծագործաբար: Դաստիարակները պետք է մեծ ուշադրությամբ ընտրեն, որպեսզի դրանք գրավեն երեխաներին և օգնեն նրանց բավարարելու իրենց հետաքրքրությունները: Յուրաքանչյուր կենտրոն պետք է հազեցված լինի իր նշանակությանը համապատասխան ուսումնախաղային պարագաներով:

### **Գրաճանաչության կենտրոն**

Գրաճանաչության կենտրոնում պահվում են գրքեր և նյութեր՝ ունկնդրելու և գրելու պարապմունքների համար: Սա պետք է լինի խաղաղ, անաղմուկ տարածք, ուր երեխաները կարող են գրքեր նայել, մեկը մյուսի համար «կարդալ», կամ նրանց համար կարող է կարդալ ուսուցիչը կամ էլ որևէ կամավոր ծնող: Գրականությունն օգտագործվում է օրվա ընթացքում տարբեր ուսումնական նպատակներով: Երեխաներին առաջարկվում է ինքնուրույնաբար գրքեր ստեղծել, հորինել, դերակատարել, լսել զանազան պատմություններ, քննարկել գրքերի հերոսներին և այլն:



### Մաթեմատիկայի կենտրոն

Մաթեմատիկային հատկացված տարածքում պահվում են առարկաներ, որոնք երեխաները կարող են մասերի բաժանել կամ հավաքել, օրինակ՝ գլուխկոտրուկներ և փոքր խաղաղեկորներ: Այստեղ կարող են լինել խաղեր, որոնք երեխաներին օգնում են հարմարեցնել, հաշվել և դասակարգել մանր առարկաներ, ինքնուրույն հնարել խաղեր և զարգացնել լեզվական հմտությունները: Այս կենտրոնում անցկացվող պարապմունքները երեխաներին օգնում են զարգացնել իրենց մտավոր հմտությունները, փոքր մկանները և աչք-աչք կոորդինացիան: Կենտրոնի աշխատանքները նպաստում են նաև սոցիալական հմտությունների զարգացմանը համատեղ աշխատանքով, բանակցելու և պրոբլեմներ լուծելու միջոցով: Մաթեմատիկայի կենտրոնը կարելի է համալրել տարբեր ինքնաշեն և բնական նյութերով, օրինակ՝ լոբիներ, գունավոր և տարբեր չափսի կոճակներ, մետաղադրամներ, թվային և տարբեր թեմատիկ քարտեր և այլն:

### Արվեստի կենտրոն

Արվեստի աշխատանքային կենտրոնը երեխաներին խրախուսում է հետազոտելու և զարգացնելու իրենց ստեղծագործական ունակությունները, զվարճանալու նոր նյութերով, դրսևորելու իրենց զգացմունքները: Այս տարածքում օգտագործվող նյութերից կարող են լինել ներկերը, թուղթը, մկրատը, գունավոր մատիտները, կավիճը, գործվածքը կամ նյութերի կտորտանքը՝ սոսնձելու և փակցնելու համար: Այստեղ կարող են ավելացվել նաև բնական նյութեր, օրինակ՝ փայտ, տերևներ, ավազ, եղևնու կոճեր և այլն:

Այս կենտրոնում խրախուսվում է ստեղծագործական ինքնուրույնությունը, խոսքային և ոչ խոսքային հաղորդակցությունը, սեփական արժանապատվության գիտակցումը, մանր և մեծ շարժողական հմտությունների զարգացումը, մտավոր ունակությունների խթանումը: Արվեստի կենտրոնը նպաստում է երեխաների գեղագիտական դաստիարակությանը և օգնում է երեխաների մոտ սեր արթնացնելու արվեստի նկատմամբ:

### Շինարարության կենտրոն

Շինարարության կենտրոնը լցված է տարբեր չափսերի ու ձևերի խաղաղեկորներով՝ երևակայական կամ ճանաչելի պատկերներ կազմելու համար, օրինակ՝ շենքեր, աշտարակներ, ֆերմաներ, գազանանոցներ և այլն: Խաղաղեկորներով աշխատելիս երեխաները շատ բան են սովորում: Զարգանում են թվաբանական հմտությունները, ընդլայնվում են մտածելու կարողությունները, աճում են սոցիալական

հմտությունները: Աշխատանքի ժամանակ երեխաները դրսևորում են ստեղծագործական մոտեցումներ, և զարգանում է նրանց կենտրոնանալու ունակությունը: Այս կենտրոնում թե՛ մանկավարժները, և թե՛ երեխաները կարող են բազմաթիվ առարկաներ ավելացնել, ինչպես օրինակ՝ խաղալիք ավտոմեքենաներ, բեռնատարներ, կենդանիներ, մարդկային ֆիգուրներ, ինքնաթիռներ, կտորեղեն և այլն:

### Դերային խաղի կենտրոն

Խմբասենակը տիկնիկներ պատրաստելու փոքրիկ արհեստանոց (մկրատներ, ասեղներ, թելեր, ժապավեններ, կտորներ, կոճակներ, ուլունքներ, թղթեր...) և տիկնիկային թատրոն պիտի ունենա: Այստեղ կծնվեն այն տիկնիկները, որոնցով նա թատրոն, տունտունիկ և այլ խաղեր կխաղա: Արհեստանոցում դրված կլինի տիկնիկային թատրոնի արկղը կամ տիկնիկների կախիչը, փոքր, հարմար միջնորմ (շիրմա), տիկնիկներ, որոնցից ամեն անգամ տարբեր կերպարներ կարելի է ստանալ: Միջնորմը, որը հեշտությամբ կբացվի, կփակվի, ոչ միայն տիկնիկային ներկայացումների, այլև տարբեր նպատակներով կօգտագործվի: Երեխաներն իրենք կորոշեն ինչ խաղալ և որպես ինչ օգտագործել միջնորմը:

Երեխան կարող է տիկնիկային թատրոն խաղալ նաև սեղանի վրա. առանց շիրմայի, կերպարներ կարող են դառնալ օգտագործված, «մաշված» գրիչները, մատիտները, ռետինները: Երեխայի նկարագարդված ձեռքերը, մատներն անգամ կարող են տիկնիկ-կերպարներ դառնալ:

Մանր ավազով լցված ցածր կողերով (6-7 սմ բարձրությամբ) արկղը (100x100սմ) ևս տիկնիկային խաղի, տիկնիկային ներկայացման հարմար «բեմ» է: «Թատրոնում» այն իր հիմնական տեղը պիտի ունենա: Ավազի մեջ կամրացնեն ներկայացման համար իրենց պատրաստած դեկորները, ավազի մեջ ճանապարհ կբացեն, սարեր, ձորեր կսարքեն: Դա կզարգացնի նաև երեխաների տարածական մտածողությունը, կողմնորոշվելու ունակությունները:

Պատին փակցված հայելիները թատրոն-խաղի հետաքրքիր ձևի հնարավորություն են տալիս: Երեխան իրեն դիտարկելու, իր հետ զրուցելու, իր հետ խաղալու, իր շարժումներին, դիմախաղին հետևելու հնարավորություն է ունենում: Նա կարող է ներկայացում խաղալ, հայելու դեմ հեքիաթ պատմել (հեքիաթասաց դառնալ), տարբեր խաղեր կազմակերպել: Նույն բանը կարող է ընկերոջ հետ անել՝ խաղալ, կատակել, ծամածռություններ անել. հայելու առաջ նրանք ավելի ազատ ու անկաշկանդ են լինում:

Երեխայի համար թատրոնը սիրելի, զվարճալի, հետաքրքիր խաղ է, որը զարգացնում է նրա խոսքը, ստեղծագործական ունակությունները, ինքնուրույնությունը, ինքնակազմակերպման, ստեղծագործելու, խմբով խաղալու-աշխատելու հմտությունները:

### Սպորտի կենտրոն

Խաղասենյակի մի անկյունը սպորտային պիտի լինի, կամ երեխաները փոքր սպորտային սենյակ պիտի ունենան: Պատին՝ շվեդական կարճ պատեր, բասկետբոլի փոքրիկ ցանցեր, հատակին՝ մարզական ներքնակներ /մաթեր/, պտտողակներ, հեծանիվներ, ցանցարկղի մեջ՝ տարբեր չափսերի գնդակներ, պարաններ, բուլավաներ(լախտեր), սպորտային այլ խաղեր, որոնցով կարելի է խմբասենյակում խաղալ:

Սպորտային կենտրոնը կնպաստի երեխաների ֆիզիկական զարգացմանը, շարժումների կոորդինացիային, ակտիվության զարգացմանը:

### Տեխնիկական կենտրոն

Տեխնիկական կենտրոնում կարող է լինել հեռուստացույց, երաժշտական կենտրոն, թվային ֆոտոխցիկ, DVD փլեյեր. երեխաները ոչ միայն ֆիլմեր ու մուլտֆիլմեր կդիտեն, այլև՝ իրենց նկարները, միջոցառումների նկարահանումները, տարբեր տեսանյութեր՝ կապված իրենց առօրյայի հետ: Բոլոր երեխաները պիտի կարողանան տեխնիկայից օգտվել այնքան, որքան թույլ է տալիս նրանց անհատական հնարավորությունները: Դաստիարակը անընդհատ աշխատում է այդ ուղղությամբ:

### Խոհարարության կենտրոն

Երեխայի զարգացումը ներառում է նրա կյանքի բոլոր ոլորտները: Հաճախ նա իր գործունեությունը /խաղ,աշխատանք և այլն/ կազմակերպում է մեծերին նմանակելով, նրանց փորձը կրկնելով, փորձելով նմանվել նրանց: Նա դա շատ լավ է անում խոհարարության կենտրոնում: Գերադասելի է, որ այն խմբասենյակին կից լինի: Խոհարարությունը հնարավորություն է տալիս երեխաներին ժամանակ հատկացնել բնագիտություն սովորելու համար, համտեսել նոր կերակրատեսակներ, հասկանալ չափելու հետ կապված մաթեմատիկական հասկացություններ: Միասին պատրաստելը երեխաներին հնարավորություն է տալիս շփվել միմյանց հետ, սովորեցնում է կիսել ունեցածը, աշխատել զույգերով: Երեխաները վայելում են իրենց պատրաստածը միասին համտեսելու հաճույքը:

Խոհարարության միջոցով հիմնարար շատ հասկացություններ են ուսուցանվում: Մանկավարժները քննարկման են դնում գույների, թվերի, ձևերի, սննդի և բնագիտության հետ կապված հարցեր: Խոհարարությունը երեխաներին իրական կյանքի փորձառություն է տալիս:

### Բնագիտական կենտրոն

Այս կենտրոնը կբավարարի երեխայի բնագիտությանը վերաբերող հետաքրքրությունները: Խոսքը միայն բնությանը չի վերաբերում: Բացի բույսերի և կենդանիների «անկյունից», մի հարմար տարածք «լցված» կլինի տարբեր առարկաներով, որոնք կգրավեն երեխային, կշարժեն նրա հետաքրքրությունը՝ մագնիս, կողմնացույց, ավազի ժամացույց, հեռադիտակ, տարբեր պտուտակներ, լարեր, մետաղի մանրոն /մետաղափոշի/, տարբեր գործիքներ...

Մեծերի հետ /դաստիարակ, բանվոր-վարպետ, ծնող/ նորոգելով աթոռ, սեղան՝ երեխան աստիճանաբար կսովորի գործածել սղոցն ու մուրճը, դուրն ու աքցանը:

Այս կենտրոնը հաճախակի կարող է փոփոխվել՝ ըստ հետաքրքրությունների, սեզոնային փոփոխությունների և թեմատիկ պարապմունքների: Ֆիզիկայի այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ մագնիսականությունը, ջրի հատկությունները և ձգողականությունը, կարող են ներկայացվել նյութերի միջոցով:

Այս կենտրոնում փոքր չափի տարբեր սարքեր են պետք՝ քանդվող-հավաքվող, զանազան առարկաների մասեր, որոնք հավաքելով երեխան ինչ-որ բան կարող է ստանալ: Կարևոր էլ չէ, թե ինչ կստանա. կարևորը ընթացքն է. նա մտածում է, ստեղծագործում, ստեղծում, փորձեր է կատարում, իրերի, առարկաների հետ աշխատելու փորձ է ձեռք բերում, վարժվում է անվտանգ աշխատելուն:

Երեխայի գործունեությունը պետք է լինի ոչ թե պարապմունքի իրականացում, այլ ամենօրյա խաղ-աշխատանք, սովորություն, ծես: Ամեն օր ծաղիկները, ծառերը ջրելը, հողը փխրեցնելը, կենդանիներին կերակրելը, նրանց բույնը մաքրելը սովորություն պիտի դառնա, և երեխան ինքը կընտրի այդ օրվա իր անելիքը:

Եթե գործիքները ձեռքի տակ են, օրվա մի պահի նա կուզենա մի ծառից մյուսը փոքրիկ առու բացել, որ ջուրը անարգել անցնի, կամ ծառի տակի հողը կփխրեցնի, բակում թափված տերևները կհավաքի...Երեխայի կյանքն ինքը բնագիտական գործունեություն է: Պետք է միայն համապատասխան պայմաններ ստեղծել նրա համար:

Նախակրթարանը պիտի գտնվի այգում կամ գոնե կից փոքրիկ այգի ունենա, որտեղ երեխաները կկարողանան ծաղիկներ աճեցնել, ծառեր խնամել, տարբեր սերմեր ցանել, կենդանիներ պահել: Խմբասենյակի մի անկյունում ևս երեխաները կարող են

բույսեր աճեցնել, բնագիտական փորձեր կատարել, կենդանիներ պահել: Խուճբը կարող է ունենալ իր ակվարիումը, հիգիենիկ և առողջապահական կանոնները պահպանելը պարտադիր է: Բակում երեխաները հայրերի ու մայրերի հետ ծառեր, այլ բույսեր կտնկեն, կմշակեն, շրջապատը կմաքրեն:

Խուճբը պիտի ունենա գյուղատնտեսական փոքրիկ գործիքներ՝ բահեր, փոցխեր, դուլեր, ցնցուղներ, աղբաման, որոնք տեսանելի և հասանելի տեղում պիտի դրված կամ կախված լինեն: Երեխան ինքը կորոշի՝ երբ աշխատել այգում, ինչ գործ անել: Ծառ ու ծաղիկ տնկող, կենդանիներ խնամող երեխան շրջակա միջավայրը պահպանելու, այդ միջավայրում ապրելու կուլտուրա ձեռք կբերի: Բնական ճանապարհով, գործունեության ընթացքում, բնությանը զբաղվելու արդյունքում կծնավորվեն աշխատանքային հմտություններ:

Բակ-պարտեզը լավագույն խաղահրապարակն ու խմբասենյակն է ցանկացած ժամանակ:

Տարվա բոլոր եղանակներին էլ բակն առողջարար է, ֆունկցիոնալ, հետաքրքիր, զարգացնող:

#### *Ամառային բակ-պարտեզ*

Խմբասենյակի ողջ նկարագրությունը հավասարապես վերաբերում է նաև բակին: Երեխաները ողջ օրը կանցկացնեն ամառային պարտեզում՝ պաշտպանվելով խմբասենյակի խեղդող, ճնշող տոթից: Այնտեղ կքնեն, կուտեն, կխաղան, ամեն օր կլողան, ավազի վրա արևի լոգանք կընդունեն, կկոփվեն, ավազով ամրոցներ, սարեր ու ձորեր կկռուցեն, կնկարեն, երգեր ու պարեր կսովորեն, բույսերն ու կենդանիները կխնամեն... այն, ինչ երեխան խմբասենյակում կաներ, ավելի մեծ սիրով և օգուտով բակում կանի: Այստեղ ասֆալտի գոյությունը պիտի բացառվի, միայն մանր ավազ, խոտով ու ծաղիկներով ծածկված հող, դրանք ոչ միայն անվտանգ են, այլև լավ «շինանյութ» են խաղ-գործունեության համար: Բակում լողավազան պիտի լինի /սկզբի համար՝ գոնե փչվող/, հովանոցներ՝ պառկելու, արևային լոգանք ընդունելու

հարմարություն, արևի տակ տաքացող ջրի ցնցուղ, ճոճանակներ, գամակներ, պլաստմասե տարբեր հարթություններ, սեղան-աթոռներ, փչովի օղակներ, խաղալիքներ, ներքնակներ, բարձեր, նստարաններ, պտօղակներ, պարաններ, բուլավաներ, գնդակներ: Բակը պիտի ամառային լողափ լինի՝ հով, ծառածածկ, ազատ, անվտանգ:

Բակում՝ երևացող տեղում, մաքրելու միջոցներ, դույլեր, աղբաման, փոքր գյուղատնտեսական գործիքներ պիտի լինեն:

Երեխան չի հոգնում գործունեությունից /խաղից, աշխատանքից, պարապմունքից/ որը համապատասխանում է նրա ֆունկցիոնալ կենսական պահանջմունքներին:

**ՆԱԽԱԴԴՊՐՈՑԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ**

**ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ**

5-6 տարեկան երեխաների մայրենի լեզվի ծրագրի նպատակն է իրականացնել երեխաների լեզվական ուսուցումը պարապմունքների, խաղերի, ազատ գործունեության միջոցով՝ երեխաներին ծանոթացնելով շրջապատին, առօրյա կյանքին, հեքիաթներին, մանկական գրականությանը, ժողովրդական տոներին և այլն: Մայրենի լեզվի հետ կապված կազմակերպվում են բազմատեսակ և բազմաբովանդակ պարապմունքներ, սակայն բոլորի հիմքում ընկած է մեկ նպատակ՝ մշակել երեխայի բանավոր խոսքը:

Կրթական հաստատությունում կազմակերպվում են պարապմունքների հետևյալ տեսակները.

1. Ուտանավորի ուսուցում և խորացում:
2. Պատմումներ իրենց տեսակներով (պլանով կամ հրահանգներով, կիսատ թողած պատմության շարունակում, կոլեկտիվ պատմումներ, նկարով պատմումներ, ստեղծագործական պատմումներ և այլն):
3. Վերապատմում:
4. Գեղարվեստական գրականության ծանոթացում:

**Մայրենի լեզվի ծրագրային պահանջները, թեմատիկ բաշխումը ըստ  
եռամսյակների և առաջարկվող աշխատանքները**

**1-ին եռամսյակ (սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր)**

1. Պատկերացում ձևավորել պատմվածքի և նախադասության մասին:
2. Սովորեցնել նախադասությունը տրոհել բառերի, բառերը բաժանել վանկերի:
3. Գաղափար տալ հնչյունի մասին, սովորեցնել հնչերանգով առանձնացնել հնչյունը: Որոշել հնչյունների քանակը:
4. Սովորեցնել կատարել երեք և չորս հնչյուն ունեցող, հնչյունային տարբեր կառուցվածքի բառերի հնչյունային վերլուծություն, այսինքն՝ որոշել վերլուծվող բառերի հնչյունների հաջորդականությունը, անվանել

առանձնացված հնչյունները՝ բառի մեջ իրենց հնչեղության համապատասխան:

2-րդ եռամսյակ (դեկտեմբեր, հունվար, փետրվար)

1. Ամրապնդել 4-5 հնչյուններից բաղկացած, հնչյունային տարբեր կառուցվածք ունեցող բառերի հնչյունային վերլուծություն կատարելու կարողությունը, տարբերել ձայնավոր և բաղաձայն հնչյուններն ըստ արտասանության:
2. Անվանել բառեր որոշակի հնչյուններով: Սովորեցնել բառի առաջին և վերջին հնչյունները: Որոշել և բառի մեջ գտնել հնչյունը:
3. Սովորեցնել ճիշտ օգտագործել «տառ», «հնչյուն» տերմինները:

3-րդ եռամսյակ (մարտ, ապրիլ, մայիս)

1. Ամրապնդել հնչյունային տարբեր կառուցվածք ունեցող բառերի հնչյունային վերլուծություն կատարելու կարողությունը, դասակարգել ձայնավոր ու բաղաձայն հնչյունները: Անվանել բառեր տրված հնչյուններով:

**ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՔԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ**

Մաթեմատիկական և թվաբանական հմտությունների մեջ մտնում են թվերը հասկանալու և օգտագործելու, մաթեմատիկական գործողություններ, չափումներ կատարելու կարողությունը և դասակարգման, ընդհանրացման հատկանիշները: Այս հմտությունները չափազանց կարևոր են 5-6 տարեկան երեխաների համար, որպեսզի նրանք կարողանան հեշտության կողմնորոշվել մաթեմատիկական այն իրավիճակներում, որոնց հետ առնչվում են իրենց առօրյա կյանքում: 5-6 տարեկան երեխաներն ունեն կոնկրետ մտածելակերպ, ուստի նրանք սկսում են ըմբռնել մաթեմատիկական հիմնական հասկացությունները, երբ ուղղակիորեն շփման մեջ են մտնում իրենց շրջապատող իրական առարկաների հետ:

**Տարրական մաթեմատիկայի ծրագրի թեմատիկ բաշխումը ըստ եռամսյակների և առաջարկվող աշխատանքները**

1-ին եռամսյակ (սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր)

1. Մինչթվային հասկացությունների ամրապնդում. մեծ-փոքր, լայն-նեղ, շատ - մեկ, շատ -քիչ, հաստ -բարակ, բարձր-ցածր, տակ-վրա, շուտ-ուշ:
2. **Քանակ և հաշիվ:** Երեխաների մեջ ձևավորել պատկերացումներ թվերի մասին՝ մինչև 7-ը, բազմություններով կատարվող գործողությունների և պայմանական



չափումների միջոցով: Հաշվել 7-ի սահմաններում, տարբերել և անվանել 0-ից մինչև 7 թվանշանները:

Սովորեցնել կարգային հաշիվ մինչև 7-ը, տարբերել քանակական և կարգային հաշիվը: Գիշտ պատասխանել «Որքա՞ն», «Ո՞րը», «Ո՞րն է» հարցերին:

- Մեծություն:** Սովորեցնել պայմանական չափերի օգնությամբ որոշել առարկայի մեծությունը՝ երկարությունը, լայնությունը, բարձրությունը, ինչպես նաև հեղուկ և սորուն մարմինների ծավալը:
- Երկրաչափական ձևեր և մարմիններ:** Սովորեցնել տարբերելու և անվանելու հետևյալ երկրաչափական ձևերը. քառակուսի, շրջան, եռանկյունի, ուղղանկյուն, խորանարդ, գլան, կոն:
- Կողմնորոշում տարածության մեջ:** Ամրապնդել և խորացնել տարածական պատկերացումները. ձախ-աջ, վերև-ներքև, հեռու-մոտիկ, առաջ- հետ:
- Կողմնորոշում ժամանակի մեջ:** Ամրապնդել և խորացնել ժամանակի պատկերացումները՝ գիշեր- ցերեկ, առավոտ, կեսօր, երեկո, այսօր, վաղը:

### 2-րդ եռամսյակ (դեկտեմբեր, հունվար, փետրվար)

**Քանակ և հաշիվ:** Ձևավորել պատկերացումներ թվի մասին 10-ի սահմանում: Շարունակել սովորեցնել հաշվել մինչև 10-ը, տարբերել թվանշանները մինչև 10-ը, համեմատել հաջորդական թվերը 10-ի սահմանում: Սովորեցնել, թե ինչպես անհավասարությունից կարելի է ստանալ հավասարություն:

- Մեծություն:** Սովորեցնել չափելու ժամանակ առանձնացնել առարկայի մի մասը, որը հավասար է պայմանական չափին, որոշել՝ քանի անգամ է պայմանական չափը տեղավորվում չափվող օբյեկտի մեջ: Օգտագործել պայմանական չափերի տարբեր միավորներ: Չափումներն օգտագործելիս ցույց տալ թվի քանակական կազմը 5-ի սահմանում՝ առանձին միավորներով:
- Երկրաչափական ձևեր և մարմիններ:** Տալ պատկերացում քառանկյան և նրա հատկանիշների մասին՝ չորս անկյուն, չորս կողմ (տարբեր քառանկյունների օրինակներով), գլան, խորանարդ, գունդ:
- Կողմնորոշում տարածության մեջ:** Սովորեցնել կողմնորոշվել ցույց տրվող ուղղությամբ, որոշել իր տեղը՝ ըստ տրված պայմանի (կանգնիր այնպես, որպեսզի ձախ կողմում լինի տիկնիկը, առջևում՝ մեքենան) :
- Կողմնորոշում ժամանակի մեջ:** Սովորեցնել հաջորդականորեն անվանել շաբաթվա օրերը:

### 3-րդ եռամսյակ (մարտ, ապրիլ, մայիս)

1. **Քանակ և հաշիվ:** Հմտացնել հաշվել մինչև 10-ը: Սովորեցնել տարբերել և անվանել թվանշանները 10-ի սահմանում: Ձևավորել պատկերացում այն մասին, որ թիվը կախված չէ առարկաների մեծությունից, դրանց միջև եղած տարածությունից, դրանց տարածական դասավորությունից և հաշվելու ուղղությունից (ծախից աջ, կամ աջից ձախ, խառը դասավորությունից): Համրանք ցանկացած թվից, վարժությունների լուծում:
2. **Մեծություն:** Սովորեցնել դասավորել առարկաները աճող և նվազող կարգով՝ ըստ երկարության լայնության, հաստության, (ամենալայն, նեղ, ավելի նեղ, ամենանեղ):
3. **Երկրաչափական ձևեր և մարմիններ:** Սովորեցնել առարկաների մեջ տեսնել երկրաչափական ձևեր (օրինակ՝ գնդակը և ձմերուկը նման են **գնդի**, ափսեճ և կոճակը՝ շրջանի, սեղանը, պատը և առաստաղը՝ ուղղանկյան, թաշկինակը քառակուսի է, գլխաշորը՝ եռանկյուն, գլորուսը՝ գնդաձև և այլն):
4. Սովորեցնել տեսնել պարզ օրինաչափությունները, տեսակավորել, խմբավորել, ընդհանրացնել:
5. **Կողմնորոշում տարածության մեջ:** Սովորեցնել բառով որոշել այս կամ այն առարկայի դիրքը մյուսի նկատմամբ (տիկնիկի աջ կողմում նապաստակն է, տիկնիկից ձախ՝ ձիուկը): Ձևավորել տարածության մեջ կողմնորոշվելու ունակություն, քայլքի, վազքի, ժամանակ կարողանալ փոփոխել շարժման ուղղությունը:
6. **Կողմնորոշում ժամանակի մեջ-** Սովորեցնել որոշել, թե երեկ շաբաթվա ո՞ր օրն էր, թե ի՞նչ օր է այսօր, ի՞նչ օր կլինի վաղը, խորացնել ժամանակի պատկերացումները՝ ընթաց, ժամ, շաբաթ, ամիս, տարի հասկացությունների վերաբերյալ:

### **ԵՍ ԵՎ ԻՄ ԱՇԽԱՐՀ**

5-6 տարեկանների գործունեությունը իրականացվում է բնության մեջ՝ կենդանի և անկենդան բնության տարբեր երևույթների հետ շփվելով (թանգարաններ, կենդանաբանական այգիներ, բուսաբանական այգիներ այցելելով, անտառների, գետերի, քարերի, կենդանիների, թռչունների և այլնի հետ շփվելով):

#### 1-ին եռամսյակ (սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր)

##### **1. Բնության մեջ գործող փոխադարձ կապը:**

- Դիտումներ բնության մեջ (էքսկուրսիա), մանկապարտեզի կենդանի անկյունում և պարտեզում: Աշնանը բնության մեջ կատարվող

փոփոխությունները: Բուսական աշխարհ՝ խոտեր, ծառեր, թփեր, ծաղիկներ, կենդանական աշխարհ, ընտանի և վայրի կենդանիներ, թռչուններ և ձկներ:

- **Երկիր մոլորակը:** Իմ փողոցը: Իմ բակը: Իմ մանկապարտեզը: Իմ քաղաքը/գյուղը: Հայաստան աշխարհը:
- **Շրջակա միջավայր:** Ո՞վ եմ ես: Իմ ընտանիքը:
- Պլաստիլինից կենդանիների, սնկերի, ծաղիկների ծեփում, նկարչություն, երաժշտական գործունեություն՝ «Ծաղիկները, կենդանիները երգերի մեջ» թեմայով, խաղեր, հանելուկ-առաջադրանքներ:

## **2. Նյութերի շրջանառությունը բնության մեջ:**

- Դիտումներ բնության մեջ: Աշնանը բնության մեջ կատարվող փոփոխությունները: Տերևների քայքայվելը և վերածվելը հողի, ծանոթություն անձրևաորդերի հետ, նրանց նշանակությունը բնության մեջ և պահպանման խնդիրները:

## **3. Արևը և նրա նշանակությունը բույսերի համար:**

- Բանաստեղծությունների ընթերցում՝ նվիրված արևին, նամակներ և բանավոր ուղերձներ արևին, նկարչություն, հանելուկ-առաջադրանքներ, վիկտորինաներ:

### 2-րդ եռամսյակ (դեկտեմբեր, հունվար, փետրվար)

#### **1. Ջուրը, նրա շրջանառությունը, տարբեր վիճակները:**

- Փորձ ջրի կաթիլի հետ: «Կաթիլի ճանապարհորդությունը» մուլտֆիլմի դիտում, ջրի մասին հեքիաթի ընթերցում, դիտումներ շենքում, փողոցում, պուրակում, պարտեզում:

#### **2. Գունավորման դերը կենդանիների կյանքում:**

- Ջրույց այն կենդանիների մասին, որոնք տարբեր պայմաններում փոխում են իրենց գույնը: Օրինակ, ինչո՞ւ մողեսները գարնանը և ամռանը կանաչ գույն են ստանում, իսկ աշնանը՝ հողի գույն:

#### **3. Կենդանիների տեսակները, նրանց դերը համակեցության մեջ:**

- Ջրուցել, ընթերցել գրքեր, դիտել ֆիլմեր կենդանիների վարքի, սնունդի, ապրելակերպի մասին:

#### **4. Բնության բազմաձևության պահպանման անհրաժեշտությունը:**

- Դիտումներ բնության մեջ: Մարդը որպես բնության մի մասնիկ, նրա կապը կենդանական և բուսական աշխարհի հետ

### 3-րդ եռամսյակ (մարտ, ապրիլ, մայիս)

**Դիտումներ բնության մեջ (էքսկուրսիա):** Գարնանը բնության մեջ կատարվող փոփոխությունները: Բնության երևույթները: Կենդանի և անկենդան բնության փոխկապակցությունը: Քար, հող, ջուր, օդ: Առողջ ապրելակերպ: Բնությունը և մարդը: Բնության անտեսանելի թելերը: Միջատներ, ձկներ, սողուններ, երկկենցաղներ, թռչուններ: Հատապտուղներ, մրգեր, բանջարեղեն: Անտառ: Հաց: Բնապահպանական ակցիաներ: Խաղ-մրցույթներ, վիկտորինաներ:

**ԿԵՐՊԱՐՎԵՍՏ (ՆԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ, ԾԵՓ, ԱՊԼԻԿԱՑԻԱ ) ԵՎ  
ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

Գեղագիտական դաստիարակությունը հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթաց է՝ ուղղված երեխայի գեղագիտական զգացումների, կյանքում և արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը:

Գեղագիտական ուսուցման միջոցով իրականացվում են երեխաների գեղագիտագեղարվեստական ընդունակությունների զարգացման ու կարողությունների ձևավորման, գեղագիտական դաստիարակության խնդիրներ: Ծրագրի նպատակն է երեխաների մեջ ամրապնդել և կատարելագործել կերպարվեստային գործունեության այբուբենը՝ գծանկարի, գունանկարի, ծեփակերտման, ապլիկացիայի, դեկորատիվ կիրառական աշխատանքի հիմունքները:

**Կերպարվեստի ծրագրի թեմատիկ բաշխումը ըստ եռամսյակների և  
առաջարկվող աշխատանքները**

**1-ին եռամսյակ (սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր)**

- Ծանոթացում կերպարվեստին:** Ծանոթացնել հայ և այլազգի անվանի գեղանկարիչների ստեղծագործություններին. Մ.Սարյան - «Ծաղկեփունջ», «Նատյուրմորտ», «Մրգեր», Գ. Գյուլբյան՝ «Աշուն», Հ. Կոջոյան՝ «Աշուն», Ի. Շիշկին՝ «Առավոտը սոճիների անտառում», Ի. Լևիտան «Աշուն»: Ծանոթացնել ազգային ժողովրդական դեկորատիվ կիրառական արվեստի ստեղծագործություններին. փայտարվեստ, գեղանկարչություն, քանդակ, գրաֆիկա, մանրանկարչություն, բրուտագործություն, խեցեգործություն, ասեղնագործություն, մաքրամե և այլն:

2. **Փոքր չափի քանդակներ:** Սովորեցնել երեխաներին պատրաստել տարբեր ֆիգուրներ, կենդանիների, բույսերի պատկերներ: Իրական երևույթների և առարկաների նկատմամբ զարգացնել հուզական-զգայական վերաբերմունք, գեղագիտական ճաշակ և ընկալում:
3. **Նկարչություն:** Սովորեցնել նկարել բնօրինակից (ծաղիկներ, մրգեր, բանջարեղեն, խաղալիք), հիշողությամբ և երևակայությամբ: Նպաստել երեխաների տեսողական հիշողության, տարրական պատկերացումների, ստեղծագործական երևակայության զարգացմանը: Արտահայտիչ կերպով տալ ձևի գծանկարը, հարաբերական մեծությունը և առարկայի դիրքը: Հիմնվելով գույների (սև, սպիտակ, կարմիր, կապույտ, դեղին, կանաչ, շագանակագույն, մանուշակագույն և դրանց երանգները) իմացության վրա կարողանալ ընտրել գունային գամմա՝ պատկերը հաղորդելու համար:
- Սովորեցնել բնությունից արված դիտումների հիման վրա պատկերել «Աշունը անտառում, այգում կամ պարտեզում»: Վերարտադրել մեծերի աշխատանքը (օրինակ՝ այգեգործություն, բերքահավաք, շինարարություն), հասարակական իրադարձություններ (օրինակ՝ հրավառություն, գունավոր դրոշներ, տոնական փողոց), օգտագործելով պատկերավոր արտահայտչականության միջոցներ՝ ձև, կոլորիտ, կոմպոզիցիա:
- Սովորեցնել կազմել դեկորատիվ նախշեր՝ օգտագործելով սպիտակ և գունավոր ֆոններ: Մշակել մատիտով հավասարաչափ (առանց ուժեղ սեղմելու) ուղիղ, թեք, հորիզոնական, ալիքաձև գծիկներ քաշելու կարողությունը, վրձինով աշխատելու հմտությունը՝ այն նախապես լավ հագեցնելով ներկով: Սկզբնական շրջանում աշխատել բաց գույներով:
- Երեխաների մոտ գունազգացողությունը ամրապնդելու նպատակով կազմակերպել «խաղ գույներով»: Օգտագործել սպիտակ թուղթ, ջրաներկ, գուաշ և/կամ գունավոր մատիտներ:
4. **Ծեփ:** Սովորեցնել բնօրինակից և պատկերացմամբ ծեփել ծանոթ առարկաներ (բանջարեղեն, միրգ, հատապտուղ, ծաղիկներ, խաղալիքներ, սիրված հեքիաթի հերոսներ)՝ տալով բնորոշ կողմերը: Ունենալ պլաստիլին, կավ, կերտածող՝ նախշեր անելու համար: Տալ պատկերվածին բնորոշ արտահայտիչ շարժումները՝ կառուցողական և քանդակագործական ձևերով, մասերով և ամբողջական կտորով: Սովորեցնել երեխաներին դեկորատիվ հարթաքանդակ կատարել:
5. **Ապլիկացիա:** Սովորեցնել կատարել և փակցնել կլոր ու օվալաձև առարկաների պատկերներ: Օրինակ՝ սունկ, աշնանային տերևներ, հավի

ճտեր և այլն: Կազմել պատկերների առանձին մասերից՝ Հայաստանի Հանրապետության պետական դրոշը, ծաղիկներ, տերևներ, աշնան գորգ: Օգտագործել գունավոր թղթեր և բութ ծայրերով մկրատներ: Սովորեցնել թուղթը ծալելու միջոցով պատրաստել նավակ, ինքնաթիռ, զամբյուղ: Սովորեցնել պատրաստված խաղալիքները նախշազարդել իրենց ցանկությամբ: Սեղանային թատրոնների համար սովորաթղթից կտրել տարբեր սովերապատկերներ և գունազարդել:

6. **Կառուցողական աշխատանք:** Սովորեցնել կառուցողական նյութերով կառուցել շինությունների նմուշներ՝ օգտվելով դաստիարակի տված օրինակից: Առանձնացնելով հիմնական մասերը, սահմանել այդ մասերի տարածական տեղադրությունը մեկը մյուսի նկատմամբ:
7. **Թղթի աշխատանք:** Սովորեցնել թղթից պատրաստել տարբեր ծանոթ առարկաներ: Օրինակ՝ էջանիշ, տուփ (կափարիչով, առանց կափարիչի), հովհար, զամբյուղ, նավակ, ծաղիկ, աղաման, գորգ, թռչող նետ, գլխարկ, գիրք և այլն:
8. **Աշխատանք բնական նյութերով:** Ծանոթացնել դեկորատիվ բույսերին, նրանց անվանումներին, գույնին, ձևին: Դեկորատիվ բույսերից կազմել ծաղկեփունջ:

## 2-րդ եռամսյակ (դեկտեմբեր, հունվար, փետրվար)

1. **Ծանոթացում կերպարվեստին:** Երեխաներին ծանոթացնել կերպարվեստի տարբեր տեսակներին՝ գեղանկարչություն, գրաֆիկա, քանդակ, դեկորատիվ կիրառական արվեստ: Ծանոթացնել տարբեր նյութերից (փայտ, խեցի, հախճապակի, կուժ, կուլա, գավաթ) պատրաստված մանր չափի քանդակներին, դեկորատիվ կիրառական արվեստի նմուշներին (գլխաշոր, սփռոց, անձեռոցիկ, շալ և այլն):
2. **Նկարչություն:** Սովորեցնել նկատել և ասել առարկաների մեծության և համաչափության տարբերությունները՝ բարձր–ցածր, նեղ–լայն և այլն: Օրինակ՝ բարձր ծառ, բարձր շենք, ցածր տուն, լայն փողոց և այլն: Տալ մարդկային ֆիգուրայի ոչ բարդ շարժումները՝ փոխելով ձեռքերի և ոտքերի դիրքը (օրինակ՝ երեխան զբաղվում է ֆիզկուլտուրայով, աղջիկը պարում է), հասնելով կերպարի արտահայտչականությանը: Սովորեցնել նկարում տալ բազմազան սյուժեներ, պատկերներ, դեպքեր շրջապատող կյանքից, հեքիաթների սյուժեներ (օրինակ՝ ծմեռը քաղաքում, անտառում և այլն):

3. **Նկարչություն երևակայությամբ:** Երեխաներին խրախուսել ստեղծել «Չեքիաթային հյուրը» կամ այլ սյուժետային պատկեր/տեսարան: Օգտագործել գունավոր թուղթ, գուաշ: Պայծառ գույների միջոցով ստեղծել տոնական տրամադրություն:
4. **Թեմատիկ նկարչություն:** «Տոնածառը մանկապարտեզում», « Ձմեռ»:
5. **Նկարչություն բնօրինակից:** Երեխաների ցանկությամբ սովորեցնել կազմել նախշեր տարբեր ձևի թղթերի և ուրվանկարների վրա, որոնք պատկերում են կենցաղային առարկաներ՝ սափորներ, շրջագգեստ, ձեռնոց և այլն: Ցուցադրել դեկորատիվ արվեստի նմուշներ՝ ասեղնագործ սփռոց, անձեռոցիկ, սրբիչ, և այլն: Երեխաներին առաջարկել բուսական և կենդանական աշխարհի պարզագույն ձևերից՝ իր նախասիրությամբ պատրաստել ձևավոր նվեր, հուշանվերներ և բացիկներ:
6. **Ծեփակերտում:** Սովորեցնել կերպարի արտահայտչականությունը, առարկաների բնորոշ նշանները, պահպանել մասերի հարաբերական մեծությունը, ամրացնել ծեփված պատկերի (կենդանիներ, թռչուններ) մասերը՝ իրար սեղմելով, ամրացման տեղերը հարթեցնելով: Ձողիկի օգնությամբ տալ կերպարների բնորոշ գծերը: Մեկ ամբողջական կտորից (սեփական ցանկությամբ) մասերով ծեփակերտել տարբեր առարկաներ, կենդանիներ: Ծեփակերտման ժամանակ օգտագործել լրացուցիչ նյութեր՝ մետաղալար, չորացրած տերևներ և այլն: Գունավորել և նախշազարդել գիպսից պատրաստված մանրաքանդակները:
7. **Ապլիկացիա:** Սովորեցնել հարմոնաձև ծավված թղթից միանգամից կտրատել միանման մի քանի ձև և կրկնակի ծավված թղթից՝ համաչափ ձևի առարկաներ. ամանեղեն, խաղալիք և այլն:
8. **Գունավոր թղթից խճանկարային պաննո:** Կոլեկտիվ աշխատանքի միջոցով տարբեր գույնի առանձին թղթերը նախշազարդել և պատրաստել մեկ ընդհանուր խճանկարային աշխատանք:
9. **Թղթի աշխատանք:** Սովորեցնել պատրաստել կարապ, բաժակ, դրամապանակ, օդապարիկ, նապաստակ, լապտեր, ուլունքներ, տոնածառի խաղալիքներ, բացիկ, դիմակ:
10. **Աշխատանք բնական նյութերով:** Հարթ և ծավալային, չոր բնական նյութերից կազմել փունջ: Բնական նյութերից պատրաստել դեկորատիվ զարդանախշեր, դրանցից կազմված կոմպոզիցիաներ և օգտագործել տարբեր միջոցառումների ժամանակ սրահները ձևավորելու նպատակով:

3-րդ եռամսյակ (մարտ, ապրիլ, մայիս)

- 1. Ծանոթացում կերպարվեստին:** Ծանոթացնել մանկական գրքի նկարազարդումների արտահայտչական միջոցներին: Գ. Խանջյանի «Յեքիաթների նկարազարդումներ», Յ. Կոչոյանի «Հագարան բլբուլ» հեքիաթի ձևավորումներին: Ձևավորումների և նկարազարդումների ընտրությունը թողնել դաստիարակի հայեցողությանը: Սովորեցնել նկատել գրքի ձևավորման առանձնահատկությունները և նկարի արտահայտչական միջոցները՝ կատարված գրչով, մատիտով, ջրաներկով:
- 2. Նկարչություն:** Սովորեցնել երևակայությամբ և բնօրինակից պատկերել առարկաներ, բույսեր, խաղալիքներ, ծաղիկներ, ճյուղեր: Խրախուսել՝ նկարում արտացոլելու զարմանալի բնությունից ստացած տպավորությունները՝ սառցաշարժ, թռչունների վերադարձ, ծաղկող այգի, մարգագետին, մարդկանց աշխատանք և այլն:

Սովորեցնել ընտրել թղթի չափսը, ֆոնը և ներկերի զուգորդությունները՝ զարմանալի երևույթներին համապատասխանող կոլորիտը տալու համար, օգտագործել կոնտրաստ գույներ և երանգներ:

Սովորեցնել նկարել տարբեր նախշեր, որոշակի համաչափությամբ դասավորել ծաղիկները, տերևները, պտուղները: Նկարել ծաղիկներով, ալիքածև և աղեղնածև նախշերով, հորինել նախշեր գլխաշորի, անձեռոցիկի, սրբիչի համար:
- 3. Ծեփակերտում:** Դիտել և պլաստիլինով, կավով բնօրինակից ծեփակերտել մրգեր, հատապտուղ, բանջարեղեն, ծաղիկ, խաղալիքներ, տարբեր ընտանի կենդանիներ և այլն:

Բարձրաքանդակային ձևերի օգտագործմամբ քառակուսու (դեկորատիվ սալիկներ, տակդիր և այլն) մեջ կազմել նախշ՝ օգտագործելով բուսական ձևերը: Ծեփակերտված առարկաների վրա կատարել նախշեր ազգային նախշազարդումների օրինակով:

Ծեփակերտել երեխաների նախընտրած հեքիաթների թեմաներով:

Սովորեցնել աշխատանքները չորացնել, ներկել և օգտագործել խաղերի ժամանակ: Կարելի է ներկել ջրաներկով, գուաշով: Ներկի գույնը չի խամրի և չի թափվի, եթե ներկի մեջ լցնել սոսնձից և կավիճից պատրաստված լուծույթ:
- 4. Ապլիկազիա:** Ամրապնդել թղթից տարբեր ձևեր կտրելու հմտությունը: Սովորեցնել ճիշտ օգտագործել ուրվագծային կտրման ձևերը՝ կերպարը արտահայտիչ դարձնելու համար:



Սովորեցնել պատրաստել կոմպոզիցիա (ծաղկած այգի, գարնանային գորգ, բացիկներ, հուշանվերներ, գնացք և այլն) կտրելու և փակցնելու միջոցով, ինչպես անհատական, այնպես էլ ոչ մեծ խմբերով: Աշխատանքները կատարելիս օգտագործել լրացուցիչ նյութեր՝ թել, կտոր, ծաղկաթերթիկներ և այլն: Թղթի ծալման և կտրման եղանակով պատրաստել տարբեր ինքնաշեն խաղալիքներ՝ լոտոներ, դոմինո: Տարբեր երկրաչափական ձևերից պատրաստել գլուխկոտրուկներ՝ եռանկյունի, քառակուսի, ուղղանկյունի:

5. **Թղթի աշխատանք:** Սովորեցնել պատրաստել ձուկ, մատնային թատրոնի կերպարներ, վզնոց, հոլ, քամանիվ, աքաղաղ, գորտ, զարդատուփ:
6. **Կառուցողական աշխատանք:** Սովորեցնել կառուցել տարբեր շենքեր, կամուրջներ, բլրակներ, մեքենաներ և այլն: Կառուցել ոչ միայն նմուշի հիման վրա, այլ նաև դաստիարակի խոսքային նկարագրությամբ: Կատարել ավելի բարդ բովանդակություն ունեցող շինություններ՝ փողոց, կենդանաբանական այգի, կայարան, մետրոպոլիտեն և այլն:

### **ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ**

Ֆիզիկական դաստիարակության նպատակն է ձևավորել երեխաների շարժողական կարողություններն ու հմտությունները, նպաստել առողջության պահպանմանն ու ամրապնդմանը, օրգանիզմի կոփմանը, ճիշտ կեցվածքի ձևավորմանը, զարգացնել հետաքրքրություն՝ երեխային մատչելի շարժողական գործունեության զանազան ձևերի նկատմամբ, ձևավորել անձի բարոյականային հատկանիշներ (ինքնուրույնություն, ակտիվություն, մարդկային փոխհարաբերությունների կուլտուրա) և ֆիզիկական որակներ (ճարակություն, արագաշարժություն, դիմացկունություն և այլն):

### **Ֆիզկուլտուրայի ծրագրի թեմատիկ բաշխումը ըստ եռամսյակների և առաջարկվող աշխատանքները**

#### **1-ին եռամսյակ (սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր)**

1. **Քայլք:** Քայլել դահլիճի հրապարակի տարածքով ամբողջ խմբով: Շրջանցել հատակին դրված առարկաները, բուլավաները (լախտերը): Քայլքի ընթացքում վերցնել մարզափայտիկներն արկղից և դասավորել ավելի հեռու դրված արկղի մեջ: Քայլել սենյակի եզրերով միաշարքով և զույգերով: Շարժախաղեր՝ «Արագ վերցրու -արագ դիր», «Լայն քայլիր», «Շրջադարձ», (զույգերով), վարժություն՝ «Փայտիկն ուսին»: Քայլել սենյակի եզրերով ըստ դաստիարակի ազդանշանի՝ փոխելով ուղղությունը (միաշարքով):

- ա) Շրջանցել սենյակում (դահլիճում) դասավորված աթոռակները:
- բ) Դաստիարակի «*դարձիր*» ազդանշանով՝ շրջվել և շարունակել քայլքը:
- գ) Շարժախաղ՝ «Շրջադարձ շրջանում»:
2. **Վազք:** Վազել միմյանց հետևից (սենյակի) դահլիճի անկյուններով, եզրերով: Ցրված վազք: Օգտվել ամբողջ տարածությունից: «Արագ վերցրո՛ւ-արագ դի՛ր» Ցրված վազքից հետո դաստիարակի ազդանշանով կազմել միաշարք օղակներ: Շարժախաղ դաստիարակի ընտրությամբ: Վազել տարբեր տեմպերով. (արագ և դանդաղ), վազք ցրված: Վազք երաժշտության և թմբուկի հարվածներով:
  3. **Հավասարակշռություն:** Քայլքից, վազքից հետո ազդանշանով կանգնել և կատարել որոշ առաջադրանքներ: «Կատարիր ֆիզուրա» (պատկեր): Շարժախաղեր՝ «Բռնոցի», «Մկան թակարդ», «Զույգերով վազք»; «Փոխենք տեղերը», «Անկյունիկներ» շարժախաղերի միջոցով: Քայլել մարզանստարանի վրայով, մարզանստարանի լայն և նեղ կողմերով: Քայլել հատակին դրված պարանի վրայով: Ուղիղ հատակին դրված շրջանաձև պարանի վրայով, ավազե պարկը գլխին: Անսպասելի ազդանշանով կանգառներ վազքից հետո:
  4. **Ցատկեր:** Թռչկոտել տեղում: Հեռացատկ տեղից 50-60սմ: Շարժախաղ - «Կարթ»: Տեղից ցատկ երկարություն (50-60 սմ): Թափավազքից ցատկ բարձրություն (40սմ)բարձրացատկ: Ցատկ մեկ ոտքով (աջ, ձախ): Կրկնել անցած նյութը և տալ նոր հանձնարարություններ՝ «Կանգնիր մեկ ոտքի վրա», «Մեկ հարվածով կանգնել, երկու հարվածով՝ վազել»:
  5. **Նետումներ:** Նետել գնդակը վերև, գետնին, բռնել զույգ ձեռքով, նետել աջ և ձախ ձեռքերով: «Բռնիր գնդակը»: Բռնել գնդակը 5-8 անգամ՝ առանց զցելու: Նույնը նաև հատակին (գետնին) նետելով: Խաղեր գնդակով: Վարժության ձևով: Գնդակը զցել վեր, գետնին և բռնել զույգ ձեռքով: «Մի ոտանի արագիլ», «Զալիկ-մալիկ» հայկական ժողովրդական խաղեր: Նետել, բռնել գնդակը, զցելով 5-8 անգամ: Նույնը կատարել՝ գնդակը հատակին հարվածելով: Մտցնել բարդացումներ. նետել գնդակը վեր, ծափ տալ առջևում և բռնել, նետել շրջանի կենտրոնում կանգնած ընկերոջը:
  6. **Սողանցում-մազլցում:** Սողանցել 60-50 սմ պարանի տակից: Մազլցել մարզապատի վրա: Շարվել միաշարքով հասակի կարգով: Մազլցում մարզապատի վրա կից և փոփոխական քայլքով: Ցրված վազքից և միաշարքով քայլքից հետո կազմել շրջան : Շարժախաղ՝ «Հրշեջները սովորում են»:

7. **Շարուններ:** Շարվել տողանով: Շարվել օղակներով: Ու՞մ օղակը գեղեցիկ և արագ կշարվի»: Առավոտյան մարմնամարզության ժամանակ, քայլքից հետո շարվել միմյանց հետևից: Կրկնել շարունները՝ օղակներով, շրջանաձև միաշարք: Շարվել օղակներով: Շարվել շրջանաձև՝ ձեռքերը կողմ պարզած չափով, առանց ձեռքերը բռնելու:

2-րդ եռամսյակ (դեկտեմբեր, հունվար, փետրվար)

1. **Քայլք և վազք:** Քայլել և վազել շրջանաձև՝ առանց ձեռքերը բռնելու: Շարժախաղ՝ «Գնդակը վարողին»: Քայլքի ընթացքում կազմել շրջան և մի քանի շրջաններ: Վարժության ձևով: Քայլք զույգերով՝ ձեռքերն առանց բռնելու: Շարժախաղեր՝ «Լսիր ազդանշանը», «Գտիր քեզ զույգ», «Շրջադարձ»:
2. **Հավասարակշռություն:** Քայլքից ու վազքից հետո անսպասելի ազդանշանով կատարել տարբեր խնդիրներ՝ կանգնել մի ոտքի վրա, արագ կքանստել, ցրված վազել տարբեր ուղղություններով: Քայլք զուգահեռ՝ հատակին դրված պարանի միջով(15-12 սմ):
3. **Ցատկեր:** Ցատկ երկարություն տեղից ու թափավազքից՝ հեռացատկ, թռչկոտել տեղում՝ փոխելով ոտքերը: Անցած ամսվա նյութերի կրկնություն: Շարժախաղեր՝ « Թմբից-թումբ», «Ով ավելի քիչ կցատկի»:
4. **Նետումներ:** Գնդակը նետել միմյանց՝ շրջանաձև և զույգերով 1-2 մ հեռավորության վրա: Խաղեր զույգերով, «Գնդակի դպրոց», գնդակի նետում փոքր շրջանով (6-8 երեխա, առանց գնդակը գցելու): Նետել հեռու և նպատակին: Շարժախաղ՝ «Նետիր օղակի մեջ»: Կրկնել անցած ամսվա նյութերը:
5. **Շարուններ:** Տեղում կանգնած կատարել դարձումներ աջ, ձախ, ետ: Դաստիարակի ազդանշանով միաշարքից կազմել շրջան (մի քանի փոքր շրջան):

3-րդ եռամսյակ (մարտ, ապրիլ, մայիս)

1. **Քայլք և վազք:** Քայլել և վազել տարբեր ուղղություններով՝ (դաստիարակի ցուցումներով): Շարվել տողանով, կազմել շրջան, օղակներ: Շարժախաղեր՝ «Անկյունիկներ», «Փոխեք տեղերը»: Քայլել և վազել զույգերով (հրապարակի եզրերով և շրջանաձև): Ձեռքերը բռնած և առանց բռնելու, կատարել շրջադարձ դեպի մյուս կողմը: Վազել շարժվող պարանի տակից:

- Վազել միմյանց ետևից: Վազել՝ ծնկները վեր բարձրացնելով: Շարժախաղեր՝ «Ձիերը և ձիապանները», «Կառք»:
2. **Հավասարակշռություն:** Քայլել մարզանստարանի վրայով զույգերով (միմյանց դիմաց): Քայլել և վազել հորիզոնական և թեք տախտակի վրայով: Կրկնել անցյալ ամիսների նյութերը: Շարժախաղ «Աշխատիր չընկնել»: Քայլել մարզանստարանի նեղ ձողի վրայով՝ ավազով պարկը գլխին:
  3. **Ցատկեր:** Ցատկել ցատկապարանով, զույգ և մեկ ոտքով, ցատկել փոփոխական ոտքերով: Անհատական ցատկեր զբոսանքի ժամանակ: Հեռացատկ և բարձրացատկ թափավազքից (70-80 սմ երկարություն, 45 սմ բարձրություն): Շարժախաղեր՝ «Թմբից-թումբ», «Ո՞վ ավելի քիչ կցատկի», «Ո՞վ ավելի լավ կցատկի», «Ո՞վ արագ կցատկոտի», «Ցատկիր մինչև սահմանագիծը»:
  4. **Նետումներ:** Խաղեր գնդակով: Գնդակը գցել վեր, գետնին, բռնել զույգ ձեռքով: Ծափ տալ առջևում, բռնել աջ, ձախ ձեռքով, գնդակի փոխանցում զույգերով: Նետել ավազի պարկը նպատակին՝ 4-5 մ: Նետել ըստ հեռավորության: Անհատական և խմբակային խաղեր: Նետել գնդակը մինչև դրոշակը: Նետել գնդակը օդակի մեջ: Խաղալ կեգլի, գորողկի, սերսո: Գցել օդակը կանգնակի վրա: Շարժախաղեր նետումներով՝ «Որսորդը և նապաստակը», «Բռնոցի գնդակով», «Գնդակի դպրոց»:
  5. **Շարումներ:** Կրկնել անցած ամսվա նյութերը: Բռնել գնդակն առանց գցելու (8-10 անգամ): Շարժախաղ «Ուն օդակը շուտ կշարվի»:
  6. **Մագլցում:** Մագլցել մարզապատի վրա: Անցնել մարզապատի մի փեղկից մյուսն՝ առանց մարզածողը բաց թողնելու: Շարժախաղեր՝ «Արջը և մեղուները», «Կապիկների որսը», «Հրշեջները սովորում են»:

### ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Երաժշտական դաստիարակության նպատակն է երեխաների մոտ ձևավորել հետաքրքրություն երաժշտության տարբեր ժանրերի նկատմամբ, զարգացնել երաժշտության ընկալումը, ձևավորել կատարողական ունակություններ, նպաստել ռիթմի ընկալմանը և երաժշտության տակ կատարվող ռիթմական շարժումների դրսևորմանը պարերում, երաժշտական խաղերում և այլ իմպրովիզացիոն իրավիճակներում: Երաժշտական դաստիարակությունը նպատակ ունի երեխաներին հաղորդակից դարձնել ազգային (հայկական ժողովրդական և ազգագրական երաժշտությանը) և համամարդկային երաժշտական մշակույթին, ինչպես նաև

ծանոթացնել ազգային (դուրուկ, զուռնա, թառ, քամանչա, դիուլ, քանոն և այլն) և դասական նվագարաններին (դաշնամուր, ջութակ, թավջութակ, ֆլեյտա և այլն):

### **ՏՈՆԵՐ, ԶՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

5-6 տարեկան երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքի ծրագրում իրենց ուրույն տեղն են գրավում զանազան գրավիչ ժամանցները, մարզական զվարճություններն ու տոնահանդեսները:

Աշխարհի ժողովուրդների նկատմամբ դրական վերաբերմունքի, բազմամշակութային դաստիարակության հիմքերը դրվում են ազգային մեջ համամարդկայինը ընդգծելու միջոցով: Երեխայի բարոյագեղագիտական դաստիարակությունը պետք է իրականացվի համընդհանուր, համամարդկային արժեքների հետ շփման միջոցով, որոնք բացահայտվում են ազգային մշակույթի՝ գրականության, արվեստի, ճարտարապետության, հուշարձանների, ազգային ավանդույթների, հերոսական անցյալի, պարերի, երգերի, առածների, ասացվածքների հետ երեխայի հաղորդակցման ճանապարհով: Արվեստի աշխարհը երեխայի կյանքին պետք է կապվի իր բազմազանությամբ և հարստությամբ:

5-6 տարեկան երեխաների բարոյական դաստիարակությունը հիմնականում իրականացվում է առօրյա կյանքում, քանի որ երեխայի ամենօրյա զբաղմունքը և նրա գործունեության ձևերը հնարավոր են դարձնում շրջապատող իրականության նկատմամբ դրսևորել անմիջական վերաբերմունք, օգնում են դաստիարակել բարոյականային հատկանիշներ:

Մանկավարժության մեջ գոյություն ունեցող բազմաթիվ հարցադրումների մեջ առանձնանում է այն հարցը, թե իրենցից ինչ են ներկայացնում երեխաների որոշակի խմբի համար կազմակերպվող միջոցառումները: Եթե առաջնորդվում ենք այն սկզբունքով, որ կրթության մեջ կարևորը երեխայի անհատականությունը պահպանելն ու նրա ճաշակը զարգացնելն է, ապա միջոցառումները պահանջում են նոր մոտեցումներ:

- Միջոցառումը պետք է հասունանա, այլ ոչ թե պարտադրանք և հոգս դառնա երեխայի համար: Երեխան պետք է սպասի այդ տոնին:
- Միջոցառումը երեխայի համար պետք է լինի անակնկալներով լի, որպեսզի այն լինի գրավիչ և հետաքրքիր:
- Միջոցառման նպատակ կարող է լինել երեխայի ձեռքբերումների նշումը, նրա տարբեր հմտությունների զարգացումը (ինքնավստահություն, ազատ շփվելու, ներկայանալու ու ներկայացնելու, շրջապատը զգալու և գնահատելու կարողությունը):

- Տոներին, զվարճանքներին ու ծեսերին մասնակցում են բոլորը: Երեխան անչափ ոգևորվում է, երբ իր կողքին տեսնում է երգող մեծերին և ընկերներին: Երկարատև վարժեցումների և փորձերի կարիք չկա: Կարևոր է, որ երեխաները պարզապես միասին նշեն, հաճույք ստանան, պատմեն միմյանց, թե ինչպես են այդ տոները նշում իրենց ընտանիքներում: Այդպիսով, նրանք տնից մանկապարտեզ կամ դպրոց ու մանկապարտեզից, դպրոցից տուն են փոխանցում տոներ/ծեսը: Երեխան դառնում է ոչ միայն տեղեկատվություն սպառող, այլ նաև՝ տեղեկատվության աղբյուր:
- Շատ կարևոր է ապահովել երեխայի մասնակցությունը տոնական սեղանների, խորհրդանիշների, նվերների, բացիկների պատրաստմանը:

Մանկապարտեզում, դպրոցում անցկացվող յուրաքանչյուր միջոցառում, տոնահանդես, ազգային, եկեղեցական, ժողովրդական տոներին նվիրված ցերեկույթ, մարզական խաղ ու զվարճության նպաստում է երեխայի գիտելիքների, հիշողության, երևակայության, ստեղծագործ մտքի զարգացմանը և նրա անձի ձևավորմանը:

5-6 տարեկան երեխայի կյանքում հաճելի իրադարձություն է դպրոց ընդունվելը, որին նվիրվում է հատուկ ցերեկույթ (հանդես): Այդ հանդեսին (ցերեկույթին) երեխաները պատրաստում են իրենց ստեղծագործական աշխատանքների ցուցահանդեսները:

Ստորև ներկայացվող տոները, նշանավոր տարեթվերը, ավանդական միջոցառումները նպատակ ունեն հուշելու մանկավարժներին, թե ինչպես՝ս պետք է նախապատրաստվել առաջիկա տոնահանդեսին: Բացի նշված օրերից, յուրաքանչյուր մանկապարտեզ կարող է ունենալ իր ավանդական տոնական օրը, ցուցահանդեսներ, հաշվետու հանդեսներ և այլն:

Յուրաքանչյուր միջոցառում պետք է ունենա իր առանձնահատուկ նպատակը, ձևը և գրավչությունը: Ուստի դաստիարակները միջոցառմանը պետք է նախապատրաստվեն հանգամանորեն, հաշվի առնեն տեղական պայմանները, եղած հնարավորությունները:

### Տոնագույգ

- Երեխաների ծննդյան օրերը:
- Հունվարի 28: Հայոց բանակի օր:
- Փետրվարի 22 : Վարդանանց օր:
- Մարտի 8: Մայրիկներ տոն: Գարնան տոն:
- Տեառն ընդառաջ:
- Բարեկենդան:
- Ծաղկազարդ կամ ծառազարդ: Նվիրվում է գարնան զարթոնքին:

- Ջատկի տոն:
- Համբարձման տոն:
- Հունիսի 1: Երեխաների պաշտպանության միջազգային օր:
- Հունիսի 15-20: Միջոցառումներ կարելի է անցկացնել՝ նվիրված մանկապարտեզի սաներին դպրոց ճանապարհելուն:
- Սեպտեմբերի 1: Դպրության և գիտության օր:
- Հոկտեմբեր: «Ոսկե աշուն»:
- Հոկտեմբերի: Ուսուցչի օր:

Բացի նշված օրերից, ավանդաբար անցկացվող միջոցառումներից են՝ «Ցտեսություն ձմեռ», «Ողջուն ամառ», «Բերքի տոն», «Թռչնի օր», որոնք պետք է կազմակերպել տարվա համապատասխան եղանակին՝ ելնելով տեղական պայմաններից և հնարավորություններից: Կազմակերպել կարճատև արշավներ, զբոսանքներ ձմռանը, «Առողջության շաբաթներ», «Վազորդի օր»: Հնարավորության դեպքում կազմակերպել դահուկներով կամ սահնակներով մրցույթ և այլն: Նման միջոցառումները պետք է ուղեկցվեն երաժշտությամբ, համապատասխան կահավորմամբ և զարդարանքներով: Երեխաների կյանքում մեծ իրադարձություն են ինքնագործունեության համերգները, տիկնիկային և ստվերային թատրոնները, կինոֆիլմերի և դիաֆիլմերի դիտումները՝ համառոտ և մատչելի բացատրություններով:

## ԵՐԵՒԱՅԱԿԵՆՏՐՈՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Ուսուցման գործընթացը փոխներգործություն է, որի արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժական հաղորդակցման ոճով, երեխաների և մանկավարժների փոխհարաբերությունների որակով: Մանկավարժները երեխաների համար պետք է նախապատրաստեն միջավայր, որտեղ նրանք սովորեն ակտիվ հետազոտության միջոցով՝ փոխգործելով մեծահասակների, երեխաների և նյութերի հետ: Նյութերի և մարդկանց հետ փոխգործության արդյունքը սովորելն է: Մանկավարժական սկզբունքները և աշխատանքի ոճը բխում են հասարակության կողմից ներկայացվող պահանջներից, կրթական համակարգի ռազմավարությունից և գերակա խնդիրներից: Արդի փուլում, հասարակության զարգացման ժողովրդավարական սկզբունքների հաստատման ճանապարհին, անհրաժեշտություն է ուսուցման նոր մոդելի ներդրումը: Այն դարձել է ժամանակի պահանջ: Ետ են մղվել մանկավարժական հաղորդակցման ինքնիշխան /ավտորիտար/ և հարմարվողական /լիբերալ/ ոճերը, որոնց համապատասխանում էին ուսուցման կարգապահական և հրահանգային մոդելները:

Բնականաբար, կառուցվող ժողովրդավարական հասարակությունը պիտի նախընտրեր մանկավարժական ժողովրդավարական սկզբունքները և վերանայեր ուսուցման կազմակերպման եղանակը:

Ուսումնական գործընթացի ժողովրդավարացմանը համապատասխանում է ուսուցման անհատակողմնորոշիչ (երեխայակենտրոն) մոդելը: Նշված մոդելի նպատակն է ուսուցման ընթացքում բացահայտել յուրաքանչյուր երեխայի անկրկնելիությունը և անհատականությունը և խթանել նրա անձի զարգացումը:

Երեխայի ակտիվ մասնակցությունը ուսումնառության գործընթացին ապահովելու համար կիրառվում են ուսուցման փոխգործուն մեթոդներ, որոնց միջոցով

- երկխոսության և համագործակցություն է հաստատվում երեխաների հետ (նախկինում՝ մենախոսություն էր),
- ստեղծվում է փոխըմբռնման մթնոլորտ, որի արդյունքում ուսուցումը կառուցվում է ոչ թե ցուցադրումների և բացատրությունների, այլ ուսումնական գործունեության մեջ բոլոր երեխաների անմիջական ներգրավման միջոցով,
- աշխատանքային պլանը կառուցվում է երեխայի նախասիրությունների և հետաքրքրությունների ուսումնասիրության և հաշվառման հիման վրա,
- խրախուսվում է երեխաների ինքնուրույն փորձարարական գործունեությունը,



- ուսուցման ընթացքում շեշտը դրվում է երեխայի ինքնակառավարման զարգացման վրա (նախկինում ուսուցումը կառավարվում էր մանկավարժի կողմից),
- ուսուցումը կազմակերպվում է համագործակցային մթնոլորտում, ուր և՛ երեխան, և՛ դաստիարակը նույն հարթության վրա են և գործունեության սուբյեկտների դերում: Դաստիարակը խորհրդատու է, ուղղորդող, օգնական և ավագ ընկեր:

### Մանկավարժական մոտեցումներ

Վերջին տարիներին կատարված գիտական ուսումնասիրությունները ապացուցում են, որ ուսուցումը խաղային մոտեցումներով կազմակերպելու դեպքում երեխան ավելի հեշտ է սովորում և լավ է հասկանում:

Յուրաքանչյուր երեխա անկրկնելի է զարգացման իր անհատական տեմպով և ժամանակացույցով, սովորելու իր ուրույն ոճով և ընտանեկան մշակույթով: Երեխաների անհատական առանձնահատկությունները պետք է հաշվի առնվեն ինչպես ուսումնական պլաններ կազմելիս, այնպես էլ նրանց հետ հաղորդակցվելիս: Ուսումնառության փորձը պետք է համապատասխանի երեխայի զարգացումային հնարավորություններին և միաժամանակ խթանի նրա հետաքրքրասիրությունն ու մտածողությունը:

Երեխան սովորում է իրերին ձեռք տալով, դրանք գործածելով, փորձարկելով և մարդկանց հետ հաղորդակցվելով: Երեխաները սովորում են գործողության միջոցով: Գիտելիքը հնարավոր չէ վերցնել և տալ երեխային, ինչպես դատարկ անոթի, որը հնարավոր է լցնել: Երեխաները ֆիզիկական աշխարհի և սոցիալական հարաբերությունների մասին գիտելիքներ են ձեռք բերում առարկաների և մարդկանց հետ խաղային փոխգործությունների միջոցով: Թվում է, թե *սովորեցնել* բառը ենթադրում է պատմել կամ տեղեկատվություն փոխանցել: Սակայն 5-6 տարեկան երեխաների սովորեցնելու ճիշտ ձևը բոլորովին էլ դասախոսելը կամ բանավոր հրահանգներ տալը չէ: Դաստիարակը պետք է ավելի շուտ օգնողի և ուղղորդողի դեր ստանձնի: Օրվա աշխատանքները պլանավորելիս դաստիարակները շեշտը պետք է դնեն խթանող, խրախուսող պարապմունքների և նյութերի վրա: Նրանք պետք է դիտարկեն երեխաներին՝ պարզելու համար, թե երեխաների համար ինչն է հասկանալի, և ինչը՝ ոչ: Հիմնվելով իրենց դիտարկումներ վրա դաստիարակները պետք է առաջարկեն հավելյալ առաջադրանքներ, որոնք կխթանեն երեխաների մտածողությունը:

Երեխաներին պետք է այնպես ուսուցանել, որ նրանք կարողանան անսխալ արտասանեն տեղեկատվության որոշ հատվածներ, ասենք՝ բանաստեղծությունը, այբուբենը կամ մեկից քսան թվերը: Սակայն երեխաների նման պատասխանները չեն կարող նշանակել, որ նրանք հաղորդվող նյութը հասկացել ու յուրացրել են: Մեխանիկական կրկնությունների միջոցով ակադեմիական գիտելիքներ ձեռք բերելիս, երեխաները չեն կարողանում հետագայում դրանք կիրառել և չեն դրսևորում մտածողության բարձր մակարդակի հմտություններ, ինչպիսիք են վերլուծությունը, համեմատումը և պրոբլեմների լուծումը:

**Երեխայի զարգացման կարևորագույն նախապայմանը զարգացման բոլոր ոլորտների՝ ֆիզիկական, սոցիալական, հուզական և ճանաչողական, փոխկապվածությունն է:** Մի ոլորտում առաջընթացը ազդում է և փոխազդվում է մյուս ոլորտների առաջընթացով: Կարևորագույն նախապայմանը խախտվում է, երբ ուսումնական հաստատությունը շեշտը դնում է ճանաչողական զարգացման վրա՝ նվազեցնելով երեխայի զարգացման մյուս ոլորտների նշանակությունը: Որպեսզի երեխաները յուրացնեն անհրաժեշտ է, որ տեղեկատվությունը կապված լինի երեխայի կյանքի և միջավայրի հետ, և համապատասխանի նրա զարգացման մակարդակին: Երբ ուսումնասիրվող նյութը կապված է լինում երեխայի իրական կյանքի հետ, դա ոչ միայն նպաստում է նյութի և հասկացությունների ամբողջական ընկալմանը, այլ նաև խթանում է երեխայի հետաքրքրասիրությունը: Երբ երեխաները զգում են, որ սովորածն առնչվում է իրենց կյանքի հետ, ավելի հետևողականորեն են կատարում առաջադրանքը և պատրաստ են լինում ավելին սովորելու:

### **5-6 տարեկան երեխաների զարգացման առանձնահատկությունները**

*Երեխաների հետ աշխատող մանկավարժները պետք է հիշեն հետևյալը.*

- *Երեխաները ակտիվ սովորողներ են և ուզում են հասկանալ այն աշխարհը, որտեղ ապրում են:*
- *Երեխաները կոնկրետ սովորողներ են, և նրանց ուսումնառությունը տեղի է ունենում առարկաների, երևույթների հետ շփվելու և կոնկրետ գործողություններ կատարելու միջոցով:*
- *Երեխաները սովորում են խաղի միջոցով:*
- *Իրենց գիտելիքները և արժեքները երեխաները կառուցում են հասակակիցների, ծնողների և այլ մեծահասկաների հետ փոխհարաբերությունների, ինչպես նաև ֆիզիկական և հասարակական միջավայրի ակտիվ ուսումնասիրությունների միջոցով:*
- *Երեխաների մտածողությունը զարգանում է կանխատեսելի փուլերով:*

- Վաղ ուսումնառությունը և զարգացման ոլորտները փոխկապված են միմյանց հետ:
  - Ընտանիքները (ծնողները) երեխայի առաջին և կարևոր ուսուցիչներն են:
- Յուրաքանչյուր երեխա եզակի է: Չկա իրար նման երկու երեխա: Երեխաների սեփական փորձը, վերաբերմունքը, հմտությունները և սովորելու ոճը ազդում են նրանց ուսումնառության վրա:

### **Ուսուցման մեթոդներ**

Ուսուցման գործընթացն իրականացվում է տարբեր մեթոդների օգնությամբ: **Մեթոդը նպատակին հասնելու միջոց է, ուղի: Այն գործիք է դաստիարակի համար իր կրթադաստիարակչական նպատակներին հասնելու ճանապարհին:**

Ներկայումս նախադպրոցական դիդակտիկայում լայն տարածում են գտել ուսուցման ժամանակակից մեթոդները՝ խաղային, գործնական, ակտիվ ուսուցման մեթոդները: Վերջիններս հայտնի են որպես ինտերակտիվ կամ փոխգործուն մեթոդներ:

Խաղային մեթոդների առավելությունները պայմանավորված են խաղային մթնոլորտի բարձր հուզականությամբ, երեխայի համար խաղի բնական և հոգեհարազատ բնույթով:

Ուսուցանող են խաղի բոլոր տեսակները, որոնք կատարում են երկու կարևոր գործառույթ.

- **Նպաստում են գիտելիքների ամրապնդմանը և խորացմանը,**
- **խթանում են նոր գիտելիքների արդյունավետ յուրացումը:**

Խաղի յուրաքանչյուր տեսակ երեխայի զարգացմանը նպաստող ուրույն մեթոդ է: Հետաքրքիր խաղային մեթոդ է երևակայական իրադրությունների խաղարկումը, որի ընթացքում երեխան գիտելիքներ և կարողություններ է ձեռք բերում դերային գործողությունների միջոցով: Ուսուցման գործնական մեթոդների խմբին են դասվում տարատեսակ վարժությունները, փորձերը, հետազոտությունները և մոդելավորումը:

Ակտիվ ուսուցման մեթոդները (փոխգործուն մեթոդները) նպաստում են երեխաների ազատ և ինքնուրույն մտածելու, սեփական կարծիք հայտնելու, պատասխանատու որոշումներ կայացնելու, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ճանաչողական գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը: Այդ մեթոդները զույգերով, խմբային մտավոր աշխատանքի եղանակներն են՝ ուղղված համատեղ որոնումների և մտորումների քննարկմանը, ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը:

Ուսուցման փոխգործուն մեթոդները համապատասխանում են անհատակողմնորոշիչ/երեխայակենտրոն ուսուցման սկզբունքներին և կարող են արդյունավետորեն ծառայել նշված ուսուցման մոդելի խնդիրների լուծմանը:

Փոխգործուն մեթոդները բացառում են որևէ մեկի առաջնայնությունը, գերակայությունը, ինչպես նաև մի տեսակի գերակշռությունը մյուսների նկատմամբ:

**Փոխգործուն ուսուցման սկզբունքներն են.**

- փոխազդեցությունը, փոխուսուցումը
- երեխայի ակտիվությունը
- համագործակցությունը
- ինքնարտահայտման խրախուսումը
- հետադարձ կապը

**Փոխգործուն մեթոդների առանձնահատկություններն են.**

- երեխայի իմացական գործընթացների կազմակերպում
- հետաքրքրությունների բացահայտում
- համագործակցային կարողությունների զարգացում
- անհատական առանձնահատկությունների բացահայտում
- հաղորդակցական ունակությունների ձևավորում
- տրամաբանական մտածողության զարգացում
- ինքնուրույնության խրախուսում
- վերլուծական կարողությունների ձևավորում

Այդուհանդերձ, չկան փոխգործուն մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր: Ցանկացած խումբ, պարապմունք եզակի է և անկրկնելի: Դաստիարակի խնդիրն է **ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել կոնկրետ իրավիճակին:**

**Խաղի դերն ու նշանակությունը**

Խաղը երեխայի աշխատանքն է, որի ընթացքում նա ձեռք է բերում չափազանց կարևոր հմտություններ: Դաստիարակները պետք է երեխայի օրվա խաղային հատվածը դիտարկեն որպես ուսումնական ծրագրի շատ կարևոր մաս: Ուսուցանող են խաղի բոլոր տեսակները: Երեխաները շատ բան են սովորում խաղի միջոցով: Խաղի ընթացքում երեխաները ձեռք են բերում հմտություններ, որոնք նրանց համար շատ օգտակար են լինում կյանքի ընթացքում ավելի բարդ հմտություններ յուրացնելիս: Շատ երեխաներ սովորում են, երբ իրենք ղեկավարում իրենց խաղերը: Խաղի ընթացքում երեխան հաջողության զգացում է ունենում, երբ ներքաշվում է իր իսկ սահմանած առաջադրանքի մեջ, ինչպես օրինակ՝ ընկերոջ հետ միասին ճանապարհի հարթել արգելքների միջով կամ տարբեր ամաններ ջրով լցնել և

դատարկել: Նման գործողությունները չպետք է սահմանափակվեն մեծահասակների կողմից ճիշտ կամ սխալ, լավ կամ վատ գնահատականներով: Երեխաները պետք է խաղան իրական առարկաներով և բնական իրավիճակներում, մինչև ի վիճակի կլինեն հասկանալ տառերի, թվերի այլ խորհրդանիշների իմաստը:

**Խաղի միջոցով երեխաները սովորում են.**

- Մարդկանց, կենդանիների և առարկաների բնորոշ հատկանիշները
- Ջարգացնել ստեղծագործական կարողություններ
- Ջարգացնել պրոբլեմներ լուծելու հմտություններ
- Սոցիալական հմտություններ (հաղորդակցություն, բանակցում, պրոբլեմների լուծում)
- Յնտություններ զարգացման բոլոր ոլորտներում (իմացական, լեզվական, սոցիալ-հուզական, ֆիզիկական),
- Հաճույք զգալ, ուրախանալ:

Նախադպրոցական տարիքում խաղի միջոցով զարգանում է երեխաների սոցիալական շփման հմտությունները: Խաղը հնարավորություն է տալիս կիսել խաղալիքներն ու առարկաները գործնական, կառուցողական և երևակայական խաղերում, սովորել տեքստեր և համագործակցել դերային խաղերում, հերթ պահպանել ու հետևել խաղի կանոններին և այլն: Այս բոլորն ընդլայնում են սոցիալական գիտակցությունը և սոցիալական իմացության զարգացումը: Երևակայական խաղը, հատկապես, զարգացնում է մտավոր առաջխաղացումը և համագործակցությունը:

### **Աշխատանք զույգերով, ենթախմբերով**

Երեխայակենտրոն ուսուցումը ապահովելու և ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով շատ կարևոր է **զույգերով և ենթախմբերով համագործակցային աշխատանքների կազմակերպումը**: Այն երեխաներին հնարավորություն է տալիս համագործակցել, փոխանակել միմյանց հետ իրենց գիտելիքներն ու փորձը, սովորել միմյանցից, ձգտել հասնելու ընդհանուր նպատակին: Երեխաները հասկանում են, որ իրենց հաջողությունը կախված է խմբի բոլոր անդամների ներդրումից: Նման խմբերին բնորոշ է թիմային աշխատանքի ոգին, ընդհանուր նպատակին հասնելու համար առավելագույնը անելու ցանկությունը, փոխկախվածությունն ու փոխկապվածությունը, սոցիալական փոխազդեցության

հմտությունները, խմբի աշխատանքի ընթացքը և արդյունքը մշտապես գնահատելու ու վերանայելու կարողությունը:

**Փոքր խմբերով ուսուցումն ունի հետևյալ նպատակները.**

- զարգացնում է խնդիրներ լուծելու կարողություն
- ձևավորում է հաղորդակցման հմտություն
- երեխաները սովորում են միմյանցից
- զարգանում է երեխայի պատասխանատվության զգացումը
- խթանում է թիմային աշխատանքը
- ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար
- ընձեռում է ակտիվ մասնակցության և ինքնադրսևորման հնարավորություն:

**Հարցեր ու հարցադրումներ**

Երեխաների մասնակցությունն ու ակտիվ ներգրավումն ապահովելու, նրանց մտածողության խթանման և սովորելու հմտությունների զարգացման համար չափազանց կարևոր դեր ունեն առաջադրվող հարցերն ու հարցադրումները:

Հարցերը կամ հարցադրումները երեխաների մտածողությունը խթանելու, տեղեկատվությունը հիմնավոր կերպով ընկալելու, համակարգելու, ստեղծագործական և քննադատական մտածողությունը զարգացնելու կարևոր գործոն են: Հարցերը պետք է լինեն`

- հստակ
- նպատակաուղղված
- հակիրճ
- տեղին
- երեխաների մակարդակին համապատասխան
- տրամաբանական հաջորդականությամբ
- մտածելու տեղիք տվող:

Ուսուցման ընթացքում շատ կարևոր է կիրառել երեխայի մտածողությունը խթանող հարցեր, որոնք անվանում ենք **բաց հարցեր**: Ի տարբերություն փակ հարցերի, որոնք նպատակաուղղված են ստուգելու երեխայի հիշողությունը կամ սահմանափակելու պատասխանի ընտրության հնարավորությունը, բաց հարցերը հնարավորություն են տալիս երեխային ազատ մտածելու, սեփական տեսանկյունից հարցերը դիտարկելու և իր կարծիքը հայտնելու:

Փակ հարցերը ենթադրում են մեկ ճիշտ պատասխան, ուստի խորհուրդ չի տրվում այս տիպի հարցերը հաճախ օգտագործել և սահմանափակել երեխայի ինքնարտահայտման հնարավորությունները:

Մանկավարժները պետք է խթանեն երեխայի մտածողության ակտիվությունը բաց հարցերի միջոցով, որոնք չեն ենթադրում միանշանակ պատասխան:

Օրինակ՝

- ի՞նչ զգացիք երաժշտությունը լսելիս:
- ի՞նչ է բերում գարունն իր հետ:
- ինչպե՞ս կօգնեիր հիվանդ տիկնիկին:
- ինչպիսի՞ ավարտ կառաջարկեիր այս պատմության համար:
- ի՞նչ կանեիր հերոսի փոխարեն:
- Ինչպե՞ս կբնութագրեիր գլխավոր կերպարին և այլն:

Խորհուրդներ դաստիարակին

- Վստահ եղեք, որ երեխաները հասկացել են հարցը:
- Հարցը ձևակերպեք հակիրճ:
- Հարցը ձևակերպեք հստակ:
- Կշռադատեք հարցի բարդությունը և երեխաների կողմից պատասխաններ ստանալու հնարավորությունը:
- Մի՛ տվեք անորոշ հարցեր:
- Մի՛ ուղղորդեք երեխաներին դեպի Ձեր նախընտրած պատասխանը:
- Մի՛ պատասխանեք հարցերին ինքներդ:

## ԻՆՏԵԳՐԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Նախադարձացական կրթության կարևոր նպատակներից է երեխաների մեջ սերմանել և մշակել այնպիսի որակներ ու հատկություններ, ինչպիսիք են՝ քննադատական մտածողությունը, հետաքրքրասիրությունը, անմիջականությունը, զարմանքը, երևակայությունը և աշխատանքից էսթետիկական հաճույք ստանալը: Բոլոր երեխաներն ունեն այս հատկանիշները փոքր հասակում, բայց հաճախ կորցնում են դրանք կյանքի առաջին տասնամյակում: Մինչդեռ այս հատկությունները կարևոր դեր են խաղում սովորելու գործընթացում: Այս նպատակին հասնելու ուղին ուսումնառությունը թեմատիկ դասերի միջոցով կազմակերպելն է: Թեմատիկ պարապմունքները կարևորում են գործունեության այն ձևերը, որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնություն, համագործակցություն, հնարամտություն, անձնական կարգապահություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում:

**Թեմատիկ ուսուցումը** ապահովում է երեխայի զարգացման մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և էսթետիկական ոլորտների **համակողմանի զարգացումը** և **չի կենտրոնանում մեկ՝ առանձնացված ոլորտի վրա**, որն անբնական կլիներ երեխայի զարգացման համար:

Բազմակողմանի զարգացած, ուսման մեջ հաջող երեխաները մեծանում են հոգատար, աջակցող միջավայրում: Թեմատիկ դասերի ժամանակ ուսուցիչը գիտակցաբար այնպես է անում, որ երեխաները զգան մածահասակների հոգատարությունը, երեխաների ուսումով նրանց շահագրգռվածությունը: Մանկավարժները, ծնողները և նրանց օգնականները սովորելու ընթացքում զրուցում են երեխաների հետ՝ ողջ ուշադրությունն ու էներգիան կենտրոնացնելով ուսման բովանդակության վրա: Նրանք զարգացնում են երեխաների մտածողությունը աստիճանաբար ավելի ծավալուն և անկեղծ դարձող երկխոսությունների միջոցով: Այսպիսի մթնոլորտը զարգացնում է երեխաների մտավոր և լեզվական ունակությունները և ինքնավստահություն է ներշնչում նոր ձեռք բերած գիտելիքները կիրառելու համար:

Թեմատիկ ուսուցումից բոլորն էլ շահում են: Ծնողները ներգրավվում են կատարվող տարբեր աշխատանքների մեջ և տեղյակ են, թե ինչ են անում իրենց երեխաները: Մանկավարժներին ոգևորում է պարապմունքների նոր բովանդակությունը և նոր մեթոդներ կիրառելու համար ստեղծված գրավիչ հնարավորությունները: Երեխաներն, իրենց հերթին, համարվում են գիտակ, ինքնատիպ մտածողներ, որոնց թույլ է տրվում նոր ձևերով դրսևորել իրենց գիտելիքները: Երբ այսպիսի համալիր



ուսուցումը մանրակրկիտ կերպով պլանավորվում և իրականացվում է, արդյունքում երեխաների մոտ դրսևորվում են հետևյալ հատկանիշները.

- հոգատար են միմյանց նկատմամբ,
- հետաքրքիր մտավոր կապեր են ստեղծում,
- կատարելագործում են իրենց շփման և երկխոսության հմտությունները,
- ձևավորվում են որպես համայնք:

### Ի՞նչ է թեմատիկ ուսուցումը

**Թեմատիկ ուսուցումը ենթադրում է ուսումնական ծրագրի տարբեր բաժինների միավորում՝ մեկ հետաքրքիր գաղափար ուսումնասիրելու միջոցով, որի մեջ ամփոփված են ծրագրի տարբեր բաժիններից բովանդակային միավորներ:** Թեմատիկ ուսուցման ծրագիրն այնպես է կազմված, որ երեխաները տեսնում և հասկանում են առարկայական ոլորտների միջև եղած կապերը և նրանց կապը կյանքի հետ:

Թեմատիկ ուսուցումը հնարավորություն է տալիս մանկավարժին՝ ծրագիրը կազմակերպել երեխաների համար հետաքրքրություն ներկայացնող թեմաների, խնդիրների կամ կենսական հարցերի շուրջ: **Թեմատիկ ուսուցումը միջառարկայական է, ինչպիսին որ ինքը՝ կյանքն է:** Այս փաստը երեխաների համար անմիջապես նշանակալի է դառնում, երբ լուծելու համար նրանց է ներկայացվում մի «իսկական» խնդիր, կամ էլ ուսումնասիրության ենթակա մի նոր գաղափար:

Ուսումնասիրվող թեմայի կամ ծրագրի մեջ երեխայի հետաքրքրություններին կենտրոնական տեղ հատկացնելը ապահովում է երեխաների շահագրգռվածությունն ու հետաքրքրափրությունը: Թեմատիկ դասի ծրագրման ժամանակ մանկավարժը պետք է հաշվի առնի հետևյալ հարցերը.

- Արդյոք թեման համապատասխանում է երեխաների հետաքրքրություններին:
- Ընտրած թեման նպաստում է երևակայության ու ստեղծագործական մտածողության խթանմանը:
- Հնարավոր է ընտրված թեման անցնել այնպես, որ ապահովվի բազմամակարդակ մասնակցությունը և, միաժամանակ, յուրաքանչյուր երեխայի գործադրած ջանքը պսակվի հաջողությամբ:
- Երեխաները հնարավորություն կունենան համագործակցելու և որոշակի պատասխանատվություն կրելու:
- Երեխաները հնարավորություն կունենան ավելացնել իրենց գիտելիքները և փորձը՝ առարկաների, մարդկանց և իրենց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

### **Գրավոր պլանավորման կարևորությունը**

Դաստիարակներն իրենց պլանները կազմելիս կարող են օգտագործել տարբեր եղանակներ: Ոմանք նախընտրում են օգտագործել օրացույցներ, որտեղ նշվում են շաբաթվա կամ ամսվա կարևոր աշխատանքներն ու իրադարձությունները: Մյուսներն օգտագործում են աղյուսակներ, որոնց վերին հորիզոնական տողում գրում են աշխատանքային կենտրոնի անունը, առաջին ուղղահայաց տողում՝ ամսաթիվը, իսկ համապատասխան վանդակներում՝ գործունեություններն ու իրադարձությունները: Որոշ ուսուցիչներ անհատական պլան են կազմում՝ հատուկ նպատակներ և նախասիրություններ ունեցող երեխաների զարգացումն ապահովելու համար: Դրանք կարող են պարունակել նաև միայն նշումներ շաբաթվա ընթացքում իրականացվելիք աշխատանքների, պահանջվող նյութերի և դաստիարակի պարտականությունների վերաբերյալ:

Գրավոր պլաններն օգնում են համակարգել աշխատանքը, նրանց մեջ նշվում են աշխատանքային կենտրոններում կատարվելիք լրացուցիչ փոփոխությունները և գրանցվում են իրականացված բոլոր աշխատանքները: Գրավոր պլանները նաև օգտակար տեղեկություններ են տալիս այն այցելուներին, ովքեր գալիս են դասարան ուսուցչական կազմին օգնելու նպատակով:

Օգտագործվող մեկ այլ եղանակ է պլանավորման ցանցաձև գծապատկերումը: Այն մի տեսանելի սխեմա է, որում ներկայացվում է թեմաների և աշխատանքային կենտրոնների միջև եղած կապը: Ծրագրային ցանցում կարելի է նաև ընդգրկել երեխաների գիտելիքներն ու նրանց գաղափարները:

## ԴԱՍՏԻԱՐԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՁՆԵՐ

Ստորև թվարկվում են այն հիմնական տարրերը, որոնցով որոշվում է, թե ինչ պետք է իմանա և կարողանա անել նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատող յուրաքանչյուր դաստիարակ):

1. Երեխաների համար ստեղծում և պահպանում է ապահով, անվտանգ, առողջ և զարգացնող միջավայր՝ ֆիզիկական և սոցիալական, որտեղ երեխան կարող է բավարարել իր հետաքրքրությունները, պահանջմունքները: Նա անընդհատ հարստացնում է, ավելի բազմազան է դարձնում այդ միջավայրը՝ օգտագործելով նաև գործունեության ընթացքում երեխաների ստեղծած նյութերը: Այդ գործում նրան օգնում են ծնողական համայնքը, մյուս աշխատողները:
2. Պլանավորում և իրականացնում է երեխաների զարգացումը խթանող ուսումնական պլան, որը ներառում է երեխաների ուսումնառության և զարգացման բոլոր ոլորտները, նպաստելով սոցիալական, հուզական, իմացական և ֆիզիկական զարգացմանը:
3. Նպաստում է երեխայի սոցիալական զարգացմանը՝ երեխաների հետ հաստատելով համագործակցային հարաբերություններ և կիրառելով զարգացմանը նպաստող մեթոդներ և մոտեցումներ:
4. Ընտանիքների հետ ստեղծում և պահպանում է դրական և արդյունավետ հարաբերություններ:
5. Նպաստում է յուրաքանչյուր երեխայի զարգացմանը և ուսումնառությանը՝ ընդունելով, որ երեխաներին կարելի է շատ լավ հասկանալ՝ ճանաչելով նրա ընտանեկան մշակույթը:
6. Դիտարկում, հետազոտում է երեխայի գործունեությունը և համապատասխան եզրահանգումներ անում, պարզում է երեխայի հետաքրքրությունների շրջանակը և դրան համապատասխան կազմակերպում, ուղղորդում է երեխայի գործունեությունը: Հավաքած տեղեկությունները օգտագործում է ուսումնական գործընթացի և ծրագրի պլանավորման ու անհատականացման ընթացքում: Ամեն օր նախապես ճշտում է հաջորդ օրվա խնդիրները, դրանց իրագործման միջոցներն ու մեթոդները:
7. Խրախուսում է երեխային, մղում ավելին անելու՝ դրանով նպաստելով նրա առաջընթացին, զարգացմանը, ինքնավստահությանը, հնարավորությունների լիարժեք բացահայտմանը:
8. Երեխայի գործունեության ակտիվ մասնակիցն է. խաղընկերը, օգնականը: Դաստիարակում է ոչ թե խոսքով ու քարոզներով, այլ երեխայի հետ խաղում է,

շփվում, ապրում է նրա հետ՝ ստեղծելով ազատ գործելու միջավայր և զարգացման և ինքնադաստիարակման հնարավորություն:

9. Հարգում է երեխայի ազատությունը, արժանապատվությունը, կարծիքը և ընձեռում է ընտրության տարբեր հնարավորություններ:
10. Իր գործողությունների միջոցով մոդելավորում և երեխաների մոտ զարգացնում է հմտություններ, որոնք նպաստում են երեխայի ինքնուրույնությանը, անկաշկանդ, անվտանգ գործողություններին, դիմացինին լսելու և նրա կարծիքը հարգելու ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը:
11. Նպաստում է երեխայի ստեղծագործական երևակայության զարգացմանը:

***Ուսուցչին (դաստիարակին) անհրաժեշտ  
մասնագիտական հմտությունները***

1. Ցուցաբերում է վաղ մանկության զարգացման վերաբերյալ խորը գիտելիքներ և կիրառում է այդ գիտելիքները երեխաների հետ աշխատանքի ընթացքում:
2. Տիրապետում է մանկավարժական առաջադեմ տեխնոլոգիաներին, մեթոդներին:
3. Գրագետ է, ազատ տիրապետում է հայերեն գրավոր և բանավոր խոսքին:
4. Կարողանում է գրավոր և բանավոր հաղորդակցվել որևէ օտար լեզվով (օրինակ՝ ռուսերեն, անգլերեն):
5. Կարողանում է աշխատել համակարգչով, օգտվել համացանցից(ինտերնետից):
6. Կարողանում է հմտորեն օգտվել կենցաղային տեխնիկայից (հեռուստացույց, DVD, ֆոտոխցիկ, գազօջախ, հարիչ և այլն):
7. Ծկում է մտածում, հարգում է իր սաների ազատությունը:
8. Նախաձեռնող է, պրպտող, ստեղծող-ստեղծագործող:
9. Տիրապետում է նախակրթարանում ուսուցանվող ողջ գրական և բանահյուսական նյութին, երգերին:

***Մասնագիտական զարգացումը***

1. Դրսևորում է վաղ մանկության մանկավարժի մասնագիտության խորը ըմբռնում և շարունակաբար բարելավում է մասնագիտական որակավորումները:
2. Դիմում և մասնակցում է մասնագիտական որակավորման բարձրացման սեմինարների, դասընթացների:
3. Զբաղվում է հետազոտական աշխատանքով:
4. Զբաղվում է ինքնակրթությամբ:

### **ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ**

Երեխայի կրթադաստիարակչական գործում առաջնային դեր ունի ընտանիքը: Դրական համագործակցությունը երեխայի շուրջ ստեղծում է մի միջավայր, որտեղ ընտանիքները, ուսումնական հաստատությունը և համայնքը համատեղ աշխատում են երեխաների կրթությանն ու դաստիարակությանն ուղղված ընդհանուր նպատակներին հասնելու համար: Մանկավարժների և ընտանիքների միջև դրական հաղորդակցությունը արդյունավետ ուսումնական մթնոլորտ է ստեղծում երեխաների համար: Երեխայի ընտանիքի անդամները նրա առաջին ուսուցիչներն են: Մինչև մանկապարտեզ /դպրոց/ հաճախելը երեխաները բազում բաներ են սովորում ընտանիքում՝ սկսած բաժակով խմելուց մինչև ընթերցանություն: Ընտանիքի անդամներն են այն մարդիկ, որոնք երեխաների համար կենսականորեն կարևոր որոշումներ են ընդունում, շրջապատում են նրանց սիրով, կրթում և դաստիարակում: Նրանք շատ լավ են ճանաչում իրենց երեխաներին և գործում դեր ունեն նրանց դաստիարակության գործընթացում: Երեխաներն իրենց վրա կրում են իրենց ընտանիքի ազդեցությունը, ուստի դպրոցը/մանկապարտեզը /պետք է լրջորեն հաշվի նստեն այդ փաստի հետ և երեխաների հետ աշխատելիս ամրացնեն կապը ընտանիքների հետ՝ նկատի ունենալով ընտանիքների առանձնահատկությունները և տարբերությունները:

Ընտանիքի անդամներին ընձեռվում են դպրոցում/մանկապարտեզում/ իրենց երեխայի կրթադաստիարակչական աշխատանքներին մասնակցելու տարբեր հնարավորություններ: Նրանք կրթական հաստատության ցանկալի հյուրերն են, և շատ խրախուսելի է նրանց գիտելիքների և փորձի կիրառումը տարբեր ուսումնական և կազմակերպչական նպատակներով: Օրինակ, փայտամշակման, կարի և խոհանոցային աշխատանքների, ընթերցանության և արվեստի պարապմունքների, դասարանական միջոցառումների և էքսկուրսիաների համար կարելի է օգտագործել ընտանիքի անդամների ներուժը: Ծնողների տրամադրվածությունն ապահովելը սկսվում է մանկավարժական կազմի հետ առաջին իսկ հանդիպումից: Հարգալից վերաբերմունքը, աշխատանքի սկզբունքների, ընթացակարգի, նպատակների և գործողությունների վերաբերյալ քննարկումները մեծապես նպաստում են ընտանիքների ներգրավմանը երեխայի ուսումնակրթական գործընթացին:

Մանկավարժական կազմի պարտականությունն է խրախուսել ծնողների մուտքը դպրոց/մանկապարտեզ: Հարկ է բացատրել հենց սկզբից, որ նրանց մասնակցությունը դասասենյակում տեղի ունեցող աշխատանքներին շատ օգտակար է թե՛ ուսուցիչների, թե՛ երեխաների համար: Ընտանիքի անդամների նպատակային

ներգրավումը պահանջում է ժամանակ, պլանավորում և ընտանիքի անդամների հետաքրքրությունների ու հնարավորությունների մասին գիտելիքներ: Ծնողներին անհրաժեշտ է նախապես ծանոթացնել կատարվելիք աշխատանքներին, իմանալ նրանց նախասիրությունները, մասնագիտական հնարավորությունները, աշխատանքային ծանրաբեռնվածությունը և այլն: Մասնակցության ձևերը ներկայացնող ցուցակի կամ հարցաթերթիկի միջոցով կարելի է պարզել, թե ինչով և ինչպես է ընտանիքը ցանկանում օգնել ուսուցչին: Ծնողների հետ աշխատանքը պետք է իրականացվի կազմակերպված ձևով, նախնական պայմանավորվածությամբ, որպեսզի այն չկրի ձևական բնույթ և լինի արդյունավետ բոլոր կողմերի համար: Անհրաժեշտ է հստակ պլանավորել, թե ինչ ուղիներով պետք է ընտանիքները ներգրավվեն կրթական գործընթացում: Ուսումնական հաստատության աշխատակազմի և ընտանիքների միջև համագործակցային և փոխգործուն հարաբերություններ կառուցելու համար էական նշանակություն ունեն հարգանքը և վստահությունը երեխայի և նրա ընտանիքի անդամների հանդեպ: Շատ կարևոր է ճանաչել ընտանիքների անդամների բացառիկ դերը, որպես իրենց երեխաների փորձագետների:

### **Դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ**

- Ծնողներին պարապմունքների և կազմակերպչական աշխատանքների մեջ ներգրավելու համար օգտագործեք բազմատեսակ ձևեր: Եղեք ստեղծագործ և ճկուն:
- Ժողովները և հանդիպումները կազմակերպեք ծնողների համար հարմար ժամերի:
- Թույլ տվեք, որ ընտանիքն ինքը որոշի, թե ինչպես կարող է գործին մասնակցել լավագույն ձևով:
- Եղեք համբերատար:
- Հենվեք երեխաների և ընտանիքի ուժեղ կողմերի վրա և արձագանքեք դրականորեն:
- Պահպանեք գաղտնիությունը:

Անհատականացված ուսուցում ապահովելու համար մանկավարժը պետք է մշտական կապի մեջ լինի երեխայի ընտանիքի հետ: Նրա պարտականությունն է հաստատել և պահպանել ամուր կապեր ընտանիքի հետ: Ներկայացված հարցաթերթի օրինակներում նկարագրված են ծնողների ներգրավման և ծնողների հետ համագործակցության տարբեր ուղիներ: Ծնողական ժողովների և ընտանիքի

անդամների հետ այլ հանդիպումների ընթացքում դաստիարակը անպայման պետք անդրադառնա երեխայի ամբողջական զարգացման կարևորությանը և առանձին ներկայացնի զարգացման յուրաքանչյուր ոլորտը ըստ 5-6 տարեկան երեխաների զարգացման չափորոշիչների: Երեխայի զարգացման առաջընթացի ու կարիքների վերաբերյալ քննարկումները և տեղեկությունների փոխանակումը օգտակար են և՛ ընտանիքի անդամների, և՛ դաստիարակների համար:

Որքան ավելի սերտ ու արդյունավետ լինի ուսումնական հաստատություն-ընտանիք կապը, այնքան ավելի մեծ աջակցություն կստանան երեխաները՝ ուսումնառության և դաստիարակության ընթացքը ավելի դրական և արդյունավետ կազմակերպելու առումով:

Ընտանիքի անդամներին պետք է առաջարկվեն ուսումնական հաստատության կյանքին մասնակցելու տարատեսակ հնարավորություններ: Ընտանիքին հարմար ժամանակ տնային այցելությունների կազմակերպումը հնարավորություն է տալիս դաստիարակներին ծանոթանալու երեխաներին և ընտանիքներին նրանց հարազատ միջավայրում:

### **Հաղորդակցություն ընտանիքների հետ**

- Ուսումնական հաստատությունը երկկողմանի, բաց և մատչելի հաղորդակցություն պետք է ապահովի, որտեղ ընտանիքները և համայնքի անդամները կարևորվում են որպես ներուժ և որոշում կայացնող:
- Ընտանիքի անդամներին տեղեկություններ են տրամադրվում երեխաների հետ իրականացվող աշխատանքների և երեխաներից ունեցած ակնկալիքների վերաբերյալ: Ծնողներին պետք է տեղյակ պահել, թե ինչպես կարող են նրանք շարունակել աշխատանքները տանը:
- Ծնողների համար կազմակերպել ծնողական կրթության դասընթացներ՝ հիմնված ընտանիքների կարիքների և հետաքրքրությունների վրա: Դասընթացներում ներառել տեղեկություններ երեխայի տարիքային զարգացման, կարգապահության և այլնի վերաբերյալ:
- Տեղեկություններ հավաքել երեխայի և ընտանիքի մասին մինչև երեխայի հաստատություն այցելելը և այնուհետև տարվա ընթացքում թարմացնել դրանք տնային այցելությունների, հանդիպումների, ոչ պաշտոնական զրույցների և հեռախոսազրույցների միջոցով:
- Տարեկան երկու անգամ գրավոր ձևով ներկայացնել յուրաքանչյուր երեխայի առաջընթացը և ծնողի համար ըմբռնելի ձևով տալ դրական բանավոր բացատրություններ:

- Երեխայի առաջընթացի վերաբերյալ համապատասխան տեղեկություններ (օրինակ՝ երեխայի թղթապանակը, դաստիարակի նշումները) տրամադրել այն դպրոցին, ուր հաճախելու է երեխան:

### **Աջակցություն ընտանիքներին**

- Ռեսուրսներ տրամադրել ընտանիքի անդամներին երեխայի սոցիալական, հուզական, ֆիզիկական և իմացական զարգացումը ապահովելու համար (օրինակ՝ երեխաների համար կարողալու գրքերի ցանկ, խաղերի տեսակներ, քննարկումներ):
- Նպաստել ծնողների միջև համագործակցության զարգացմանը (օրինակ՝ ամենամսյա հանդիպումներ, խաղեր մեծահասակների համար, ձեռքի աշխատանքների ցուցադրումներ),
- Ընտանիքների համար տարբեր միջոցառումներ կազմակերպել օրվա տարբեր ժամերի, որպեսզի հնարավորին չափ շատ ընտանիքների անդամներ կարողանան մասնակցել:



*Ընտանիքի մասնակցության որոշարկման ձև*

Ծնողի անուն, ազգանուն \_\_\_\_\_

Երեխայի անուն, ազգանուն \_\_\_\_\_

Հարգելի՛ պարոն/տիկին,

Ուրախ եմք, որ Ձեր երեխան այս տարի հաճախելու է մեր ուսումնական հաստատություն: Սիրով ակնկալում ենք Ձեր համագործակցությունը: Մենք խրախուսում ենք ընտանիքների առավելագույն ներգրավումը մեր ծրագրում: Որպեսզի ավելի ստույգ պատկերացում կազմենք այն մասին, թե որ բնագավառում կցանկանայիք մեզ օգնել, խնդրում ենք ստորև բերված ցանկում ընդգծել Ձեր հետաքրքրության ոլորտները:  
Շատ շնորհակալություն:

*Կարող եմ/ցանկանում եմ/ հետևյալ կերպ աջակցել ուսումնական ծրագրին.*

- Հաճախել ամենամսյա ծնողական հանդիպումներին
- Աշխատել խմբասենյակում
- Մասնակցել արտադպրոցական, արտանախադպրոցական և արտադասարանական աշխատանքներին:

*Եթե դրական եք պատասխանել, ապա նշված գործունեության որևէ ձևերից որին կուզենայիք մասնակցել երեխաների հետ միասին.*

- ընթերցանություն
- արվեստ
- երաժշտություն
- գլուխկոտրուկներ
- կառուցել կամ նյութեր պատրաստել (բացօթյա սարքավորումներ, տիկնիկի հագուստներ և այլն)
- օգնել արշավների և էքսկուրսիաների ժամանակ
- մասնակցել հատուկ միջոցառումների կազմակերպմանը (ծննդյան օրեր, տոնակատարություններ)
- աշխատել մանկավարժական կազմի հետ՝ խմբի խաղային գործունեության համար նոր աշխատանքներ մշակելու նպատակով

## **Ընտանիքի հետ համագործակցության ձևեր**

### **1. Այցելություններ տուն**

Մանկավարժական անձկազմից որևէ մեկը այցելում է տուն՝ տեսնելու և ճանաչելու երեխային և նրա ընտանիքին իրենց միջավայրում:

### **2. Երեխային բերելու և տանելու ընթացքում ընկած ժամանակը**

Ուսուցանող թիմը կարող է այնպես կազմել ժամատախտակը, որ երեխային բերելու և տանելու ընթացքում ընկած ժամանակը օգտագործվի ծնողների հետ ոչ պաշտոնական հաղորդակցությունն ապահովելու համար:

### **3. Հեռախոսային զանգեր**

Կարելի է հատուկ նպատակով զանգահարել կամ պարզապես ամիսը մեկ անգամ կապը պահպանելու նպատակով զանգահարել յուրաքանչյուր ընտանիքի:

### **4. Ծնողական և մանկավարժական ժողովներ**

Ժողովները այն պաշտոնական հանդիպումներն են, որոնք նպատակ ունեն քննարկելու երեխաների առաջադիմությունը և ծնողներին հնարավորություն են տալիս կիսվելու իրենց գաղափարներով ու մտահոգություններով: Ժողովները կարող են օգտակար լինել երեխայի անհատական պլանների ստեղծման և քննարկման ժամանակ:

Եթե ժամանակի պակասը խոչընդոտում է երես առ երես հաղորդակցվելուն, կամ եթե չկա հեռախոս, ընտանիքների և մանկավարժների միջև գոյություն ունեցող կապը պահպանելու համար կարող են օգնության գալ գրավոր հաղորդակցման որոշ ձևեր: Գրավոր ձևով տեղեկատվություն հաղորդելիս պետք է վստահ լինեք, որ մյուս կողմը ստացել է տեղեկատվությունը: Այնպես արեք, որ հաղորդակցվեք հասկանալի ձևերով: Ստորև բերված են գրավոր հաղորդակցման որոշ տեսակներ:

### **5. Բրոշյուրներ**

Բրոշյուրները կարող են օգնել ծնողներին ծրագրի հետ ծանոթանալու գործում: Բրոշյուրները կարող են հակիրճ ձևով նկարագրել ծրագրի փիլիսոփայությունն ու ընդհանուր տեղեկատվություն տալ նրա մասին:

## **6. Շարաքական գրառումներ**

Ամեն շաքաթ մի առանձին գրառում կարելի է ուղարկել յուրաքանչյուր ընտանիքի՝ տեղեկացնելու համար իրենց երեխայի նախընտրելի գործունեության տեսակի մասին, ինչպես նաև որևէ այլ տեղեկատվություն հաղորդելու համար:

## **7. Ոչ պաշտոնական գրառումներ**

Մանկավարժական կազմը կարող է երեխայի հետ տուն ուղարկել կարճ գրառումներ՝ ընտանիքի անդամներին տեղեկացնելու համար հմտությունների ձեռք բերման կամ որևէ այլ իրականացված գործունեության մասին, ինչպես նաև շնորհակալություն հայտնելու համար ընտանիքի անդամներին այս կամ այն ձևով ուսումնական հաստատությանն աջակցելու համար: Ընտանիքի անդամները նույնպես կարող են մանկավարժներին ուղարկել երախտագիտություն կամ որևէ խնդրանք պարունակող գրություններ:

## **8. Անհատական գրառումների գրքույկներ**

Գրառումների գրքույկները կարող են ամեն օր տնից հաստատություն և հակառակը ուղարկվել՝ ընթացիկ տեղեկատվությունը միմյանց փոխանցելու նպատակով: Ընտանիքները կարող են նախազգուշացնել մանկավարժներին հատուկ իրադարձությունների, ինչպես, օրինակ, ծննդյան տոների, նոր աշխատանքի հնարավորության, ճանապարհորդությունների, այցելությունների մասին:

## **9. Պատի տեղեկատվական թերթեր**

Պատի տեղեկատվական թերթը կարող է օգտակար լինել ընտանիքներին՝ միշտ թարմ տեղեկատվություն հաղորդելու համար վերջիններիս՝ ժողովների ու հատուկ իրադարձությունների, ամենօրյա պարապմունքների ցանկի, ընտանիքների համար նախատեսված միջոցառումների մասին, ինչպես նաև ընդհանուր առմամբ ուսումնական հաստատության անցուդարձի մասին ընտանիքներին տեղյակ պահելու համար :

## **10. Առաջարկությունների տուփեր**

Ծնողներին առաջարկվում է իրենց մտքերը, մտահոգությունները, առաջարկությունները և հարցերը ներկայացնել մանկավարժական կոլեկտիվի անդամներին մի հատուկ տուփի միջոցով, որտեղ նրանք կարող են գցել գրավոր ձևակերպված իրենց հուզող հարցերը:

## **Ծնողները խմբասենյակում (դասասենյակում)**

Ծնողները խմբասենյակում (դասասենյակում) կարող են ունենալ տարբեր դերեր: Նրանք կարող են կատարել բազմաթիվ պաշտոնական և ոչ պաշտոնական պարտականություններ: Ստորև ներկայացված են այդ պարտականություններից մի քանիսը, որպեսզի ծնողները ընտրելու հնարավորություն ունենան:

### **1. Այցելուներ**

Ծնողներին պետք է խրախուսել մտնել խմբասենյակ /դասասենյակ՝ դրականորեն ընդունելով նրանց: Նրանք կարող են դիտարկել ու խաղալ իրենց երեխաների հետ:

### **2. Կամավորներ**

Ծնողների հմտությունները և գիտելիքները կարելի է օգտագործել՝ խմբասենյակում (դասասենյակում) երեխաների հետ զբաղվելու համար: Նրանք կարող են օգնել մանկավարժներին որոշակի գործունեության ժամանակ, նրանց հետ միասին կատարել որոշակի աշխատանք: Որոշ ծնողներ կարող են օգնել էքսկուրսիաների համար փոխադրամիջոցներ կամ խմբասենյակի համար նյութեր տրամադրելով, օգնել խմբասենյակը դասավորելիս և ձևավորելիս:

## **Ուսումնական ծրագրով նախատեսված որոշակի գործունեության տեսակներ՝ ուղղված ծնողներին**

### **1. Ծնողների կողմից միմյանց աջակցելու փորձեր:**

Կարելի է հանդիպումներ կազմերպել փորձառու և սկսնակ ծնողների հետ՝ նպատակ ունենալով օգնել նրանց կողմնորոշմանը կամ պարզապես շփվելու հնարավորություն ստեղծել:

### **2. Տեղեկատվություն ծնողների համար:**

Ծնողներին կարելի է տեղեկատվություն տրամադրել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմաների շուրջ, օրինակ, երեխայի զարգացման, ընթերցանության, կարգապահության վերաբերյալ: Այդպիսի գործունեությունը կարող է կազմակերպվել և՛ մանկավարժների, և՛ ծնողների կողմից:

### **3. Միջոցառումներ ծնողների և ուսուցիչների համար:**

Որոշ միջոցառումներ կարելի է պլանավորել բացառապես հասարակական նպատակներով, օրինակ՝ քաջալերել ծնողներին և մանկավարժներին ժամանակ տրամադրել հանգստի, միմյանց հետ ծանոթանալու և շփվելու համար:

#### **4. Գրադարաններ:**

Ծրագրի շրջանակներում կարող են կազմակերպվել հետաքրքիր գրքերի, հոդվածների, բրոշյուրների, տեսաժապավենների և ձայներիզների հավաքագրում, որոնք ծնողները կարող են որոշ ժամանակով վերցնել և օգտագործել:

Համոզվեք, որ ընտանիքները գիտակցում են, որ իրենց մասնակցությունը խմբասենյակում (դասասենյակում) և ցանկացած չափի ներգրավումը տարբեր աշխատանքներում ողջունելի է և բարձր է գնահատվում: Հենց սկզբից քննարկեք, թե ինչպես պետք է կապը պահպանեք միմյանց հետ:

Ծնողների ներգրավման գործընթացը կարող է նորություն լինել ձեր մանկավարժական կոլեկտիվի և ընտանիքների համար, ուստի պետք է նկատի ունենալ, որ նոր հարաբերությունների հաստատումը ժամանակ է պահանջում: Ծնողների ներգրավումը կարող է իրականանալ աստիճանաբար՝ ժամանակի ընթացքում, փոքր հաջողությունների ձեռքբերման միջոցով: Ընտանիքների ներգրավումը խրախուսելու համար

- **Պահպանեք սերտ կապ:**

Համոզվեք, որ մանկավարժական կոլեկտիվի անդամը զրուցում է յուրաքանչյուր երեխայի ծնողների հետ առնվազն շաբաթը մեկ անգամ:

- **Փորձեք ներգրավել ողջ ընտանիքին:**

Երբեմն հայրերը դուրս են մնում երեխաների համար իրականացվող ծրագրերից: Ստեղծագործաբար որոնեք տարբերակներ՝ հայրերին, եղբայրներին, քույրերին և ընտանիքի մյուս անդամներին ներգրավելու համար:

Բացի վերոհիշյալ ձևերից, ընտանիքի հետ համագործակցությունը կարող է իրականացվել նաև այլ պաշտոնական ձևերով, ինչպիսիք են կլոր սեղանների անցկացումը, տարբեր թեմատիկ քննարկումները, ծնողների համար բաց դիտումների կազմակերպումը, խորհրդատվական հանդիպումները, բաց դռների օրերը, ցուցահանդեսները, անհատական զրույցները, ծնողական կրթությունը և այլն:

## ԵՐԵՒԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՄՆԵՐ

Անհատական և խմբային առաջադիմության նորմատիվային թեստերի օգտագործումը սովորաբար սխալ է փոքր տարիքի երեխաների զարգացման գնահատման համար: Այդպիսի գործիքները հատուկ նպատակաուղղված չեն բացահայտելու, թե երեխաները ինչպես են սովորում, ինչպես կարող են իրենց սովորածը կիրառել իրական կյանքում, կամ ինչպես են թեստերի արդյունքները կապվում դաստիարակի դասավանդման նպատակներին և պլանավորմանը: Սակայն, թեև ստանդարտ նորմատիվային թեստերը չեն կիրառվում ցածր տարիքի երեխաների անհատական առաջադիմությունը գնահատելու համար, դա չի նշանակում, որ նրանց առաջընթացը գնահատելու կարիք չկա: Նրանց գնահատումը պետք է կազմի ուսումնառության բնական և շարունակական մասը, իսկ գնահատման միջոցները պետք է բավարարեն երեխայի զարգացմանը համապատասխանող նույն չափորոշիչներին: 5-6 տարեկան երեխայի առաջադիմությունը գնահատելիս, նրա առաջընթացը պետք է հիմնականում համեմատվի իր նախկին մակարդակի հետ, ինչպես նաև քննադատական մտածողության զարգացմանն ուղղված չափորոշիչների հետ: Չպետք է խրախուսվի երեխային համեմատելը այլ երեխաների հետ, հատկապես, երբ այն հիմնվում է նորմատիվային թեստերի արդյունքների վրա: Չափանիշների վրա հիմնված դասակարգումը կարելի է օգտագործել՝ երեխայի անհատական առաջադիմությունը պետական չափորոշիչների հետ համեմատելու համար: Նման համեմատությունը ուղղորդում է երեխայի ընդհանուր առաջադիմությունը և չի նպաստում տարբեր զարգացման մակարդակներում գտնվող երեխաների (կամ նրանց ծնողների) միջև մրցակցությանը: Այդուհանդերձ, եթե մանկավարժները չհասկանան տարբեր տիպի թեստերը և դրանց իմաստը, դա կարող է հանգեցնել չափանիշների վրա հիմնված թեստերի սխալ մեկնաբանությանը և կիրառմանը: Այդ պատճառով վերջիններիս կիրառությանն երեխայի անհատական գնահատման նպատակով պետք է զգուշորեն վերաբերվել:

Նախադպրոցական տարիքի երեխայի անհատական գնահատման ամենաիմաստալից մոտեցումը երեխաների առաջադիմության շարունակական դիտարկումն է մանկավարժների և ծնողների կողմից: Այդ դիտարկումները կատարվում են երեխայի զարգացման բոլոր ոլորտներում՝ սոցիալական, հուզական, ֆիզիկական և իմացական: Առաջադիմության գրանցման գծապատկերները և երեխաների աշխատանքների թղթապանակները ավելի լավ են ապահովում երեխայի առաջընթացի բովանդակալից և բազմակողմանի պատկերը, քան որևէ ստանդատ

թեստի արդյունքներ: Նույն կերպով, երեխաների առաջադիմության վերաբերյալ մանկավարժների նկարագրական հաշվետվությունները շատ ավելի օգտակար են, քան թվանշանները կամ այլ սինվոլներով արտահայտված գնահատականները:

Նման դիտարկումները և գնահատումները հանրագումարային տեսքով նպատակահարմար է կատարել տարվա մեջ երկու անգամ: Նկարագրական հաշվետվությունները ներկայացնում են տեղեկություններ, որոնք կարող են օգտագործվել ինչպես ծնողների կողմից երեխաներին տանը օգնելու, այնպես էլ ուսումնական հաստատությունում ծրագրային խնդիրների լուծման նպատակով: Գնահատումը պետք օգնի բացահայտել, արձանագրել, հաշվառել, վերլուծել կրթադաստիարակչական աշխատանքներում երեխաների ուսուցման, դաստիարակության առաջընթացը, նրանց ձեռքբերումներն ու դժվարությունները, երեխայի զարգացման ոլորտների բովանդակային բաղադրիչների իրականացման մակարդակը, երեխաների կողմից դրանց յուրացման և տիրապետման աստիճանի փուլային գնահատումը:

Ցածր տարիքի երեխաների գնահատումը շարունակական գործընթաց է: Այն որոշում է, թե վաղ ուսումնառության մասին ինչ տեղեկատվություն է անհրաժեշտ: Այնուհետև դասարանում հավաքվում են փաստեր, նկարագրվում, մեկնաբանվում և օգտագործվում դասավանդման արդյունավետ պլանավորման նպատակով: Այդ փաստերը կարող են ներառել երեխաների զրույցների գրանցումներ, երեխաների նկարած և կառուցած աշխատանքներ, ինչպես նաև երեխայի վարքագիծը նկարագրող լուսանկարներ և հպանցիկ գրառումներ:

Փաստագրումը, որը գնահատման գործընթացի նախնական փուլն է, նպատակաուղղված է ուսումնառության վերաբերյալ փաստերի հավաքագրմանը և օբյեկտիվ, առանց մեկնաբանությունների նկարագրությանը: Փոքր տարիքի երեխաների դաստիարակները չպետք է շտապեն գնահատել երեխաներին: Նրանք պետք է սահմանեն ուսումնառական նպատակները, հավաքեն երեխաների խոսքի գրանցումներ և աշխատանքների նմուշներ, և միայն դրանից հետո պետք է նկարագրեն այդ փաստերը և վերանայեն դրանք իրենց կոլեգաների հետ: Ադուհանդերձ, ի լրումն փաստաթղթային ձևակերպումների, այդ փաստերին պետք է կրկին անդրադառնալ՝ դրանք կապելով ուսումնառական նպատակներին և, հենվելով կատարված բացահայտումների վրա, կարող են մշակվել նոր ծրագրային ռազմավարություններ և առաջադրվել նոր հարցեր երեխայի ուսումնառության վերաբերյալ: Զգուշորեն կատարված փաստագրումը և գնահատումը կարող են խորացնել մանկավարժի գիտելիքները երեխայի կանոնավոր զարգացման, կոնկրետ դասարաններում երեխաների կարիքները հասկանալու ուղղությամբ և կիզորացնեն

ուսուցիչների կարողությունները խորհրդածելու և դասողություններ անելու դասավանդման ծրագրի մասին (տես դիտարկման թերթիկ #1, #2, #3):

## **2. Գնահատման հիմնական նպատակը**

*Դիտարկումը, գնահատումը տեղեկատվություն հավաքելու, վերլուծելու և դրա հիման վրա երեխաների կրթության, զարգացման, խնամքի, գործունեության ձևերի իրականացման բովանդակային և կազմակերպչական արդյունքները ընդհանրացնելու, վերահսկելու գործընթաց է:*

Ցածր տարիքի երեխաների գնահատման գլխավոր նպատակն է օգնել դաստիարակներին բարելավել ուսուցման և դաստիարակության գործընթացի որակն ու արդյունավետությունը, պլանավորել համապատասխան աշխատանքներ անհատ երեխայի կամ երեխաների խմբերի համար:

### **Գնահատման գործընթացը պետք է՝**

- հիմնվի երեխայի ուսումնառության վերաբերյալ փաստերի բազմազան ձևերի վրա,
- կատարվի որոշակի ժամանակահատվածում,
- արտացոլի դաստիարակի կողմից երեխաների խմբերի և անհատ երեխաների կարիքների ըմբռնումը,
- ցուցաբերի նրբանկատություն յուրաքանչյուր երեխայի հատուկ կարիքների, մշակութային առանձնահատկության, սովորելու ոճի և զարգացման մակարդակի նկատմամբ:

### **Գնահատումից ստացված տեղեկատվությունը պետք է**

- կապված լինի զարգացման մակարդակին համապատասխանող ուսումնառական նպատակներին,
- խորացնի երեխայի աճի և զարգացման վերաբերյալ ըմբռնումը,
- ապահովի այնպսի տեղեկատվություն, որը ուղղակիորեն կարելի է կիրառել ուսուցման և դաստիարակության պլանավորման մեջ,
- հնարավոր լինի քննարկել երեխայի ընտանիքի և որոշ չափով նաև երեխայի հետ:

## **3. Գնահատման գործընթացի կարևորությունը մանկավարժի մասնագիտական զարգացման տեսանկյունից**

Եթե դաստիարակները օգտագործում են փաստագրումը և գնահատումը, ապա դրանով մեծացնում են իրենց հետևյալ մասնագիտական կարողությունները.



- Ուսուցանում են ավելի արդյունավետորեն՝ օգտագործելով փոխգործուն մեթոդներ, որոնք խթանում են երեխայի զարգացումը:
- Պլանավորում և որոշումներ են կայացնում շատ հեշտությամբ և մեծ արդյունավետությամբ (օրինակ՝ ինչպե՞ս դասավորել դասասենյակը, (խմբասենյակը) ո՞րը պետք է լինի հաջորդ աշխատանքը, ի՞նչ հարցեր տալ, ի՞նչ նյութեր ապահովել, ինչպե՞ս խթանել յուրաքանչյուր երեխայի զարգացումը և այլն):
- Բավարարում են խմբի որոշ երեխաների հատուկ կարիքները և հետաքրքրությունները:
- Կարողանում են ավելի բազմազան ռազմավարություններ կիրառել:
- Որոշում են, թե երեխաները ի՞նչ ձևով են ավելի լավ սովորում:

Գնահատման գործընթացը կարող է օգնել նաև փոքր երեխաների ուսումնառությունը դիտարկել որպես շատ կարևոր բան, երբ նրանք տեսնում են, թե իրենց դաստիարակն որքան ակտիվորեն է փաստագրում իրենց ուսումնառական գործընթացը:

#### **4. Թղթապանակի գնահատում**

Թղթապանակը երեխաների աշխատանքների սիստեմատիկ և մտածված հավաքածուն է, որտեղ առկա են նաև դաստիարակի մեկնաբանությունները այն մասին, թե ինչպես են աշխատանքների այդ օրինակները և խոսքի գրանցումները ծառայում որպես երեխայի առաջխաղացման ապացույց դեպի նախատեսված ուսումնառական նպատակները: Թղթապանակի ընթացքը պետք է շատ հստակորեն արտահայտի ուսումնառական նպատակները, լուսաբանի և փաստագրի երեխաների զարգացումը որոշակի ժամանակահատվածում, ակտիվորեն ներգրավի երեխաներին և արտացոլի յուրաքանչյուր երեխայի անհատական զարգացումը:

#### **Ռազմավարություններ Թղթապանակի գնահատման համար**

- Որոշե՛ք զարգացման այն ոլորտները, որ պետք է գնահատել (օրինակ՝ խոսք և լեզու, վաղ գրաճանաչություն, պատկերավոր մտածողություն, հարաբերությունները հասակակիցների հետ և այլն)
- Որոշե՛ք այն փաստաթղթերը, որոնք լավագույնս կարտահայտեն զարգացումը (օրինակ՝ նկարներ, արվեստի այլ գործեր, լուսանկարներ, թելադրված պատմվածքներ, ընտրված գրքեր, մանկավարժի գրառումներ, ձայնագրություններ, գծապատկերներ, ստուգաթերթեր և այլն):

- Կանոնավոր կերպով ստեղծե՛ք աշխատանքների մոնիթորինգների հավաքածու՝ երեխաների օգնությամբ:
- Մշակե՛ք երեխաների աշխատանքների մոնիթորինգները պահելու հարմար ձև:
- Նկարագրե՛ք փաստաթղթերը գործընկերների հետ, որպեսզի լրացուցիչ կարծիք ստանաք երեխայի զարգացման մասին:
- Կապ ստեղծեք երեխաների աշխատանքների և ուսումնառական նպատակների միջև:
- Որոշե՛ք, թե որո՞նք են բացթողումները զարգացման ոլորտներում: Այնպես արեք, որ աշխատանքի մոնիթորինգները արտահայտեն զարգացման ոլորտների այն ամբողջական ծավալը, որ երեխաները կարող են անել:
- Հավաքե՛ք այնպիսի տվյալներ, որոնք լսողների համար հստակ և հասկանալի կլինեն:

## 5. Դիտարկում

Նախադպրոցական տարիքի երեխաների դիտարկումը չափազանց կարևոր է ճիշտ փաստագրաման և գնահատման համար: Այդուհանդերձ, դիտարկումը այնպիսի հմտություն է, որը պետք է դաստիարակի մոտ զարգացնել և կատարելագործել ժամանակի ընթացքում: Երեխաներին դիտարկելիս մանկավարժները կարող են օգտվել հետևյալ միջոցներից՝ գնահատման թերթիկներ, լուսանկարներ, նկարագրական շարադրանքներ, հպանցիկ գրառումներ, տեսաերիզներ, գրառման մատյաններ, անհատ երեխաների կամ խմբային զրույցներ: Դիտարկումը պետք է լինի նպատակադրված: Որպես խմբասենյակում կատարվող առօրյա աշխատանքների մաս, դիտարկումը հավակնում է լինել գնահատման ամենաարժանահավատ ձևը: Յուրաքանչյուր երեխայի իրական բնութագիրը ստեղծելու համար շատ լավ կլինի սկսել դիտարկել, թե երեխաները ամեն օր ինչ են անում:

### Ի՞նչ դիտարկել

- Վարքագծային օրինաչափություններ, որոնք արտացոլում են որոշակի բաներ սովորելու, հետազոտելու կամ ուսումնասիրելու շարժառիթները:
- Պրոբլեմներ լուծելու ռազմավարությունները:

- Առանձնանալը և մեկուսանալը (օրինակ՝ պարզել երեխայի տեղը խմբում):
- Երեխայի հիմնական հակումները (օրինակ՝ պարզել և թվարկել երեխայի հետաքրքրությունների բնագավառները):

### Ինչպե՞ս դիտարկել

- Դիտարկե՛ք կանոնավոր հաճախականությամբ և որոշակի նպատակով:
- Դիտարկե՛ք երեխաներին օրվա տարբեր ժամերին:
- Դիտարկե՛ք երեխաներին ուսումնական հաստատության տարբեր տեղերում:
- Դիտարկե՛ք երեխային, երբ նա գտնվում է սովորական վիճակում (ոչ անսովոր վարքագիծ դրսևորելիս կամ իր համար վատ օրերին):

### Ծնողները

Երեխայի օբյեկտիվ և արժանահավատ գնահատման հարցում ծնողները պետք է լինեն դաստիարակի գործընկերը: Հետևյալ գործելակերպերը կօգնեն խրախուսել ծնողների մասնակցությունը երեխայի գնահատման գործընթացին.

- Ընգծեք դրականը երեխային գնահատելիս:
- Կատարե գնահատման հարցում/զրույց այն մասին, թե ինչպիսին է երեխայի առօրյա հաղորդակցությունը ծնողների հետ:
- Բացատրե՛ք գնահատման մոտեցումները ծնողական ժողովի կամ սեմինարի ժամանակ:
- Հստակորեն ներկայացրեք ստանդարտացված թեստերի և արժանահավատ գնահատման միջև եղած տարբերությունների մասին:
- Գնահատման մասին նամակ գրեք և ուղարկեք ընտանիքներին:
- Ցույց տվեք, որ հարգում և բարձր եք գնահատում ծնողների դերը երեխայի վարքի և առաջադիմության հարցում:
- Ձեր նկատառումները և մեկնաբանությունները հիմնավորեք այնպիսի փաստաթղթերով, որոնք ցույց կտան, թե երեխան ինչի է հասել որոշակի ժամանակահատվածում:

### Երեխաները

Բոլորը, ներառյալ երեխան, ունեն իրենց տեսակետը երեխայի կարողությունների, նախասիրությունների, առաջադիմության մասին:

Երեխաներին իրենց գնահատման գործընթացում արդյունավետ կերպով ընդգրկելու համար, կարելի է անել հետևյալը.

- Դիտարկե՛ք և փաստագրե՛ք այն, ինչ որ երեխան ասում է և անում:  
Շատ հաճախ այսփսի պատահական արտահայտություններ, ինչպիսիք են՝ «Իմ հասակը անցյալ ծննդյանս օրը այնքան էր, իսկ հիմա՝ այսքան» վկայում են, որ երեխաները կարողանում են գնահատել, թե իրենք ինչ կարող են անել և ինչպես են փոխվում:
- Հարցրե՛ք երեխաներին իրենց մասին: Նրանք Ձեզ կպատմեն, թե իրենք ի՞նչ են անում և ի՞նչ չեն սիրում անել: Որոշ երեխաներ կարող են նախընտրել դա անել մի առանձնացված տեղում, որտեղ իրենք կարող են ամբողջովին լինել Ձեր ուշադրության կենտրոնում, իսկ այլ երեխաներ կարող են պատասխանել և մասնակցել ոչ պաշտոնական քննարկումներին մյուսների ներկայությամբ:
- Խնդրե՛ք երեխաներին գնահատել իրենց աշխատանքները: Խնդրե՛ք օգնել Ձեզ որոշելու, թե ո՞ր աշխատանքը պետք է ներառվի թղթապանակում: Հարգե՛ք նրանց ընտրությունը և պատասխանները իրենց աշխատանքների մասին:
- Թույլ տվե՛ք երեխաներին ժամանակ առ ժամանակ լուսանկարելու իրենց ամենասիրած աշխատանքը: Նրանք կարող են պատի վրա պաստառ պատրաստել՝ ցուցադրելու համար թղթապանակի համար իրենց կողմից հատուկ ընտրված նկարները:

**Դաստիարակների դիտարկումների հարցաթերթիկ**

Երեխայի անունը, ազգանունը \_\_\_\_\_

Ամսաթիվը \_\_\_\_\_ ժամը \_\_\_\_\_

Դիտարկողի անունը, ազգանունը \_\_\_\_\_

Նշե՛ք այն գործողությունները, որոնք երեխան կատարում է: Գծիկ դրե՛ք այն գործողությունների դիմաց, որոնց կատարումը չի նկատվում: Համապատասխան կետի դիմաց շարադրե՛ք այդ կապակցությամբ Ձեր ունեցած նկատառումներն ու որակական տվյալները:

Զարգացումային ոլորտներ

***Խոսքի և լեզվական հմտություններ***

Խոսում է երեխաների հետ \_\_\_\_\_

Խոսում է մեծահասակների հետ \_\_\_\_\_

Նրա խոսքը հասկանալի է \_\_\_\_\_

Գործածում է ավարտուն նախադասություններ \_\_\_\_\_

Խաղի ժամանակ արտահայտում է իր մտքերը \_\_\_\_\_

Հանդես է գալիս որպես զրույցի նախաձեռնող \_\_\_\_\_

Զգացմունքներն արտահայտում է բառերի միջոցով \_\_\_\_\_

**Ընկալման հմտություններ (տեսողական և լսողական)**

Նկատում է նոր նյութերը կամ խաղալիքները \_\_\_\_\_

ճանաչում է սեփական անվան գրությունը \_\_\_\_\_

Տարբերում է տարածված ձայների տեսակները \_\_\_\_\_

Լսում և հասկանում է ցուցումները \_\_\_\_\_

Լսում և մեկնաբանում է պատմությունները \_\_\_\_\_

Մասնակցում է երաժշտության հետ կապված խաղերին \_\_\_\_\_

***Խոշոր շարժողական հմտություններ***

Երկու ոտքով ցատկում է առարկայի վրայով \_\_\_\_\_

Փայտածողի վրա պահպանում է հավասարակշռությունը \_\_\_\_\_

Աստիճաններով հեշտությամբ է վեր ու վար անում \_\_\_\_\_

Գնդակ է նետում \_\_\_\_\_

Նետումների ժամանակ մշտապես նույն ձեռքն է օգտագործում \_\_\_\_\_

Ոտքով հարվածում է գնդակին \_\_\_\_\_

